ISSN 1829-1155

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական
խորհուրդ՝
Գագիկ Հարությունյան
Վահե Օգեանյան
Վլադիմիր Տոմիանովիչյան
Վալերի Դոդոյան
Աստղիկ Նակորյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Թադևոսյան 10
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳԻՐ

4(70)
2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ 5

II. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1091-1105)

* ՍԴՈ-1091. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-ԻՆ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 202.400 ՄԻԼԻՈՆ ՀԱՏՈՒԿ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓՈՎ ՎԱՐԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 14

* ՍԴՈ-1092. «ԾԻԾԵՌՆԱԿ-8» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 118.7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 91-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 75-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 17

* ՍԴՈ-1093. 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 27

* ՍԴՈ-1094.2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 30

* ՍԴՈ-1095. 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 33

* ՍԴՈ-1096. 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ԲԱՂԴԱԴՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 36

* ՍԴՈ-1097.2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԱԲՈՒ ԴԱԲԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ԴՈՒՐՍ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 40

* ՍԴՈ-1098. 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-ԻՆ ԿՆՔՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 47

* ՍԴՈ-1099. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ԱՐԱՄ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 55

* ՍԴՈ-1100. 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 68

* ՍԴՈ-1101. 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 76

* ՍԴՈ-1102. «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ», «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ», «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ԵՎ «ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ-ՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 81

* ՍԴՈ-1103. 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԱՇԳԱԲԱՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՌՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՈՒՐՋ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 97

* ՍԴՈ-1104. 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԱՇԳԱԲԱՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ի ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ 103

* ՍԴՈ-1105. ՔԱՂԱՔԱՑԻ ՐԱՖՖԻ Կ. ՌԻՉԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ 109

III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

* ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ 117

* ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆ ԱՎԱՐՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ 119

* ԴԻՆ ՇՊԻԼՄԱՆԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 121

* ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ 122

* ԿԱՐԵՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 131

* ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 133

* ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 134

* ՀՀ-ՈՒՄ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ՊԱՐՈՆ ԷԴՍՈՆ ՄԱՐԻՆՅՈ ԴՈՒԱՐՏԵ ՄՈՆՏԵՅՐՈՆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 135

* ԱՐԱ ՍԱՀԱԿՅԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑ ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԻՆ 136

* ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 137

* ՉԺՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 138

* ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆՑ-75 140

* ՀՅՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ 142

* ՀԻՇԱՏԱԿԻ ԽՆԿԱՐԿՈՒՄ 143

* ՀՀ ԵՎ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՄԻՆԱՐ 143

* ՀԱՄԱՏԵՂ ՍԵՄԻՆԱՐՆ ԱՎԱՐՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ 146

* ԱՎՍՏՐԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԵՐՀԱՐԹ ՀՈԼՑԻՆԳԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ 147

Արևիկ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ
Իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Սահմանադրության կայունության, դրա զարգացման, գերակայության ապահովման, ինչպես նաև սահմանադրականության ամրապնդման երաշխավորումը մեծապես պայմանավորված է նաև սահմանադրական դատարանի որոշումների կատարման ապահովման արդյունավետ համակարգի առկայությամբ: Իր հերթին, սահմանադրական դատարանի որոշումների կատարման ապահովումը պահանջում է համապատասխան երաշխիքների առկայություն:

Սահմանադրական դատարանի որոշումների կատարման ապահովման երաշխիքները, նախևառաջ, պետք է ունենան սահմանադրաիրավական կոնկրետ հիմքեր, կանոնակարգումներ, և որ ոչ պակաս կարևոր է՝ դրանք պետք է կենսագործվեն: Կարևոր նշանակություն ունի նաև պարբերաբար վերլուծությունների իրականացումը՝ բացահայտելու սահմանադրական դատարանի որոշումների կատարման ապահովման առկա վիճակը, հիմնախնդիրները, ինչպես նաև մշակելու վերջիններիս լուծման առաջարկները, նախանշելու զարգացման միտումները:

Անդրադառնանք, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով ՀՀ սահմանադրական դատարանի (այսուհետ՝ ՍԴ) որոշումներին և դրանց կատարման ապա-

հովման սահմանադրաիրավական մի շարք լուծումներին, երաշխիքներին:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ՍԴ-ն օրենքով սահմանված կարգով քննության առնելով օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցերը, ընդունում է որոշումներ: ՍԴ որոշումները, ներառյալ հիշյալ հարցերով որոշումները, և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ ՍԴ-ի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ ՀՀ ամբողջ տարածքում: Ընդ որում, ՍԴ որոշումներն ու եզրակացությունները հրապարակվում են նիստում և համաձայն ՍԴ-ի՝ 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ ենթակա են կատարման անհապաղ կամ ՍԴ-ի կողմից նախանշված ժամկետներում: Վերջինս ունի սահմանադրական կոնկրետ հիմք, այն բխում է ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի ամրագրումից, որին դեռ ստորև կանդրադառնանք:

Փաստենք, որ ՍԴ-ի կայացրած 1126 որոշումներից 170-ը վերաբերում են ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերին[1]*: ՍԴ-ն քննության է առել 65 իրավական ակտերի, այդ թվում՝ 61 օրենքների, ՀՀ Ազգային ժողովի 1 որոշման և ՀՀ կառավարության 3 որոշումների սահմանադրականության հարցեր*[2]*: ՍԴ-ում քննության առարկա չեն դարձել ՀՀ Նախագահի հրամանագրերի, վարչապետի և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների սահմանադրականության հարցերը:*

Համաձայն Օրենքի՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով ՍԴ-ն կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը. ա) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը

1 Բոլոր վիճակագրական տվյալները ներկայացված են 2013 թվականի նոյեմբերի 19-ը ներառյալ:

2 Տե՛ս նաև՝ ՍԴ պաշտոնական համացանցի էջում (www.concourt.am) հրապարակված «ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների ուսումնասիրման ուղեցույցը»:

Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, բ) վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, գ) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին: Օրենքով սահմանված կարգով և հիմքերով ՍԴ-ն կարող է ընդունել նաև գործի վարույթը կարճելու որոշում:

Փաստենք, որ ՍԴ-ն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հարցերով քննության է առել վիճարկվող 3 ակտերի՝ ամբողջությամբ և վիճարկվող ակտերի 363 դրույթների (ներառյալ՝ կոնկրետ գործերով վեճի առարկա դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված դրույթները) սահմանադրականության հարցեր, որոնց արդյունքում՝

- *վիճարկվող ակտերի 123 դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող.*
- *վիճարկվող 1 ակտ՝ ամբողջությամբ և վիճարկվող ակտերի 69 դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ ՍԴ որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական կոնկրետ բովանդակությամբ.*
- *վիճարկվող 2 ակտեր՝ ամբողջությամբ և վիճարկվող ակտերի 134 դրույթներ ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր.*
- *վիճարկվող ակտերի 57 դրույթների մասով կայացրել է գործի վարույթը կարճելու որոշումներ:*

Օրենքը, որպես ընդհանուր նորմ, սահմանում է, որ ՍԴ-ն որոշումներ և եզրակացություններ ընդունում է միայն դիմումում նշված առարկայի վերաբերյալ: Հարկ է նշել նաև, որ Օրենքը որպես առանձնահատկություն սահմանում է, որ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված որևէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս ՍԴ-ն պարզում է նաև այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Հավաստիանալով վիճարկվող դրույթների հետ փոխկապակցված տվյալ նորմատիվ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու մեջ՝ ՍԴ-ն կարող է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել նաև այդ դրույթները: Մեր կարծիքով,

հիշյալ առանձնահատկությունը ՍԴ-ի որոշումների պատշաճ իրացումն ապահովելուն ուղղված գործուն երաշխիք է և հնարավորություն է տալիս ՍԴ-ին, սահմանադրական առկա լիազորությունների շրջանակում, վիճարկվող ակտի վերաբերյալ կայացնել համակողմանի և ամբողջական որոշում:

Փաստենք, որ ՍԴ-ն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված և քննության առնված վիճարկվող ակտերի 49 դրույթներ ճանաչել է կոնկրետ գործերով վեճի առարկա դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված և կայացրել է համապատասխան որոշումներ:

Ինչպես արդեն վերը նշվեց, ՍԴ-ն կարող է ընդունել նաև վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու որոշում[3]: Օրենքով կանոնակարգվում է, որ այդ դեպքում վիճարկվող ակտն (ամբողջությամբ կամ մասամբ) իրավաբանական ուժը կորցնում է ՍԴ որոշման ուժի մեջ մտնելու պահից[4], բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Վերջին դեպքերը հետևյալն են.

1) Օրենքը ՍԴ-ին իրավասություն է վերապահում վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումը տարածել նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետևանքներ:

Փաստենք, որ ՍԴ-ն իր վերոնշյալ իրավասությունն իրացրել է ՍԴՈ-649, 723, 731 որոշումներով:

Օրենքը կանոնակարգում է նաև, որ ՍԴ-ի որոշմամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմատիվ ակտի, ինչպես նաև այդ ակտի կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի վրա

3 Ի դեպ, համարվում է նաև, որ նման որոշմամբ իրականացվում են իրավամերժող կամ նեգատիվ իրավաստեղծագործական լիազորություն՝ որպես հակակշիռ իշխանության այլ մարմինների անմիջական իրավաստեղծագործությանը:

4 Համաձայն Օրենքի՝ այդ ակտերի վրա հիմնված ՍԴ որոշման ընդունմանը նախորդող ժամանակահատվածում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերը վերանայման ենթակա չեն, իսկ չկատարված վարչական և դատական ակտերի կատարումը ՍԴ որոշումը հրապարակելուց հետո անհապաղ դադարեցվում է իրավասու վարչական մարմնի կամ դատարանի որոշմամբ: Բացի այդ, անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ:

հիմնված՝ ՍԴ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում ընդունված և կատարված վարչական կամ դատական ակտերը ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով.

2) քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այդ դրույթն իրավաբանական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից: Ընդ որում, Օրենքի համաձայն, այդ դրույթի կիրառման վերաբերյալ ՍԴ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական և վարչական ակտերը օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման:

Ի հավելումն վերը հիշատակվածի, նշենք նաև, որ 2011 թվականի օրենսդրական փոփոխություններով ընդլայնվել են ՍԴ որոշումների, որպես նոր հանգամանքի, հիման վրա դատական ակտերի վերանայման հիմքերը: Մասնավորապես, հիշյալ փոփոխությունների արդյունքում Օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասերը սահմանում են, որ անհատական դիմումների քննության գործերով դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ ՍԴ-ն, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով: Հիշյալ կանոնակարգումը տարածվում է նաև այն անձանց վրա, ովքեր ՍԴ-ի տվյալ որոշումը հրապարակելու օրվա դրությամբ դեռևս պահպանել էին նույն հարցով ՍԴ դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել ՍԴ:

Փաստենք, որ ՍԴ-ն իր վերոհիշյալ իրավասությունն իրացրել է ՍԴՈ-1010, 1038, 1063, 1115, 1120 որոշումներով և կայացրել կոնկրետ գործով վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով սահմանված կարգով վերանայելու որոշում:

Հարկ ենք համարում ընդգծել, որ ՍԴ որոշման, որպես նոր հանգամանքի, հիման վրա դատական ակտերի վերանայումը, հատկա-

պես՝ ՍԴ-ի սահմանադրական առկա լիազորությունների շրջանակներում, համարվում է ՍԴ որոշումների կատարման ապահովման առանցքային երաշխիք, ինչի իրացումը, սակայն, հայաստանյան իրականությունում, դեռևս արմատավորման խնդիր ունի: Ընդգծենք նաև, որ այս հիմնախնդրին ՍԴ-ն բազմիցս անդրադարձ կատարել է իր որոշումներում[5] և տարեկան հաղորդումներում: Հիշյալ հիմնախնդիրը բազմակողմանիորեն վերլուծվել է ՍԴ նախագահ Գ. Հարությունյանի կողմից՝ գիտագործնական զեկույցներում և հրապարակումներում[6]:

Անդրադառնանք ՍԴ որոշումների կատարման ապահովման սահմանադրահիրավական մեկ այլ կարևորագույն երաշխիքի ևս: Օրենքը, ելնելով ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի ամրագրումից, ՍԴ-ին վերապահել է հետևյալ իրավասությունը. եթե վերջինս գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի՝ ՍԴ որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության և պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա ՍԴ-ն կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը: Այդ դեպքում մինչև ակտի իրավաբանական ուժը կորցնելն այն համարվում է Սահմանադրությանը համապատասխանող: Հատկանշական է, որ օրենսդիրը, ՍԴ-ի հիշյալ իրավասության իրացման համար, նախատեսել է կոնկրետ սահմաններ. նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր և անհրաժեշտ է ձեռնարկել հանրության ու պետության համար ծանր հետևանքները կանխելուն ուղղված միջոցառումները, և հետաձգման մասին որոշումը պետք է ընդունվի այն հաշվարկով, որպեսզի դրանով իրապես կանխվեն անխուսափելի և ծանր հետևանքները հանրության ու պետության համար,

5 Տե՛ս՝ մասնավորապես, ՍԴՈ-701, 751, 758, 767, 833, 866, 871, 935, 943, 984, 1099, 1114 որոշումները:

6 Տե՛ս՝ Գ. Հարությունյանի, մասնավորապես, «Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները որպես նախադեպային իրավունքի աղբյուր» (2011թ.) և «Սահմանադրական դատարանի որոշումների կատարման երաշխիքները» (2012թ.) զեկույցները (www.concourt.am) :

և ավելի էական վնաս չպատճառվի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին:

Փաստենք, որ ՍԴ-ն իր վերոհիշյալ իրավասությունն իրացրել է ՍԴՈ-630, 753, 765, 780, 782, 873, 929, 930, 943, 984, 1121 որոշումներով, որոնք նախատեսել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված 27 իրավանորմերի ուժը կորցնելու կոնկրետ վերջնական ժամկետներ:

Բնականաբար, ՍԴ որոշումների կատարումն ապահովող օրենսդրական երաշխիք է համարվում նաև այն, որ Օրենքն ամրագրում է ՍԴ որոշումը չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ կատարմանն արգելք հանդիսանալու՝ օրենքով սահմանված պատասխանատվության առաջացման նորմ:

Չենք կարող փաստել վերոհիշյալ պատասխանատվության առաջացման որևէ դեպք:

Պատասխանատվություն սահմանող կոնկրետ և լիարժեք նորմի բացակայությունը, ցավոք, արգելափակում է օրենսդրական երաշխիքի իրացումը՝ այն վերածելով ընդամենը հռչակագրային նորմի:

Ի տարբերություն վերոնշյալի, իր կենսունակությունն է ապացուցել Օրենքի այն կանոնակարգումը, համաձայն որի՝ ՍԴ-ն յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հաղորդում է հրապարակում իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ: Հիշյալ հաղորդումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ի սկզբանե էլ չեն եղել զուտ տեղեկատվական, վիճակագրական ամփոփումներ: Այդ հաղորդումներով ՍԴ-ն իրականացնում է նաև վերլուծություն՝ շեշտադրելով ոչ միայն տվյալ տարվա ընթացքում Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովման հիմնախնդիրները, այլև ներկայացնելով դրանց լուծման առաջարկություններ՝ ուղղված, նախևառաջ, իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց:

Ինչպես և փորձեցինք ամփոփ ներկայացնել՝ ՀՀ Սահմանադրությունը և Օրենքն ամրագրում են ՍԴ որոշումների կատարման ապահովման երաշխիքներ, ինչպես և փորձեցինք փաստել՝ ՍԴ-ն դրանք կենսագործում է իր սահմանադրական առկա լիազորությունների շրջանակներում: Արդյո՞ք լիարժեք և ամբողջական են հիշյալ երաշխիքները: Մեր պատասխանը հետևյալն է. դեռ անելիքներ շատ կան, որոնք պահանջում են և՛ սահմանադրական, և՛ դրանից բխող օրենսդրական նոր լուծումներ: Մեր կարծիքով, որպեսզի ՍԴ-ի որոշումներով իրապես

երաշխավորվի ՀՀ Սահմանադրության գերակայությունը, դրանով իսկ ապահովվի իրավունքի գերակայությունը և ամրապնդվի սահմանադրականությունը, անհրաժեշտ է իրացնել միջազգային իրավական պրակտիկայով և գիտագործնական առումով հիմնավորված, մասնավորապես, հետևյալ մոտեցումները.

- մշակել և ներդնել լիարժեք ու ամբողջական այնպիսի համակարգ, որով ՍԴ որոշումները հանդիսանան օբյեկտիվ իրավունքի պաշտպանության երաշխիք յուրաքանչյուրի համար, պաշտպանեն կոնկրետ անձանց սուբյեկտիվ իրավունքը և դառնան իրավունքի աղբյուր.
- մշակել և ներդնել լիարժեք ու ամբողջական այնպիսի համակարգ, որը հնարավորություն կընձեռի ապահովել ՍԴ իրավական դիրքորոշումների նախադեպային իրավական նշանակության ընկալումը և իրացումը, թե՛ որպես ՍԴ որոշման անբաժանելի մաս և թե՛ որպես իրավունքի աղբյուր՝ ուղղված Սահմանադրության գերակայության ապահովմանը, սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը.
- մշակել և ներդնել անհատական սահմանադրական գանգատի լիարժեք ու ամբողջական համակարգ, որը հնարավություն կտա մարդու իրավունքներին վերաբերող գանգատները քննել և լուծել, նախևառաջ, ներպետական սահմանադրական արդարադատության շրջանակներում՝ դրանով իսկ խուսափելով նաև «իրավախախտ պետության» որակումից: Անհատական սահմանադրական գանգատի լիարժեք և ամբողջական համակարգը, իր հերթին, պահանջում է ՍԴ համապատասխան որոշումների արդյունքում դատական ակտերի վերանայման արդյունավետ համակարգի առկայություն.
- մշակել և ներդնել լիարժեք ու ամբողջական այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա սահմանադրական արդարադատության շրջանակներում լուծել իշխանության մարմինների սահմանադրական լիազորությունների հարցերով վեճեր.
- մշակել և ներդնել լիարժեք ու ամբողջական այնպիսի համակարգ, որով կապահովի ՍԴ-ի և դատարանների գործառնական արդյունավետ փոխհարաբերությունները, մասնավորապես, բացառելով դատական հայեցողության, իրավասության սահմանների խախտումը.

- մշակել և ներդնել այնպիսի լիարժեք ու ամբողջական համակարգ, որի պայմաններում, նախևառաջ, պետական մարմինները ոչ թե «փնտրեն» Սահմանադրության գերակայությունն ապահովող պատասխանատուին, այլ իրացնեն իրենց սահմանադրաիրավական կոնկրետ լիազորությունները, համակարգված և փոխլրացնող համագործակցությամբ ապահովեն Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը:

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-ԻՆ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 202.400 ՄԻԼԻՈՆ ՀԱՏՈՒԿ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓՈՎ ՎԱՐԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎՈՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **30 ապրիլի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ 2012 թվականի հուլիսի 10-ին եւ 2012 թվականի օգոստոսի 28-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ 202.400 միլիոն հատուկ փոխառության իրավունքին համարժեք գումարի չափով վարկ տրամադրելու մասին» նամակների փոխանակման ձեւով կնքված համաձայնագրի փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի ապրիլի 16-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագրի փոփոխությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ 202.400 միլիոն հատուկ փոխառության իրավունքին համարժեք գումարի չափով վարկ տրամադրելու մասին» նամակների փոխանակման ձեւով կնքված համաձայնագրի փոփոխությունը (Համաձայնագրի փոփոխություն) ստորագրվել է 2012 թվականի հուլիսի 10-ին եւ 2012 թվականի օգոստոսի 28-ին:

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ 202.400 միլիոն հատուկ փոխառության իրավունքին համարժեք գումարի չափով վարկ տրամադրելու մասին նամակների փոխանակման ձեւով կնքված համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2009 թվականի հունիսի 29-ին եւ 2009 թվականի հունիսի 30-ին ու Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2009 թվականի հուլիսի 10-ին:

2. Համաձայնագրի փոփոխությունով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) Արժույթի միջազգային հիմնադրամից ստանալ 27.0 մլն հատուկ

փոխառության իրավունքին համարժեք գումարի չափով վարկ՝ ի լրումն Համաձայնագրով ամրագրված գումարի.

բ) վարկի մարումն իրականացնել սահմանված կարգով եւ ժամկետներում:

Համաձայնագրի փոփոխությունն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վավերացման ներքին ընթացակարգերը կատարելու մասին ծանուցումն Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ստանալու օրը:

3. Համաձայնագրի փոփոխությունով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին եւ նպատակաուղղված են բյուջետային աջակցությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ 2012 թվականի հուլիսի 10-ին եւ 2012 թվականի օգոստոսի 28-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ 202.400 միլիոն հատուկ փոխառության իրավունքին համարժեք գումարի չափով վարկ տրամադրելու մասին» նամակների փոխանակման ձեւով կնքված համաձայնագրի փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

30 ապրիլի 2013 թվականի
ՍԴՈ-1091

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԾԻԾԵՌՆԱԿ-8» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 118.7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 91-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 75-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **7 մայիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ծիծեռնակ-8» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ծիծեռնակ-8» ՍՊԸ-ի՝ 05.10.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով վեճի առարկա իրավական ակտերը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Քննության առարկա գործի վարույթը մասամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ ենթակետերի, 1-ին մասի երկրորդ պարբերության, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերի մասով ենթակա է կարճման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին կետի եւ 69-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

սույն գործով դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից բխում է, որ դատարաններն իրավական ակտերի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթներից **կիրառել են միայն** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի եւ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի դրույթները: Ինչ վերաբերում է «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներին, ապա դրանք հանդիսանում են ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշման իրավական հիմքերը. ՀՀ կառավարության նշված որոշումը հողում է կատարում «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներին՝ անդրադառնալով «Ղեկավարվելով «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդված-

ներով» բառակապակցությանը: Իրականում դատարանները կիրառել են ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշման դրույթները՝ մեջբերելով այդ որոշման որոշ հատվածներ, ներառյալ՝ «Ղեկավարվելով «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներով» բառակապակցությունը, ինչն էլ դիմողի մոտ առաջացրել է թյուր կարծիք, որ դատարանները կիրառել են «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածները: **Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարանների կողմից որեւէ իրավական ակտի կիրառումը դեռեւս չի նշանակում տվյալ իրավական ակտում նշված եւ այդ իրավական ակտի ընդունման համար իրավաբանական հիմք հանդիսացող այլ իրավական ակտերի համապատասխան դրույթների կիրառում:** Հետեւաբար, Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի ուժով տվյալ դեպքում դիմողը ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածում, «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածներում, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ ենթակետերում, 1-ին մասի երկրորդ պարբերությունում, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերում ամրագրված դրույթների սահմանադրականությունը որոշելու հարցով **իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան:**

Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասին, ապա նշված մասը բաղկացած է երկու նախադասություններից, **որոնցից դիմողն իրականում վիճարկում է միայն երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը**, այն է՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված»: Ընդ որում, դիմողի կողմից բարձրացված հարցի, այն է՝ օրենսդրությամբ Վճռաբեկ դատարանի դատական ակտի պատճառաբանվածության չափանիշներն ամրագրելու անհրաժեշտության վերաբերյալ **առկա է սահմանադրական դատարանի որոշում**: Մասնավորապես, նման հարց բարձրացվել էր դեռեւս 2009 թվականին «Գեղեցիկ քնար» արտադրական կոոպերատիվի դիմումով, ինչի առնչությամբ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի հուլիսի 21-ի ՍԴՈ-817 որոշմամբ, հողում կատարելով իր ՍԴՈ-765 որոշմանը, որոշել է կարճել գործի վարույթը՝ դիմողին տրամադրելով սահմանադրական դատարանի 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 որոշումը:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը ֆիզիկական անձին թույլ է տալիս դիմելու սահմանադրական դատարան կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ երբ տվյալ ֆիզիկական անձը վիճարկում է այդ ակտով **իր նկատմամբ կիրառված** օրենքի դրույթի սահմանադրականությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Սույն հոդվածում նշված գործերով դիմում ... կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը»:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Սահմանադրական դատարանը գործի քննությունը ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում՝ ... եթե դիմողն իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան»:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի՝ «Սահմանադրական դատարանը գործի քննությունը ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում՝ ... եթե սույն օրենքի 68-75-րդ եւ 77-րդ հոդվածներում նշված գործերով ներկայացված որեւէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով քննության առարկա կարող է հանդիսանալ միայն ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի սահմանադրականության հարցը:

2. ՀՀ հողային օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2001թ. մայիսի 2-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2001թ. հունիսի 4-ին եւ ուժի մեջ է մտել 2001թ. հունիսի 15-ից:

ՀՀ հողային օրենսգրքի՝ «Պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողերի անհատույց (մշտական) օգտագործման տրամադրման կարգը» վերտառությամբ 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը սահմանում է. «Պետության սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման են տրամադրվում՝ ... պետական կամ համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին»:

3. Գործի համառոտ դատավարական նախապատմությունը հետեւյալն է. Երեւանի քաղաքապետի 04.10.2000թ. թիվ 1320 որոշմամբ դիմողին Երեւան քաղաքի Ծիծեռնակաբերդի պուրակում գտնվող սրճարան-տաղավարի վերակառուցման, բարեկարգման եւ կանաչապատման նպատակով, վարձակալության իրավունքով 50 տարի ժամկետով հատկացվել է 6646 քմ մակերեսով հողամաս եւ **09.11.2001թ. կատարվել է դիմողի վարձակալության իրավունքի պետական գրանցում:**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2004թ. հուլիսի 15-ի թիվ 1043-Ն որոշման 3-րդ կետի՝ Երեւանի քաղաքապետը որոշել է Ծիծեռնակաբերդի զբոսայգու սահմաններում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մարզամշակութային կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքերի եւ շինությունների պահպանման եւ սպասարկման համար անհրաժեշտ 19.54 հա մակերեսով հողամասն անհատույց (մշտական) օգտագործման թողնել նշված ՊՈԱԿ-ին՝ վերջինիս վերապահելով Հայաստանի Հանրապետության անունից որպես վարձատու հանդես գալու իրավասություն վերը նշված 19.54 հա մակերեսով հողամասի սահմաններում գտնվող այն հողամասերի առնչությամբ, որոնք համապատասխան վարձակալական պայմանագրերի հիման վրա օգտագործման իրավունքով հատկացված են այլ անձանց: Դրա արդյունքում՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մարզամշակութային կենտրոն» ՊՈԱԿ-ի եւ դիմողի միջեւ 2005թ. հուլիսի 19-ին մեկ տարի ժամկետով կնքվում է դիմողի կողմից արդեն իսկ օգտագործվող՝ վերը նշված 6646 քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր, որի հիման վրա կատարվում է դիմողի վարձակալության իրավունքի պետական գրանցում:

Այնուհետեւ ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշման 9-րդ կետի ուժով Երեւանի քաղաքապետն իր՝ 2005թ. նոյեմբե-

րի 2-ի թիվ 2342-Ա որոշմամբ «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մարզամշակութային կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքերի եւ շինությունների պահպանման եւ սպասարկման համար անհրաժեշտ 19.54 հա մակերեսով հողամասը, ներառյալ՝ դիմողի կողմից վարձակալական հիմունքներով օգտագործվող հողամասը, 50 տարով վարձակալական հիմքներով տրամադրել է «ԲԱՄՕ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրվող «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ին՝ գնման նախապատվության իրավունքով:

Գտնելով, որ ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշմամբ խախտվել է իր՝ գնման նախապատվության իրավունքը, դիմողը ՀՀ կառավարության վերը նշված որոշումը մասնակի անվավեր ճանաչելու հայցապահանջով դիմել է ՀՀ վարչական դատարան, որն իր՝ 13.09.2011թ. ՎԴ/0676/05/08 որոշմամբ մերժել է դիմողի հայցը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 26.01.2012թ. որոշմամբ, վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, մերժել է դիմողի վերաքննիչ բողոքը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 21.03.2012թ. որոշմամբ վերադարձրել է դիմողի վճռաբեկ բողոքը:

4. Դիմողը գտնում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով որ ՀՀ կառավարությանն իրավունք է տալիս պետական սեփականություն հանդիսացող, սակայն այլ անձի անշարժ գույքով ծանրաբեռնված ու այլ անձի օգտագործման ներքո գտնվող հողամասը վարձակալության եւ գնման նախապատվության իրավունքով տրամադրել նաեւ մեկ այլ անձի, հակասում է իրավական որոշակիության սկզբունքին եւ դրա արդյունքում՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 8 եւ 31-րդ հոդվածներին:

Ըստ դիմողի՝ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասը, «որպես այդպիսին օրենք չէ, քանի որ այդ դրույթների բովանդակության մեջ նման իրավունք ուղղակիորեն սահմանված չէ, նման բան գրված չէ եւ իրավունքի սուբյեկտների համար հնարավոր չէ կանխատեսել օրենքի նշված դրույթներով կառավարության նման իրավունքը, ինչը իրավահարաբերության մասնակցի համար անհրաժեշտ է կանխատեսելի իրավական դաշտում գործելու եւ իր իրավունքների պաշտպանության համար»:

5. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին: Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանող կողմը, մասնավորապես, արձանագրում է, որ պետական սեփականություն հանդիսացող գույքը պետական կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով հանձնելու հետ կապված իրավահարաբերությունները, ի թիվս այլ իրավական ակտերի, կարգավորվում են նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքին՝ պատասխանող կողմն արձանագրում է, որ պետությունն իրավունք ունի իր կողմից հիմնադրվող կազմակերպությանը գույքը հանձնել ինչպես սեփականության, այնպես էլ անհատույց օգտագործման իրավունքով՝ երաշխավորելով տվյալ գույքի նկատմամբ այլ անձանց, մասնավորապես՝ վարձակալների իրավունքները: Այս առումով, ըստ պատասխանող կողմի՝ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է երաշխիքներ անձանց իրավունքների պաշտպանության համար: Մասնավորապես, պատասխանող կողմն արձանագրում է, որ ըստ «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ հիմնադրի կողմից գույքը պետական կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար, իսկ ըստ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ պետության սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական օգտագործման) տրամադրելիս պահանջվում է հողօգտագործողի գրավոր համաձայնությունը: Անհամաձայնության դեպքում հողօգտագործողի իրավունքները տվյալ հողամասի նկատմամբ կարող են դադարել ՀՀ հողային օրենսգրքով սահմանված կարգով: Այդ կապակցությամբ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ հողային օրենսգրքի 1-ին հոդվածը հղում է կատարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, պատասխանող կողմը, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրերին վերաբերող մի շարք դրույթներին, գտնում է նաեւ, որ պայմանագրի դադարումը չի կարող կամայական բնույթ կրել, այլ պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով:

Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված՝ հողամասի վարձակալի՝ հողամասի գնման նախապատվության իրավունքին, պատասխանող կողմն արձանագրում է, որ նշված իրավունքն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ հողային օրենսգրքում:

6. Հաշվի առնելով դիմողի դիրքորոշումները՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում բացահայտել պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օգտագործման տրամադրելու վերաբերյալ առկա իրավակարգավորումների բնույթը՝ խնդրո առարկա հարցը դիտարկելով սեփականության իրավունքի սահմանադրահիրավական բովանդակության համատեքստում:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է սեփականության իրավունքի բովանդակային ծավալում ներառվող երեք իրավազորությունները՝ տնօրինում, տիրապետում, օգտագործում, որոնք սեփականատերը, ըստ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի, իրականացնում է սեփական հայեցողությամբ: Ընդ որում, տնօրինման, տիրապետման, օգտագործման իրավազորությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Սեփականության իրավունքի հասկացությունը եւ բովանդակությունը» վերտառությամբ 163-րդ հոդվածում: Նշված հոդվածի համաձայն՝

«1. Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով եւ այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաեւ դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի եւ այլ ձեւերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

2. Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող եւ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման եւ տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

3. Սեփականատերը կարող է իր գույքը հանձնել այլ անձի հավատարմագրային կառավարման: Գույքը հավատարմագրային կառավար-

ման հանձնելը չի հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցման: Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է գույքը կառավարել ի շահ սեփականատիրոջ կամ նրա կողմից նշված երրորդ անձի»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի դրույթների վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից իր՝ 2004թ. հուլիսի 15-ի թիվ 1043-Ն որոշմամբ պետության սեփականությունը հանդիսացող հողամասը «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մարզամշակութային կենտրոն» ՊՈԱԿ-ին անհատույց (մշտական) օգտագործման թողնելը, ինչպես նաեւ իր՝ 2005թ. օգոստոսի 25-ի թիվ 1321-Ն որոշմամբ նույն հողամասը վարձակալական հիմունքներով «ԲԱՄՕ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրվող «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՓԲԸ-ին գնման նախապատվության իրավունքով տրամադրելը, հետեւաբար նաեւ՝ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի դրույթը գտնվում են ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ իր սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու իրավազորության բովանդակային ծավալում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի այն դիրքորոշումը, որ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 8 եւ 31-րդ հոդվածներին, քանի որ.

նախ, ըստ գործի նյութերի՝ դիմողը չի հանդիսանում իր կողմից օգտագործվող հողամասի սեփականատեր,

երկրորդ, իր սեփականությունը հանդիսացող գույքը վարձակալության տրամադրելը՝ անկախ այդ գույքի կամ դրա մի մասի նկատմամբ այլ անձանց իրավունքների առկայությունից, բխում է սեփականատիրոջ կողմից իր սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու սահմանադրական իրավազորությունից,

երրորդ, ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական եւ հողային օրենսգրքերը թույլատրելի են համարում, մասնավորապես, սեփականատիրոջ կողմից իր գույքը վարձակալության հանձնելն այն դեպքում, երբ այդ գույքը կամ դրա մի մասը ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով՝ միաժամանակ երաշխավորելով տվյալ անձանց իրավունքները,

չորրորդ, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի նպատակը չէ երաշխավորելու պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալի իրավունքներն այն դեպքում, երբ նշված հողամասի նկատ-

մամբ պետության եւ մեկ այլ սուբյեկտի միջեւ կնքվում է վարձակալության պայմանագիր,

հինգերորդ, վարձակալի եւ վարձակալության հանձնված գույքի նկատմամբ այլ անձանց իրավունքների երաշխավորմանն են նվիրված, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 206, 207, 627-րդ հոդվածները, ՀՀ հողային օրենսգրքի 47, 48, 49, 64, 66, 78 եւ 118-րդ հոդվածները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Ծիծեռնակ-8» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի, «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 5-րդ հոդվածների, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 4-րդ ենթակետերի, 1-ին մասի երկրորդ պարբերության, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերի մասով կարճել:

2. ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 մայիսի 2013 թվականի
ՍԴՈ-1092

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **20 մայիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի մարտի 12-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրա-

պետության կառավարության միջեւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 26.04.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը եւ պարզաբանումները, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրն ու գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ.**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2013 թվականի մարտի 12-ին Երեւանում՝ առկա բարեկամական հարաբերությունները գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով ամրապնդելու եւ խորացնելու նպատակով:

2. Համաձայնագրով սահմանված են ֆինանսական օժանդակության չափը եւ այն ոլորտները, որոնց ուղղվելու է ֆինանսավորումը, ինչպես նաեւ նախնական հատկացումների իրականացման կարգն ու պայմանները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- վճարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկերը եւ պետական այլ տուրքերը, որոնք առաջանում են Համաձայնագրով սահմանված պայմանագրերի կնքման ու իրականացման շրջանակներում,
- վարկի եւ ֆինանսական օժանդակության օգտագործումից անհրաժեշտաբար բխող՝ ծովային, ցամաքային եւ օդային ճանապարհներով անձերի եւ գույքի տեղափոխման համար ուղեւորներին եւ առաքողներին տալ տրանսպորտային ձեռնարկության ազատ ընտրության հնարավորություն,
- չձեռնարկել միջոցներ, որոնք կբացառեն կամ կդժվարացնեն մյուս կողմի տարածքում գործող տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը, ինչպես նաեւ տրամադրել պահանջվող թույլտվություններ այդ ձեռնարկությունների մասնակցության համար:

4. Համաձայնագրով սահմանված են նաեւ այն ուժի մեջ մտնելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2013 թվականի մարտի 12-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը :

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 մայիսի 2013 թվականի
ՍԴՈ-1093

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **20 մայիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Լ. Հունանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի հունվարի 25-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Կանանց ձեռներեցությանն աջակցման հատվածի զարգացման ծրագիր (Հատուկ գործառնություններ)»

երաշխավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2013թ. ապրիլի 22-ի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Կանանց ձեռներեցությանն աջակցման հատվածի զարգացման ծրագիր (Հատուկ գործառնություններ)» երաշխավորման համաձայնագիրն (Համաձայնագիր) ստորագրվել է 2013թ. հունվարի 25-ին:

Համաձայնագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Կանանց ձեռներեցությանն աջակցման հատվածի զարգացման ծրագիր (Հատուկ գործառնություններ)» վարկային համաձայնագրով Վարկառուի կողմից ստանձնվելիք պարտավորությունների կատարման երաշխավորումն է:

2. Համաձայնագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

ա) որպես առաջնային պարտատեր երաշխավորել վարկի հիմնական գումարի, տոկոսների եւ այլ գանձումների, վարկի նախավճարի նկատմամբ հավելավճարի ժամանակին եւ ճշտապահ վճարումները.

բ) Վարկառուի տրամադրության տակ գտնվող միջոցների՝ Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը հոգալու համար բավարար չլինելու առումով ողջամիտ պատճառ առաջանալու դեպքում ձեռնարկել ԱԶԲ-ի համար բավարար քայլեր՝ արագ կերպով Վարկառուին անհրաժեշտ ծախսերը հոգալու միջոցներ տրամադրելու համար կամ ապահովել դրանց տրամադրումը.

գ) չձեռնարկել որեւէ քայլ կամ թույլ չտալ, որ վարկառուի քաղաքական ստորաբաժանումները կամ վարկառուի քաղաքական ստորաբաժանումների գործակալությունները ձեռնարկեն որեւէ քայլ, որոնք կխոչընդոտեն կամ կխանգարեն Ծրագրի հաջող իրականացմանը կամ

Ծրագրի օբյեկտների արդյունավետ գործունեությանը կամ Վարկային համաձայնագրի ներքո Վարկառուի ստանձնած պարտավորությունների կատարմանը:

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ երաշխավորման համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի երկրորդ մասում ամրագրված սկզբունքից, քանի որ կոչված են նպաստելու տնտեսական գործունեության ազատությանն ու ազատ տնտեսական մրցակցությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2013 թվականի հունվարի 25-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Կանանց ձեռներեցությանն աջակցման հատվածի զարգացման ծրագիր (Հատուկ գործառնություններ)» երաշխավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 մայիսի 2013 թվականի
ՍԴՈ-1094

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **20 մայիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Լ. Հունանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի հունվարի 25-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Կանանց ձեռներեցությանն աջակցման հատվածի զարգացման ծրագիր (Հատուկ գործառնություններ)»

վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2013թ. ապրիլի 22-ի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Կանանց ձեռներեցությանն աջակցման հատվածի զարգացման ծրագիր (Հատուկ գործառնություններ)» վարկային համաձայնագիրն ստորագրվել է 2013թ. հունվարի 25-ին: Համաձայնագրի հիմնական նպատակը ձեռներեց կանանց համար բարելավված բարենպաստ միջավայրին աջակցելն է:

2. Համաձայնագրի համաձայն՝ Ասիական զարգացման բանկը համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել վարկ Ասիական զարգացման բանկի Հատուկ հիմնադրամի միջոցներից, տարբեր արժույթներով՝ տասներեք միլիոն երեսունհինգ հազար Փոխառության հատուկ իրավունքներին համարժեք գումարի չափով (ՓՀԻ 13.035.000 համարժեք)՝ կանանց ձեռներեցությանն աջակցման հատվածի զարգացման ծրագրի շրջանակներում:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) համաձայնագրի II հոդվածով նախատեսված պայմաններով մարել վարկի գումարը՝ վճարումներն իրականացնելով սահմանված դրույքաչափերին եւ վարկային համաձայնագրի 2-րդ առդիրում նկարագրված մարման ժամանակացույցին համապատասխան.

բ) տոկոսները եւ վարկի մասով մյուս բոլոր վճարները կատարել կիսամյակներով՝ յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին եւ օգոստոսի 15-ին.

գ) ապահովել վարկային միջոցների օգտագործումը Ծրագրի ծախսերի ֆինանսավորման նպատակով.

դ) կատարել վարկային համաձայնագրի 4-րդ առդիրում նկարագրված պարտավորությունները կամ ապահովել դրանց կատարումը.

ե) կիրառել 2006թ. հունվարի 1-ով թվագրված՝ ԱԶԲ-ի Հատուկ գործառնությունների վարկային կանոնակարգի բոլոր դրույթները սույն համաձայնագրի նկատմամբ:

4. Համաձայնագրի ստորագրման ամսաթվին հաջորդող 90-րդ օրը սահմանվում է որպես վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվ:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի երկրորդ մասում ամրագրված սկզբունքներից, քանի որ կոչված են նպաստելու տնտեսական գործունեության ազատությանն ու ազատ տնտեսական մրցակցությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2013 թվականի հունվարի 25-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Կանանց ձեռներեցությանն աջակցման հատվածի զարգացման ծրագիր (Հատուկ գործառնություններ)» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 մայիսի 2013 թվականի
ՍԴՈ-1095

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ԲԱՂԴԱԴՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **20 մայիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի նոյեմբերի 7-ին Բաղդադում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրաքի Հանրապետության կառավարության

միջեւ ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի ապրիլի 26-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրաքի Հանրապետության կառավարության միջեւ ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2012 թվականի նոյեմբերի 7-ին:

Համաձայնագրի նպատակն է ստեղծել երկու պետությունների միջեւ փոխշահավետ տնտեսական համագործակցությունը զարգացնելու բարենպաստ պայմաններ:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) խրախուսել եւ բարենպաստ պայմաններ ստեղծել Հայաստանի Հանրապետության տարածքում իրաքյան (մյուս պայմանավորվող) կողմի ներդրողների ներդրումների համար եւ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված իրավասությունների իրականացման իրավունքի պահպանմամբ, ընդունել նման ներդրումները.

բ) Հայաստանի Հանրապետության տարածքում մյուս պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների նկատմամբ ապահովել արդար եւ հավասար ռեժիմ եւ լիակատար պաշտպանություն ու անվտանգություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության սկզբունքների եւ Համաձայնագրի դրույթների.

գ) մյուս պայմանավորվող կողմի ներդրողների կողմից իրականացված ներդրումները չենթարկել լրացուցիչ պահանջների, որոնք կարող են վնաս հասցնել դրանց եկամտաբերությանը կամ բացա-

սաբար ազդել դրանց օգտագործման, կառավարման, իրականացման, գործարկման, ընդլայնման, վաճառքի կամ այլ տնօրինման վրա՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության.

դ) Հայաստանի Հանրապետության տարածքում մյուս պայմանավորվող կողմի ներդրողի ներդրումներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չազգայնացնել, չառգրավել, չօտարել կամ չսեփականազրկել, կամ ազգայնացմանը, առգրավմանը, օտարմանը կամ սեփականազրկմանը հավասարազոր հետեւանքներ ունեցող այլ միջոցների չենթարկել՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության ներքին կարիքներին վերաբերող հանրային նպատակով՝ նախնական, համարժեք եւ արդյունավետ փոխհատուցմամբ եւ պայմանով, որ այդ միջոցները ձեռնարկվել են ոչ խտրական հիմքերով եւ ընդհանուր կիրառման ազգային օրենսդրության պատշաճ ընթացակարգով.

ե) մյուս պայմանավորվող կողմի ներդրողի հետ ծագած վեճը կարգավորել բարեկամաբար՝ բանակցության եւ հաշտեցման միջոցով, հակառակ դեպքում՝ Համաձայնագրով սահմանված կարգով:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8, 9, 31, 33.1-րդ հոդվածների դրույթներին, կոչված են բարենպաստ պայմաններ ստեղծելու տնտեսական գործունեության ազատության եւ ազատ տնտեսական մրցակցության ծավալման, ինչպես նաեւ ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության, գործարար նախաձեռնողականության խթանման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2012 թվականի նոյեմբերի 7-ին Բաղդադում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրաքի Հանրապե-

տության կառավարության միջեւ ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 մայիսի 2013 թվականի
ՍԴՈ-1096

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԱԲՈՒ ԴԱԲԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ԴՈՒՐՍ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **20 մայիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ Ա. Մարությանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի նոյեմբերի 20-ին Աբու Դաբիում ստորագրված՝ Հայաստանի Հանրա-

պետության կառավարության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջեւ միմյանց համապատասխան տարածքների միջեւ եւ դրանցից դուրս օդային հաղորդակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 26 ապրիլի 2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջեւ միմյանց համապատասխան տարածքների միջեւ եւ դրանցից դուրս օդային հաղորդակցության մասին համաձայնագիրն ստորագրվել է 2012թ. նոյեմբերի 20-ին՝ Աբու Դաբիում:

Համաձայնագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջեւ միմյանց համապատասխան տարածքների միջեւ եւ դրանցից դուրս օդային հաղորդակցության հաստատումը եւ իրականացումը:

Համաձայնագրի անբաժանելի մաս է կազմում Հավելվածը՝ «Երթուղիների ցանկ»:

Սույն Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության սկզբունքով, ի թիվս այլնի, պարտավորվում է.

- Արաբական Միացյալ Էմիրություններին տրամադրել՝ իր նշանակած ավիաընկերության կողմից համաձայնեցված հաղորդակցություններ հաստատելու եւ իրականացնելու, Հայաստանի Հանրապետության տարածքի վրայով անվայրէջք թռիչք կատարելու, Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ երթեւեկության նպատակներով կանգառ կատարելու, Արաբական Միացյալ Էմիրությունների տարածքից կամ դեպի Արաբական Միացյալ Էմիրությունների տարածք ուղեւորների, ուղեբեռների, բեռների, ներառյալ՝ փոստի, առանձին կամ համակցված միջազգային փոխադրման

նպատակով՝ դրանց վերցնելու կամ իջեցնելու համար Հայաստանի Հանրապետության տարածքում կանգառ կատարելու իրավունքը,

- ձեռնարկել իր իրավազորության ներքո բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի վերացվեն խտրականության բոլոր ձեւերը եւ անարդար, հակամրցակցային եւ զավթիչ գործելակերպերը, որոնք անբարենպաստ կերպով կազդեն Արաբական Միացյալ Էմիրությունների նշանակած ավիաընկերության մրցակցային դիրքի վրա՝ Համաձայնագրով նախատեսված իրավունքներն իրականացնելիս,
- Արաբական Միացյալ Էմիրությունների նշանակած ավիաընկերություններին ազատել ներմուծման սահմանափակումներից, մաքսային տուրքերից, անուղղակի հարկերից, տեսչական գանձումներից եւ այլ պետական եւ/կամ տեղական տուրքերից եւ վճարումներից՝ կապված դրանց օդանավերի եւ դրանց հիմնական սարքավորումների, վառելիքի, քսայուղերի, սպառվող տեխնիկական պարագաների, պահեստամասերի, ներառյալ՝ շարժիչները, օդանավի պաշարների հետ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով այնպիսի ապրանքներով, ինչպիսիք են՝ սննդամթերքը, ալկոհոլային եւ ոչ ալկոհոլային խմիչքները, ծխախոտը եւ թռիչքի ընթացքում վաճառքի կամ ուղեւորների կողմից օգտագործման համար նախատեսված այլ ապրանքներ, ինչպես նաեւ այլ առարկաներ, որոնք նախատեսված են կամ բացառապես օգտագործվում են համաձայնեցված հաղորդակցություններ իրականացնող տվյալ նշանակված ավիաընկերության կողմից օդանավի շահագործման կամ սպասարկման կապակցությամբ, ինչպես նաեւ տպագիր տոմսերը, ավիաուղիների հաշիվները, ցանկացած այլ տպագիր նյութերը, որոնք կրում են նշանակված ավիաընկերության տարբերանշանները, ինչպես նաեւ սովորական հրապարակային կամ գովազդային նյութերը, որոնք անվճար տրամադրվում են տվյալ նշանակված ավիաընկերության կողմից,
- նշված օրենքների եւ կանոնակարգերի կիրառման առումով նախապատվություն չտալ իր սեփական կամ ցանկացած այլ ավիաընկերությանը՝ Արաբական Միացյալ Էմիրությունների նշանակած ավիաընկերության նկատմամբ,
- Հայաստանի Հանրապետության տարածքով ուղիղ տարանցման մեջ գտնվող ուղեւորներին, ուղեբեռը եւ բեռը, ներառյալ՝ փոստը, որոնք չեն լքում օդանավակայանի՝ այդպիսի նպատակների հա-

մար նախատեսված տարածքները, ենթարկել ոչ ավել, քան պարզեցված հսկողության՝ բացառությամբ անվտանգության, օդահենության, թմրամիջոցների հսկման նպատակներով եւ այլ հատուկ դեպքերում: Նման ուղեբեռը եւ բեռը, ներառյալ՝ փոստը, ազատել մաքսային տուրքերից, ակցիզային հարկերից եւ այլ նմանատիպ ազգային եւ/կամ տարածքային վճարներից,

- արտոնություն չտրամադրել, օգտագործողի վճարների մասով, նմանատիպ միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնող Հայաստանի Հանրապետության կամ որեւէ այլ ավիաընկերության (ավիաընկերությունների), եւ չսահմանել կամ չթույլատրել սահմանելու օգտագործողի վճարներ Արաբական Միացյալ Էմիրությունների կողմից նշանակված ավիաընկերության (ավիաընկերությունների) նկատմամբ, որոնք ավելի բարձր են այն վճարներից, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության նշանակած ավիաընկերության (ավիաընկերությունների) նկատմամբ՝ նմանատիպ միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնելու համար՝ նմանատիպ օդանավ կամ հարակից ենթակառուցվածքներ եւ ծառայություններ օգտագործելիս,
- Արաբական Միացյալ Էմիրությունների խնդրանքի դեպքում, տրամադրել անհրաժեշտ ողջ օժանդակությունը՝ կանխելու համար քաղաքացիական օդանավերի անօրինական զավթման գործողությունները եւ նման օդանավերի, դրանց ուղեւորների եւ անձնակազմերի, օդանավակայանների եւ օդագնացության միջոցների անվտանգության դեմ ուղղված անօրինական այլ գործողությունները, ինչպես նաեւ քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիք,
- Հայաստանի Հանրապետության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների փոխադարձ հարաբերություններում գործել Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության կողմից հաստատված եւ որպես 1944թ. դեկտեմբերի 7-ի Չիկագոյի Կոնվենցիայի հավելվածներ սահմանված ավիացիոն անվտանգության վերաբերյալ դրույթներին համապատասխան՝ այնքանով, որքանով անվտանգության վերաբերյալ այդպիսի դրույթները կիրառելի են Հայաստանի Հանրապետության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների նկատմամբ,
- պահանջել, որպեսզի իր գրանցամատյաններում ընդգրկված՝ օդա-

նավեր շահագործողները կամ այն օդանավեր շահագործողները, որոնց գործունեության հիմնական վայրը կամ գտնվելու վայրն իր տարածքում է, եւ իր տարածքում տեղակայված օդանավակայաններ շահագործողները գործեն ավիացիոն անվտանգության վերաբերյալ այնպիսի դրույթներին համապատասխան, որոնք կիրառելի են Հայաստանի Հանրապետության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների նկատմամբ,

- ապահովել իր տարածքում՝ օդանավը պաշտպանելու, ուղեւորներին, անձնակազմին եւ ձեռնածանրոցներն ստուգելու, նախքան բեռնումը կամ բեռնաթափումը՝ ուղեբեռի, բեռի, այդ թվում՝ փոստի, եւ օդանավի պաշարների համապատասխան զննումներ անցկացնելու նպատակով կիրառվող միջոցների արդյունավետությունը, նաեւ համաձայնել դրական արձագանքելու կոնկրետ սպառնալիքի առնչությամբ անվտանգության հատուկ միջոցներ ձեռնարկելու՝ Արաբական Միացյալ Էմիրությունների ցանկացած խնդրանքի,
- աջակցել Արաբական Միացյալ Էմիրություններին՝ քաղաքացիական օդանավի անօրինական զավթման միջադեպ կամ միջադեպի սպառնալիք կամ այլ անօրինական գործողության դեպքում, որոնք ուղղված են այդպիսի օդանավի, դրա ուղեւորների եւ անձնակազմի, օդանավակայանների կամ օդագնացության միջոցների անվտանգության դեմ՝ դյուրացնելով հաղորդակցությունն ու մյուս համապատասխան միջոցները, որոնք նախատեսված են հնարավորինս արագ, նվազագույնի հասցնելով կյանքի նկատմամբ վտանգը, նման միջադեպը կամ դրա սպառնալիքը կասեցնելու համար,
- ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կիրառելի կհամարվեն ապահովելու համար, որպեսզի Արաբական Միացյալ Էմիրությունների օդանավը, որը ենթարկվել է անօրինական զավթման գործողության կամ անօրինական միջամտության այլ գործողությունների, որոնք տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում, կանգնեցվի այնտեղ, եթե դրա մեկնումն անհրաժեշտ չէ այդ օդանավի ուղեւորների եւ անձնակազմի կյանքը պաշտպանելու գերակա պարտավորության մասով,
- Արաբական Միացյալ Էմիրությունների նշանակած ավիաընկերությանը կամ ավիաընկերություններին տրամադրել իր տարածքում օդային փոխադրումների եւ առնչվող ցանկացած ծառայությունների վաճառքի կապակցությամբ ծախսերի նկատմամբ եկամուտների ավելցուկը եւ այդպիսի եկամուտների վրա գոյացած առեւտ-

րային տոկոսները (ներառյալ փոխանցմանն սպասող ավանդներից գոյացած տոկոսները) ազատորեն փոխանցելու իրավունք,

- Արաբական Միացյալ Էմիրությունների նշանակած ավիաընկերության կամ ավիաընկերությունների կողմից հաղորդակցությունների համար կիրառվող սակագինը հաստատել ողջամիտ մակարդակով, պատշաճ ուշադրություն դարձնելով բոլոր համապատասխան գործոններին, ներառյալ՝ օգտվողների շահերը, շահագործման արժեքը, հաղորդակցությունների բնույթը, միջնորդավճարների դրույքաչափերը, ողջամիտ շահույթը, մյուս ավիաընկերությունների սակագները եւ շուկայում առկա այլ առեւտրային նկատառումները,
- Արաբական Միացյալ Էմիրությունների ավիացիոն իշխանությունների խնդրանքի դեպքում տրամադրել այնպիսի՝ պարբերական կամ համանման այլ վիճակագրական տվյալներ, որոնք կարող են արդարացիորեն պահանջվել,
- պարբերաբար խորհրդակցել Արաբական Միացյալ Էմիրությունների Ավիացիոն իշխանությունների հետ՝ Համաձայնագրի դրույթների իրականացումը եւ բավարար համապատասխանեցումն ապահովելու նպատակով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննության առնվող Համաձայնագրի առարկան համահունչ է ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածից բխող՝ Հայաստանի Հանրապետության ձգտմանը՝ բոլոր պետությունների հետ իր հարաբերությունները կառուցել բարիդրացիության եւ համագործակցության սկզբունքի հիման վրա:

Սահմանադրական դատարանը նպատակահարմար է գտնում նշել, որ Համաձայնագրի բնօրինակ հանդիսացող հայերեն տեքստի 7-րդ հոդվածում տեղ է գտել հասկացութային անճշտություն՝ «օդահեություն» եզրույթի փոխարեն օգտագործվում է «օդային ծովահեություն»:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2012 թվականի նոյեմբերի 20-ին Աբու Դաբիում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջեւ միմյանց համապատասխան տարածքների միջեւ եւ դրանցից դուրս օդային հաղորդակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 մայիսի 2013 թվականի
ՍԴՈ -1097

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-ԻՆ ԿՆՔՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **20 մայիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Գ. Բեգլարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի փետրվարի 11-ին կնքված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հա-

յաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի մայիսի 6-ին սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր» թիվ 8229-AM փոխառության համաձայնագիրն ստորագրվել է 2013 թվականի փետրվարի 11-ին:

Համաձայնագրի բաղկացուցիչ մասերն են թվով 3 առդիրները եւ մեկ հավելված, որոնցում համապատասխանաբար ներկայացված են փոխառության միջոցների հաշվին իրականացվելիք ծրագրի նկարագրությունը (այսուհետ՝ Ծրագիր), դրա կատարումը, փոխառության հիմնական գումարի մարման ժամանակացույցը եւ համաձայնագրում օգտագործված սահմանումները: Համաձայնագրին կից ներկայացվել են նաեւ 2 լրացուցիչ նամակներ:

Ծրագիրը կազմված է երկու մասերից՝ ա) Կենսական նշանակության ճանապարհների բարելավում (147 կմ հատվածի բարելավում եւ 23 կմ հատվածի հիմնանորոգում եւ ընթացիկ պահպանություն), բ) Ծրագրի կառավարում եւ ինստիտուցիոնալ հզորացում: Ծրագիրն ավարտվելու է 2017 թվականի հունիսի 30-ին:

2. Համաձայնագրի նպատակն է ընտրված Կենսական նշանակության ճանապարհային ցանցի մոտ 147 կմ երկարությամբ ճանապարհները բարելավելու միջոցով բարելավել շուկաների եւ ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար եւ հզորացնել ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության կարողությունը՝ կառավարելու համար Կենսական նշանակության ճանապարհային ցանցը:

Վերոհիշյալ նպատակներով Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետությանն է տրամադրում 45.0 (քառասունհինգ) միլիոն ԱՄՆ դոլարի չափով փո-

խառություն, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել արժույթի փոխարկման միջոցով՝ Համաձայնագրի 2.07-րդ բաժնի դրույթներին համապատասխան: Փոխառության միջոցների մասհանման վերջնաժամկետ է սահմանված 2017 թվականի հունիսի 30-ը:

Փոխառության մարման ժամկետը 25 տարի է, որից արտոնյալ ժամկետը՝ 10 տարի:

3. Ըստ համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.04-րդ բաժնի՝ Հայաստանի Հանրապետության կողմից տոկոսների վճարման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վճարվելիք տոկոսագումարը հավասար է փոխառության արժույթի բազային տոկոսադրույքին՝ 6-ամսյա USD Libor գումարած փոփոխական տարբերությունը (սփրեդը)՝ պայմանով, որ փոխառության ամբողջ հիմնական գումարի կամ դրա մի մասի փոխարկումից հետո Հայաստանի Հանրապետության կողմից փոխարկման ժամանակահատվածում այդ գումարի դիմաց վճարվելիք տոկոսը պետք է որոշվի 2012 թվականի մարտի 12-ով թվագրված՝ «Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի ընդհանուր պայմանները փոխառությունների համար» (այսուհետ՝ Ընդհանուր պայմանների) 4-րդ հոդվածի դրույթներին համապատասխան: Ընդ որում, եթե փոխառության առհանված մնացորդի որեւէ գումար ժամանակին չի վճարվում եւ եթե չվճարվելը շարունակվում է 30 օր, ապա Փոխառուի կողմից վճարման ենթակա տոկոսը հաշվարկվում է Ընդհանուր պայմանների 3.02-րդ բաժնի «ե» կետում սահմանված կարգով:

4. Ըստ համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.05-րդ եւ 2.06-րդ բաժինների՝ վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ը եւ նոյեմբերի 15-ը, իսկ փոխառության հիմնական գումարի մարումը պետք է իրականացվի համաձայնագրի 3-րդ առդիրի 1-ին մասով սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին եւ նոյեմբերի 15-ին, <u>սկսած 2023 թվականի մայիսի 15-ից մինչեւ 2037 թվականի մայիսի 15-ը՝ մայր գումարի վճարվելիք տոկոսային մասնաբաժինը պետք է կազմի 3,33%, իսկ 2037թ. նոյեմբերի 15-ին այն պետք է կազմի 3,43%:</u>

5. Համաձայնագրի 2-րդ առդիրի 4-րդ բաժնի «Ա» մասի 2-րդ կետի համաձայն նախատեսվում է, որ փոխառության միջոցներից կարող են ֆինանսավորվել Ծրագրի շրջանակներում նախատեսվող ապրանքնե-

րի, աշխատանքների, ոչ խորհրդատվական ծառայությունների, խորհրդատվական ծառայությունների եւ Ծրագրի լրացուցիչ գործառնական ծախսերի 80%-ը, այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է համաֆինանսավորել վերոնշյալ ծախսերի 20%-ը:

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մասնավորապես հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- փոխառության հիմնական գումարի վճարումն իրականացնել համաձայնագրում ներկայացված մարման ժամանակացույցին համապատասխան,
- հայտարարել Ծրագրի նպատակների նկատմամբ Հայաստանի Հանրապետության հանձնառության մասին եւ Ծրագիրն իրականացնել ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության Ծրագրերի իրականացման գրասենյակի միջոցով՝ Ընդհանուր պայմանների 5-րդ հոդվածի դրույթներին համապատասխան,
- մինչեւ Ծրագրի ավարտն ապահովել ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության Ծրագրերի իրականացման գրասենյակի գործունեությունը, որը պատասխանատու է Ծրագրի կառավարման, համակարգման, իրականացման, մոնիտորինգի ու գնահատման համար եւ ունի Գործառնական ձեռնարկում նկարագրված կառուցվածքը, պարտականությունները եւ Բանկի համար ընդունելի անձնակազմ եւ ֆինանսավորում,
- բացառությամբ այն դեպքերի, երբ Փոխառուն եւ Բանկը այլ համաձայնություն են ձեռք բերում, չեղյալ չճանաչել, չփոփոխել, չկասեցնել, չհրաժարվել կամ այլ կերպ չձախողել Գործառնական ձեռնարկի կամ դրանում նշված պարտավորությունների կատարումը,
- թույլատրել Ստանդարտացման եվրոպական կոմիտեի կողմից առաջարկվող՝ ճանապարհների եւ մայրուղիների նախագծման եւ շինարարության ստանդարտների օգտագործումը Ծրագրի շրջանակներում ճանապարհների նախագծման եւ շինարարության նպատակով,
- ապահովել Ծրագրի իրականացումը Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համապատասխան,
- ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության միջոցով մոնիտորինգ (մշտադիտարկում) իրականացնել եւ գնահատել Ծրագրի ընթացքը եւ պատրաստել Ծրագրի կիսամյակային հաշվետվու-

թյունները՝ Ընդհանուր պայմանների 5.08-րդ բաժնի դրույթներին համապատասխան եւ Բանկի համար ընդունելի ցուցանիշների հիման վրա,
- ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության միջոցով պահպանել կամ ապահովել ֆինանսական կառավարման համակարգի պահպանումը՝ Ընդհանուր պայմանների 5.09-րդ բաժնի դրույթներին համապատասխան,
- ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության միջոցով նախապատրաստել եւ յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ օր հետո Բանկ ներկայացնել աուդիտ չանցած միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները՝ Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ,
- ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության միջոցով ապահովել ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտը (հաշվեքննությունը)՝ Ընդհանուր պայմանների 5.09-րդ բաժնի «բ» բաժնի դրույթների համաձայն,
- Ծրագրի համար պահանջվող եւ փոխառության միջոցներից ֆինանսավորվող բոլոր ապրանքները, աշխատանքները եւ ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերել Գնումների ուղեցույցի 1-ին բաժնում ամրագրված կամ նշված պահանջների եւ Համաձայնագրի 2-րդ առդիրի 3-րդ բաժնի դրույթների համաձայն,
- Ծրագրի համար պահանջվող եւ փոխառության միջոցներից ֆինանսավորվող բոլոր խորհրդատուների ծառայությունները ձեռք բերել Խորհրդատուի ուղեցույցի 1-ին եւ 4-րդ բաժիններում ամրագրված կամ նշված պահանջների եւ 2-րդ առդիրի 3-րդ բաժնի դրույթների համաձայն,
- ապրանքները, աշխատանքները եւ ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերել Միջազգային մրցակցային սակարկության հիման վրա կնքված պայմանագրերի ներքո, եթե այլ բան նախատեսված չէ Համաձայնագրի 2-րդ առդիրի 3-րդ բաժնի Բ մասի 2-րդ կետում,
- Միջազգային մրցակցային սակարկությունից տարբեր՝ Համաձայնագրի 2-րդ առդիրի 3-րդ բաժնի Բ մասի 2-րդ կետում նշված գնումների մեթոդները կարող են կիրառվել Գնումների պլանում նշված պայմանագրերի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ եւ ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար,

- խորհրդատուների ծառայությունները ձեռք բերել Որակի եւ արժեքի վրա հիմնված ընտրության հիման վրա պայմանագրերի ներքո, եթե այլ բան նախատեսված չէ Համաձայնագրի 2-րդ առդիրի 3-րդ բաժնի Գ մասի 2-րդ կետում,
- ապահովել, որպեսզի մինչեւ Ծրագրի ավարտը, Ծրագրի շրջանակներում Կենսական նշանակության ճանապարհային ցանցի հիմնանորոգված ճանապարհային հատվածների պահպանության համար հատկացվեն բավարար բյուջետային միջոցներ (առդիր 2, բաժին 5),
- եթե Փոխառության միջոցներն ամբողջությամբ չեն մասհանվել հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ, ապա հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ Փոխառության մասհանված գումարների չափով մարել այդ ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետության մասհանված մնացորդը՝ համաձայն 3-րդ առդիրի 1-ին կետի,
- եթե Փոխառության միջոցներն ամբողջությամբ չեն մասհանվել հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ, ապա հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվից հետո մասհանված ցանկացած գումար մարել գումարի մասհանման ամսաթվին հաջորդող հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին՝ Բանկի կողմից որոշված չափով եւ այլն:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման նպատակներով մի քանի փոխառության համաձայնագրեր, մասնավորապես, 2009 թվականի փետրվարի 26-ի՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիրը եւ 2010 թվականի հուլիսի 23-ի՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ վարկային համաձայնագիրը (Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում), որոնք Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է համապատասխանաբար՝ 2009 թվականի մարտի 18-ին եւ 2010 թվականի հոկտեմբերի 7-ին՝ Ազգային ժողովի թիվ ԱԺՈ-Ն-131-4 եւ ԱԺՈ-236-Ն որոշումներով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված համա-

ձայնագրերի վարկային միջոցների օգտագործման ուսումնասիրություն է կատարել ՀՀ վերահսկիչ պալատը եւ 2010 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ 2012 թվականի դեկտեմբերի 31-ը ժամանակահատվածում իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ կազմվել է համապատասխան հաշվետվություն:

ՀՀ վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների, տվյալ դեպքում՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության կողմից, իրենց լիազորությունների ոչ լիարժեք իրականացման հետեւանքով կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագրի կատարմանն ուղղված վարկային միջոցների նպատակային եւ արդյունավետ ծախսման բնագավառում տեղ են գտել բազմաթիվ թերություններ ու բացթողումներ:

Հիշյալ հաշվետվությամբ արձանագրվել են մի շարք խախտումներ, մասնավորապես, «Իջեւանի ՃՇՇ» ՓԲԸ-ի եւ «Արարատ ճանշին» ՍՊԸ-ի կողմից իրականացված աշխատանքների մասով: Միաժամանակ, ՀՀ վերահսկիչ պալատը ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանն առաջարկել է՝ միջոցներ ձեռնարկել ավել վճարված 109.427.0 հազ. դրամ գումարը ՀՀ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ, շինարարության ընթացքում աշխատանքների տեսակների կամ օգտագործվող նյութերի փոփոխության դեպքում կատարել աշխատանքների գների համարժեք փոփոխություններ, բացառել առանց ծագման եւ որակի հավաստագրեր ունեցող բիտումի օգտագործումը եւ այլն:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ, իրականացնելով ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված լիազորությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ համաձայնագրով ստանձնված պարտավորությունների հետագա կատարման հուսալիությունն առավելագույնս ամրապնդելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը միաժամանակ նշում է, որ քննության առարկա համաձայնագրով նախատեսված ծրագրի ընդհանուր բնույթը եւ, միաժամանակ, հանրապետության ավտոճանապարհների բարելավմանն ուղղված խնդիրների ընդգրկումը պահանջում են համաձայնագրի կատարման նկատմամբ հստակ մշտադիտարկում, որը հիմք կհանդիսանա խուսափելու վարկային նախորդ համաձայնագրերի իրագործման պրակտիկայում տեղ գտած թերություններից եւ բացթողումներից, վարկային սուղ միջոցնե-

ի անարդյունավետ օգտագործումից ու փոշիացումից, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթների հնարավոր խախտումներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2013 թվականի փետրվարի 11-ին կնքված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 մայիսի 2013 թվականի
ՍԴՈ-1098

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ԱՐԱՄ ԲԱՐԵՂԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 426.9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **31 մայիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչներ Ա. Ջեյնալյանի եւ Ա. Ղազարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Աշոտ Մանուկյանի եւ Արամ Բարեղամյանի դիմումների հիման

վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Աշոտ Մանուկյանի եւ Արամ Բարեղամյանի՝ 12.10.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Սահմանադրական դատարանի 13.11.2012թ. ՍԴԱՈ-78 աշխատակարգային որոշմամբ որոշվել է «Քաղաքացի Աշոտ Մանուկյանի եւ քաղաքացի Արամ Բարեղամյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործի դատաքննությունն սկսել 2013թ. մարտի 26-ին եւ անցկացնել գրավոր ընթացակարգով:

Սահմանադրական դատարանի 26.03.2013թ. ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ որոշվել է բավարարել միավորված գործի դատաքննության օրը մեկ այլ օր փոխադրելու վերաբերյալ դիմողների ներկայացուցիչների միջնորդությունը, գործի դատաքննությունը հետաձգել եւ սկսել 2013թ. ապրիլի 30-ին:

Սահմանադրական դատարանի 30.04.2013թ. ՍԴԱՈ-37 աշխատակարգային որոշմամբ, ելնելով գործով լրացուցիչ նյութերի ուսումնասիրման եւ գործի հանգամանքների համակողմանի բացահայտման անհրաժեշտությունից, որոշվել է գործի դատաքննությունը հետաձգել ու սկսել 2013թ. մայիսի 31-ին եւ այն անցկացնել բանավոր ընթացակարգով, ՀՀ դատական դեպարտամենտից պահանջել՝ մեկշաբաթյա ժամկետում սահմանադրական դատարան ներկայացնել 2012 եւ 2013 թվականների ընթացքում ՀՀ դատարանների կողմից նոր հանգամանքների հիմքով ներկայացված դիմումների հիման վրա ընդունված դատական ակտերը:

Ի կատարումն սահմանադրական դատարանի՝ վերը նշված աշխատակարգային որոշման պահանջի, 07.05.2013թ. սահմանադրական դատարանում ստացվել են 2012 եւ 2013 թվականների ընթացքում ՀՀ դատարանների կողմից նոր հանգամանքների հիմքով ներկայացված դիմումների հիման վրա ընդունված դատական ակտեր:

Լսելով գործով զեկուցողի զեկույցը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Դատական ակտերի վերանայումը» վերտառությամբ 426.9-րդ հոդվածը սահմանում է.

«1. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով:

2. Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա:

3. Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարան»:

Օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասը 26.12.08թ. ՀՕ-237-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն շարադրվել է նոր խմբագրությամբ, իսկ 26.10.11թ. ՀՕ-270-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն օրենսգրքի 426.9-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:

2. Դիմողները, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 25.02.2011թ. ՍԴՈ-943 եւ 15.07.2011թ. ՍԴՈ-984 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, կարծում են, որ եթե չապահովվի հիշյալ որոշումներով սահմանված կարգը, այն է՝ սահմանադրական դատարանի որոշումը, որով օրենքի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը հակասող կամ ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում բացահայտվել է դրա սահմանադրաիրավական բովանդակությունը եւ սահմանադրական դատարանը գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ընդհանուր իրավասության դատարաններում գործի վարույթը նորոգելու համար արդյունավետ ազդակ եւ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանման հիմք չհանդիսանա, ապա ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետով երաշխավորված

անձի՝ «սահմանադրական դատարան դիմելու իրավունքը» կլինի ոչ իրական, իսկ սահմանադրական դատարանում սահմանադրաիրավական վեճ նախաձեռնելը կիմաստազրկվի:

Վերլուծելով սահմանադրական դատարանի ՍԴՈ-984 որոշման հիման վրա օրենսգրքի 426.9-րդ հոդվածում կատարված օրենսդրական փոփոխությունները՝ դիմողները եզրահանգում են, որ դրանք հակասում են սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմանն առ այն, որ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է տեղի ունենա ipso facto (փաստի ուժով), որը ենթադրում է, որ վերանայման համար միակ պայման պետք է հանդիսանա դատական ակտում հակասահմանադրական նորմի կիրառման փաստը եւ որեւէ այլ հանգամանք, պայման, փաստ կամ փաստարկ որպես այլընտրանք չի կարող առաջ քաշվել կամ սահմանվել ի հավելումն նշված փաստի:

Դիմողները նաեւ գտնում են, որ վերանայման արդյունքում ընդունված նոր դատական ակտում բացառված չէ եզրափակիչ մասի համընկնումը բեկանված դատական ակտի եզրափակիչ մասին, սակայն դա կարող է տեղի ունենալ բացառապես գործի նոր քննության արդյունքում:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող իրավական նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, քանի որ չբացառելով այն հնարավորությունը, երբ գործով նոր կամ նոր երեւան եկած հանգամանքը կարող է ազդած չլինել գործի ելքի վրա, օրենսդիրը, որպես բացառիկ դեպք եւ միաժամանակ որպես նոր կամ նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնող անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության երաշխիք, նախատեսել է, որ դատարանը ծանրակշիռ փաստարկների հիման վրա կարող է չփոփոխել դատական ակտի եզրափակիչ մասը: Սակայն, վերջինիս գնահատմամբ, վիճարկվող դրույթով նախատեսված՝ նոր կամ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով հարուցված վարույթով օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով դատական ակտ կայացնելու եւ վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը, ըստ էության, վերաբերում է միայն դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտին: Այսինքն՝ երբ վերանայման վարույթի շրջանակներում հաստատվում է նոր կամ նոր երեւան եկած հանգամանքի առկայության փաստը, ապա վերանայման վարույթի

արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն վերանայվող դատական ակտերը: Վերանայման վարույթի արդյունքում տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանած ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով արձանագրված խախտման բնույթը եւ դրա ազդեցությունը գործի ելքի վրա: Այսպիսով, նոր երեւան եկած հանգամանքների, ՀՀ սահմանադրական դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների առկայությունն ինքնին չի կարող կանխորոշել գործի ելքը, չի կարող հանգեցնել անձի արդարացման կամ մեղավորության: Այս հարցում պետք է հաշվի առնել արձանագրված խախտման բնույթը եւ համարժեք իրավական միջոցներով ուղղել այն՝ «մինչեւ խախտումը եղած վիճակի վերականգնման» սկզբունքով:

Վերոգրյալի հիման վրա պատասխանող կողմն իր բացատրությունում գտնում է, որ վերանայման վարույթի արդյունքում գնահատելով խախտման բնույթը եւ դրա ազդեցությունը գործի ելքի վրա՝ պետք է կայացվի նոր դատական ակտ՝ օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով: Ուստի, ըստ պատասխանող կողմի, օրենսգրքի վիճարկվող դրույթն այնքանով, որքանով բացառում է անձի սահմանադրական կամ կոնվենցիոն իրավունքները խախտող դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 18-րդ, 19-րդ, 93-րդ հոդվածների եւ 101-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին:

4. Դիմողներից Ա. Մանուկյանի առնչությամբ սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Ա. Մանուկյանի վերաբերյալ Երեւանի քրեական դատարանի կողմից ԵԿԴ/0106/01/08 քրեական գործով 12.12.2008թ. կայացված դատավճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 10.03.2009թ. որոշմամբ մերժվել է: Վճռաբեկ դատարանն իր՝ 19.05.2009թ. որոշմամբ վերադարձրել է Ա. Մանուկյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը:

Օրենսգրքի 221-րդ հոդվածի 7-րդ մասի եւ 309.1-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ Ա. Մանուկյանի դիմումի հիման վրա գործով սահմանադրական դատարանը 02.04.2010թ. կայացրել է ՍԴՈ-872 որոշումը:

Սահմանադրական դատարանի ՍԴՈ-872 որոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 19.05.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր երեւան եկած հանգամանքով կամ նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ Ա. Մանուկյանի բողոքի հիման վրա գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 07.06.2010թ. որոշմամբ վերադարձրել է Ա. Մանուկյանի՝ վերը նշված բողոքը:

Օրենսգրքի 426.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կամ 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու վերաբերյալ Ա. Մանուկյանի դիմումի հիման վրա գործով սահմանադրական դատարանը 25.02.2011թ. կայացրել է ՍԴՈ-943 որոշումը:

Սահմանադրական դատարանի ՍԴՈ-943 որոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 07.06.2010թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ Ա. Մանուկյանի բողոքի հիման վրա գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 06.03.2012թ. որոշմամբ հարուցել է վերանայման վարույթ, որի արդյունքում իր՝ 30.03.2012թ. որոշմամբ մերժել է Ա. Մանուկյանի՝ վերը նշված բողոքը:

Դիմողներից Ա. Բարեղամյանի առնչությամբ սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Ա. Բարեղամյանի վերաբերյալ Երեւանի քրեական դատարանի կողմից թիվ ԵՔՐԴ/0205/01/08 գործով 14.07.2008թ. կայացված դատավճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 03.10.2008թ. որոշմամբ մերժվել է: Վճռաբեկ դատարանն իր՝ 07.05.2009թ. որոշմամբ վերադարձրել է Ա. Բարեղամյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը:

Սահմանադրական դատարանի ՍԴՈ-923 որոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 07.05.2009թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր երեւան եկած հանգամանքով կամ նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ Ա. Բարեղամյանի բողոքի հիման վրա գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 04.03.2011թ. որոշմամբ վերադարձրել է Ա. Բարեղամյանի՝ վերը նշված բողոքը:

Սահմանադրական դատարանի ՍԴՈ-943 որոշման հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 04.03.2011թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ Ա. Բարեղամյանի բողոքի հիման վրա գործով ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 13.03.2012թ. որոշմամբ հարուցել է վերանայ-

ման վարույթ, որի արդյունքում իր՝ 30.03.2012թ. որոշմամբ մերժել է Ա. Բարեղամյանի՝ վերը նշված բողոքը:

5. Դիմումների ուսումնասիրությունից բխում է, որ դիմողներն առաջադրում են նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի շրջանակներում հակասահմանադրական ճանաչված իրավական նորմի կիրառմամբ ընդունված դատական ակտի օրինական ուժի մեջ մնալու իրավական հնարավորության հարցը: Այսինքն՝ դիմողները վիճարկում են օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասը միայն նոր հանգամանքի, այլ ոչ թե նոր երեւան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթի տեսանկյունից, ուստի սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության հարցը քննության առարկա է դարձնում միայն նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի տեսանկյունից:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների կողմից առաջադրված՝ վերը նշված խնդիրը հարկ է քննարկել՝ հաշվի առնելով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի առնչությամբ սահմանադրական դատարանի՝ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները: Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում պարզել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում /մասնավորապես՝ ՍԴՈ-701, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-866, ՍԴՈ-871, ՍԴՈ-935, ՍԴՈ-943, ՍԴՈ-984/, ինչպես նաեւ սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում անդրադարձել է նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորումներին առնչվող հիմնախնդիրներին՝ առաջադրելով այն հայեցակարգային դիրքորոշումը, որ սահմանադրական դատարան դիմելու՝ անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմա-

նադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանը գտել է նաեւ, որ նոր հանգամանքների հիման վրա դատական ակտի վերանայման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը **պետք է լինի ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության ապահովումը**, որոնց օրենսդրորեն հստակեցումը կմեծացնի վստահությունն արդարադատության նկատմամբ, մարդկանց հնարավորություն կտա առավել երաշխավորված ու արդյունավետ իրացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

2008 թվականի հոկտեմբերի 21-ի ՍԴՈ-767 որոշման 9-րդ կետում սահմանադրական դատարանը հարկ է համարել ընդգծել նաեւ, որ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման լիարժեք եւ արդյունավետ համակարգի առկայությունն է՛լ ավելի է կարեւորվում քրեական դատավարության շրջանակներում, քանզի քրեական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի իրավունքների եւ ազատությունների փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն, մասնավորապես՝ հաշվի առնելով անձի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու եւ դրանից բխող հետեւանքների առկայության հանգամանքը:

Սահմանադրական դատարանն իր՝ 15.07.2011թ. ՍԴՈ-984 որոշման 7-րդ կետում արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումները. «... սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է բեկանման արդյունքում իրավասու մարմնի լիազորություններին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով՝ **տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով կիրառված իրավանորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված լինելու փաստը»:**

Ելնելով մարդկանց սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով քննության առարկա իրավակարգավորումների բացառիկ կարեւորությունից, ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ վճռաբեկ դատարանի ուշադրությունը հրավիրելով սահմանադրական դատարանի՝ 15.07.2011թ. ՍԴՈ-984 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների վրա, կրկին արձանագրում է, որ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնումը**: Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետեւանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս **վերականգնել մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum):** Այն դեպքում, երբ անձի սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է տվյալ անձի համար այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն, խնդրո առարկա դեպքում, խախտված իրավունքի վերականգնումը **հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու պարագայում**: Հետեւաբար, նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի խախտված սահմանադրական եւ/կամ կոնվենցիոն իրավունքի վերականգնման միջոց, առաջին հերթին պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի վերացմանը /բեկանմանը/, եւ սա օրենսդրորեն հստակ ամրագրման անհրաժեշտություն ունի:

Անդրադառնալով Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին R (2000)2 հանձնարարականի դրույթներին՝ ՍԴՈ-984 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաեւ, որ այդ հանձնարարականում որպես restitutio in integrum սկզբունքի արդյունավետ երաշխավորման միջոց մատնանշվում է **գործի վերաքննությունը, նոր քննությունը, իսկ որպես գործի վերաքննության հատուկ միջոց է դիտարկվում գործի նորոգումը, այն է՝ գործի վարույ-**

թի վերաբացումը: Ընդ որում, քրեական գործերի պարագայում Եվրոպական դատարանի վճռի հիման վրա քրեական գործի նոր քննությունը, որպես կանոն, հանդիսանում է restitutio in integrum սկզբունքի ապահովման միակ միջոցը:

Հիմք ընդունելով խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությունը, ինչպես նաեւ restitutio in integrum սկզբունքի բովանդակությունն ու այդ սկզբունքի երաշխավորմանն ուղղված՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նշված հանձնարարականի վերլուծությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով «դատական ակտի վերանայում» եզրույթն իր բովանդակությամբ համարժեք է «գործի նորոգում», «գործի վարույթի վերաբացում» եզրույթների բովանդակությանը, **եւ դատական ակտի վերանայման հասկացության նշված ընկալումն էլ պետք է կանխորոշի վերանայման վարույթի բովանդակությունը, դրա խնդիրները եւ դրա շրջանակներում լուծման ենթակա հարցերը:** Ըստ այդմ, դատական ակտի վերանայման վարույթի, նույնն է, թե գործի նորոգման վարույթի շրջանակներում պետք է ձեռնարկվեն արդարադատական այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն գործի վերաքննություն, նոր քննություն, ինչը հնարավոր է միայն հակասահմանադրական նորմ կիրառած՝ օրինական ուժի մեջ մտած **դատական ակտերի բեկանման պայմաններում:** Վերանայման ինստիտուտը կարող է ծառայել իր նպատակին միայն այն դեպքում, երբ ապահովվի տվյալ գործի նոր քննություն՝ կիրառված նորմի հակասահմանադրականության եւ կոնվենցիոն իրավունքի խախտման փաստի առկայության պայմաններում՝ **հաշվի առնելով նաեւ սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նոր հանգամանք հանդիսացող դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումները:**

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի եւ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը:

Սակայն հիմնախնդիրը միայն դրանով անհրաժեշտ լուծում չի ստանում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտերի վերանայման վարույթը կարող է ապահովել այդ վարույթի սահմանադրահիրավական նպատակի ու խնդիրների իրացումն այն դեպքում, երբ վերանայման վարույթը կանոնակարգող օրենսդրությունը եւ իրավակիրառական պրակտիկան

ձեւավորվեն հետեւյալ իրավական մոտեցումներին համապատասխան.

ա/ վերանայման բողոքում նոր հանգամանքի շարադրանքի եւ բողոքին կից՝ նոր հանգամանքը հաստատող ապացույցի առկայությունը, ի լրումն բողոքին ներկայացվող մյուս վավերապայմանների առկայությանը, բավարար հիմք պետք է դիտվի վերանայման վարույթ հարուցելու համար,

բ/ վերանայման պահանջը կարող է մերժվել, եթե միայն հարուցված վերանայման վարույթի շրջանակներում բողոքի քննության արդյունքներով պարզվում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ դատական ակտը վերանայելու համար հիմք չէ, այսինքն՝ այդ հանգամանքը տվյալ դեպքում նոր հանգամանք չի հանդիսանում,

գ/ եթե վերանայման վարույթի շրջանակներում հաստատվում է նոր հանգամանքի առկայության փաստը, ապա վերանայման վարույթի արդյունքում պետք է ուժը կորցրած ճանաչվեն հակասահմանադրական նորմ կիրառած կամ կոնվենցիոն իրավունքի խախտմամբ ընդունված դատական ակտերը,

դ/ վերոհիշյալ դատական ակտերի՝ ուժը կորցնելու պայմաններում կազմակերպվող՝ գործի կամ բողոքի նոր քննությունը պետք է հաշվի առնի նոր հանգամանք հանդիսացող դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման ինստիտուտի արդյունավետ կիրառումը պահանջում է նաեւ իրավական մշակույթի անհրաժեշտ մակարդակ: Առաջին հերթին խնդիրն առնչվում է մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության հարցում պետության պոզիտիվ պարտականության կատարմանը: Եթե հակասահմանադրական նորմի կիրառմամբ է անձի նկատմամբ դատական ակտ կայացվել, ապա ոչ միայն անխուսափելի պետք է լինի այդ ակտի բեկանումը, այլեւ արդարադատության խնդիրն է նոր հանգամանքներում դատական ճշմարտության բացահայտումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի առաջին մասը միանշանակ սահմանում է, որ «Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում կայացնում է դատական ակտ՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կարգով»: Դրանից բխում է, որ դատարանին լիարժեք հնարավորություն է ընձեռվում վերականգնել անձի խախտված իրավունքը եւ կայացնել հիմնավոր ու իրավունքի գերակայության պահանջներից բխող դատական ակտ:

Նույն հոդվածի 2-րդ մասում շարադրված՝ սույն գործով վեճի առարկա դրույթն առաջին հայացքից վերոնշյալ ընդհանուր մոտեցումից բացառություն է ենթադրում, նկատի ունենալով, որ «Այդ վարույթի արդյունքում կայացված դատական ակտում դատարանը կարող է չփոփոխել վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 426.3 կամ 426.4 հոդվածներով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել գործի ելքի վրա»: Նման ձեւակերպումն իրականում իրավունքների պաշտպանության երաշխիքի դեր է կատարում: Առանց այդ դրույթի հնարավոր է, որ նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը հանգի նույնաբովանդակ եզրակացության: Խնդիրն այն է, թե նախորդ եւ վերաքննված դատական ակտով դատարանն **ինչ իրավական բովանդակություն է դրել «նորմի կիրառում» եզրույթի հիմքում:** Դատական պրակտիկայի ուսումնասիրումը վկայում է, որ հաճախ օրենքների տարբեր հոդվածների թվարկումը բովանդակային անհրաժեշտ հիմնավորում չունի, այդ նորմերի իրավական բովանդակության եւ եզրահանգման միջեւ տրամաբանական ու օրգանական կապը թույլ է: **Այն դեպքում, երբ դատարանները կխուսափեն օրենքի նորմերի պարզապես ձեւական թվարկումից եւ օրենքի նորմի կիրառումն իրական բովանդակություն կունենա, անխուսափելի կլինի գործն ամբողջությամբ վերանայելու արդյունքում նաեւ եզրափակիչ մասի բովանդակային վերանայումը:**

Ներկա պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում **ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու վերաբերյալ:** Պարզապես այսպիսի իրավակարգավորումը նույնպես ենթադրում է իրավական մշակույթի պատշաճ մակարդակ եւ «ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում» եզրույթի հայեցողական սահմանների իրավական հստակեցում, ինչն օրենսդրի եւ դատական համարժեք նախադեպ ստեղծելու խնդիրն է: Նկատի ունենալով, որ այս եզրույթն ամրագրված է նաեւ այլ հոդվածներում /մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի 2-րդ մաս/, ՀՀ Ազգային ժողովը եւ ՀՀ վճռաբեկ դատարանն

իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են իրավական որոշակիության սկզբունքի պահանջներից ելնելով ապահովել տվյալ դրույթի միատեսակ ընկալումն ու կիրառումը: Անհրաժեշտ է նաեւ հաշվի առնել, որ նման փաստարկների բացակայության պայմաններում վերանայված դատական ակտի եզրափակիչ մասի անփոփոխ թողնելը կհակասի իրավունքի գերակայության սկզբունքին եւ իրավական պետության հիմնարար արժեքներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասը՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթի մասով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, հաշվի առնելով, որ վերանայման վարույթի արդյունքում ընդունված նոր դատական ակտի եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

31 մայիսի 2013 թվականի
ՍԴՈ-1099

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **11 հունիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Դ. Դումանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի մայիսի 17-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Հիվանդությունների կանխարգելման եւ վերահսկման ծրագիր» ֆինանսավորման համա-

ձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 01.06.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Հիվանդությունների կանխարգելման եւ վերահսկման ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիրն ստորագրվել է 2013թ. մայիսի 17-ին՝ մոր եւ մանկան առողջության ծառայությունների բարելավման, առանձին ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման ու «առողջության առաջնային պահպանում» մակարդակում կառավարման, ինչպես նաեւ ՀՀ տարածքում գործող առանձին հիվանդանոցների գործունեության արդյունավետության ու որակի բարելավման համար Հայաստանի Հանրապետությանը ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

Համաձայնագիրն ունի երեք Առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրությունը», Առդիր 2. «Ծրագրի կատարումը», Առդիր 3. «Մարման ժամանակացույցը» եւ Հավելված:

2. Միջազգային զարգացման ընկերակցությունը (այսուհետ՝ Ընկերակցություն) համաձայնում է Համաձայնագրով ամրագրված կամ նշված պայմաններով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել քսաներկու միլիոն ութ հարյուր հազար (22.800.000) Փոխառության հատուկ իրավունքներին (ՓՀԻ) համարժեք գումար (Վարկ)՝ Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորմանն օժանդակելու նպատակով: Փակման ամսաթիվն է 2019թ. դեկտեմբերի 15-ը, իսկ վճարման արժույթը՝ դոլարը:

3. Ծրագիրը բաղկացած է հետեւյալ մասերից՝ Մաս 1. «Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում՝ ԱԱՊ հիմնարկներում ՄՄԱ

ծառայությունները եւ ՈՎՀ-ի ծառայությունները բարելավելու նպատակով». Մաս 2. «Առանձին հիվանդանոցների արդյունավետության եւ որակի բարելավումը» եւ Մաս 3. «Ծրագրի կառավարումը»:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին եւ նոյեմբերի 15-ին վճարել տարեկան պարտավորավճար առավելագույնը Ֆինանսավորման չմասհանված մնացորդի մեկ տոկոսի կեսի (1%-ի 1/2) չափով, ինչպես նաեւ սպասարկման տարեկան վճար՝ Վարկի մասհանված մնացորդի մեկ տոկոսի երեք քառորդի (1%-ի 3/4) չափով (հոդված II, բաժիններ 2.03, 2.04 եւ 2.06),
- յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին եւ նոյեմբերի 15-ին վճարել տարեկան տոկոսավճար Վարկի մասհանված մնացորդի մեկ ամբողջ մեկ քառորդ տոկոսի (1.25%) չափով (հոդված II, բաժիններ 2.06 եւ 2.05),
- յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին եւ նոյեմբերի 15-ին, սկսած 2018 թվականի մայիսի 15-ից մինչեւ 2027 թվականի նոյեմբերի 15-ը ներառյալ, մարել Վարկի հիմնական գումարը 1.65%-ի չափով, իսկ սկսած 2028 թվականի մայիսի 15-ից մինչեւ 2037 թվականի նոյեմբերի 15-ը ներառյալ՝ 3.35%-ի չափով (հոդված II, բաժին 2.07 եւ Առդիր 3),
- հայտնել Ծրագրի նպատակի իրագործման հարցում ՀՀ-ի հանձնառությունը եւ այդ առումով ՀՀ առողջապահության նախարարության եւ վերջինիս ԱԾԻԳ-ի միջոցով իրականացնել Ծրագիրը ՊԱԳ-ի աջակցությամբ՝ Ծրագրի 1.ա մասի առումով՝ Ընդհանուր պայմանների IV հոդվածի դրույթների համաձայն (հոդված III, բաժին 3.01 եւ Առդիր 3),
- չսահմանափակելով Համաձայնագրի 3.01 բաժնի դրույթները եւ բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՀ-ն եւ Ընկերակցությունը ձեռք են բերում այլ համաձայնություն, ապահովել Ծրագրի իրականացումը Համաձայնագրի 2-րդ առդիրի դրույթների համաձայն (հոդված III, բաժին 3.02),
- մինչեւ Ծրագրի ավարտը ՀՀ առողջապահության նախարարության կազմում ապահովել Ծրագրի ընդհանուր համակարգման պատասխանատվություն կրող՝ իրականացման գրասենյակի աշխատանքն ու պահպանումը (ԱԾԻԳ) (Առդիր 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 1),

- ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, քան երեսուն (30) օր հետո ստեղծել եւ այնուհետեւ պահել Ծրագրի ղեկավար կոմիտե, որը բաղկացած է ՀՀ առողջապահության նախարարության եւ այլ առանցքային շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներից, եւ որը պատասխանատու է Ծրագրի իրականացումն ուղղորդելու եւ համակարգելու, տեխնիկական առաջադրանքները սահմանելու, տեխնիկական գնահատումներին մասնակցելու եւ ռազմավարական տեխնիկական օժանդակության մեխանիզմների շուրջ խորհրդատուների հետ անմիջականորեն աշխատելու համար, ինչպես նաեւ ստեղծել եւ այնուհետեւ պահել Ընկերակցության համար ընդունելի անդամներից կազմավորված ԱԱՊ համակարգող կոմիտե, որը բաղկացած է ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան վարչությունների ու բաժինների, ՊԱԳ-ի եւ ԱԾԻԳ-ի ներկայացուցիչներից եւ պատասխանատու է «Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման սխեմայի» իրականացումը վերահսկելու եւ ուղղորդելու համար (Առդիր 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 2),
- ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, քան վեց ամիս հետո ընտրել ՀՀ-ից անկախ եւ առողջապահության ու սոցիալական ոլորտներում աշխատելու՝ Ընկերակցության համար ընդունելի փորձ եւ որակավորումներ ունեցող Կրկնակի ստուգման անկախ մարմին, որի հետ կնքել Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի եւ Ընկերակցության համար ընդունելի տեխնիկական առաջադրանքի պահանջներին համապատասխանող պայմանագիր՝ Ծրագրի իրականացման ընթացքում համաձայնեցված արդյունքների տեխնիկական ուսումնասիրություններ կատարելու նպատակով, մասնավորապես ուշադրություն դարձնելով համապատասխանությանը ԿՀՖ ձեռնարկում ներառված ստուգման արձանագրություններին (Առդիր 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 3, մաս «ա»),
- ապահովել, որ Կրկնակի ստուգման անկախ մարմինը Ծրագրի իրականացման ընթացքում կատարի տարեկան առնվազն երկու տեխնիկական ուսումնասիրություն եւ դրան հաջորդիվ պատրաստի հաշվետվություն, որի շրջանակի ու մանրամասների պահանջները ողջամտորեն պահանջում է Ընկերակցությունը (Առդիր 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 3, մաս «բ»),
- առաջին իսկ հնարավորության դեպքում Ընկերակցություն ներկայացնել Կրկնակի ստուգման անկախ մարմնի՝ Համաձայնագ-

րի 2-րդ առդիրի I բաժնի «Ա» կետի 3-րդ ենթակետի «բ» մասում նշված հաշվետվությունները (Առդիր 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 3, մաս «գ»),

- Ծրագիրն իրականացնել Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի «Ա» կետի 4-րդ ենթակետում սահմանված կարգով (Առդիր 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 4),
- բացառությամբ ՀՀ-ի եւ Ընկերակցության միջեւ ձեռք բերված գրավոր այլ համաձայնության՝ չեղյալ չճանաչել, չփոփոխել, չկասեցնել, չհրաժարվել կամ այլ կերպ չձախողել Գործառնական ձեռնարկի կատարումը, ԿՀՖ ձեռնարկը կամ դրանց որեւէ դրույթ (Առդիր 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 5),
- Ծրագրի 1.ա մասի իրականացմանը նպաստելու նպատակով ՊԱԳ-ի միջոցով իրականացնել Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի «Բ» կետի 1-ին ենթակետում սահմանված գործողությունները (Առդիր 2, Բաժին I, կետ «Բ», ենթակետ 1),
- ապահովել Ծրագրի իրականացումը Հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթների համաձայն (Առդիր 2, Բաժին I, կետ «Գ»),
- ՀՀ առողջապահության նախարարության միջոցով Ծրագիրն իրականացնել ԲԿՊ եւ ԲԿԾ համաձայն եւ հաջորդիվ, ԲԿՊ-ների պայմաններին եւ Ընկերակցության պահանջներին համաձայն՝ իրականացնել համապատասխան ԲԿՊ-ները՝ ապահովելով, որ Ծրագրի որեւէ մասով նախատեսված շինարարական աշխատանքները մեկնարկեն ՀՀ-ի կողմից տվյալ տեղանքի համար ԲԿՊ պատրաստվելուց եւ Ընկերակցության կողմից վերջինիս հաստատվելուց հետո, ինչպես նաեւ ապահովել, որպեսզի Ծրագրով իրականացվելիք ոչ մի աշխատանք չառաջացնի վերաբնակեցման անհրաժեշտություն (Առդիր 2, Բաժին I, կետ «Դ»),
- իրականացնել Ծրագրի առաջընթացի մոնիտորինգ եւ գնահատում ու պատրաստել Ծրագրի մասին հաշվետվություններ՝ Ընդհանուր պայմանների 4.08-րդ բաժնի դրույթներին համապատասխան եւ Ընկերակցության համար ընդունելի ցուցանիշների հիման վրա (Առդիր 2, Բաժին II, կետ «Ա»),
- վարել կամ ապահովել ֆինանսական կառավարման համակարգի վարումը Ընդհանուր պայմանների 4.09-րդ բաժնի պահանջների համաձայն, ինչպես նաեւ պատրաստել եւ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտին հաջորդող 45 օրից ոչ ուշ Ընկերակցություն ներկայացնել վերջինիս պահանջները բավարա-

որող ձեւաչափով եւ բովանդակությամբ՝ միջանկյալ, աուդիտ չանցած՝ Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ընդգրկում են տվյալ կիսամյակը, եւ ապահովել ֆինանսական հաշվետվությունների աուդիտը Ընդհանուր պայմանների 4.09.բ բաժնի դրույթների համաձայն (Առդիր 2, Բաժին II, կետ «Բ»),

- Ծրագրի, այդ թվում՝ Կատարողականի վրա հիմնված խրախուսանքի միջոցների համար պահանջվող եւ Ֆինանսավորման միջոցներից ֆինանսավորվող բոլոր ապրանքները, աշխատանքները եւ ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերել Գնումների ուղեցույցների I բաժնում ամրագրված կամ նշված պահանջների եւ Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի դրույթների համաձայն (Առդիր 2, Բաժին III, կետ «Ա», ենթակետ 1),
- Ծրագրի համար պահանջվող եւ Ֆինանսավորման միջոցներից ֆինանսավորվող բոլոր խորհրդատուների ծառայությունները ձեռք բերել Խորհրդատուների ուղեցույցների I եւ IV բաժիններում ամրագրված կամ նշված պահանջների եւ Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի դրույթների համաձայն (Առդիր 2, Բաժին III, կետ «Ա», ենթակետ 2),
- բացառությամբ Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի «Բ» կետի 2-րդ ենթակետում ներկայացվածի՝ ապրանքները, աշխատանքները եւ ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերել Միջազգային մրցակցային գնումների հիման վրա կնքված պայմանագրերով (Առդիր 2, Բաժին III, կետ «Բ», ենթակետ 1),
- բացառությամբ Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի «Գ» կետի 2-րդ ենթակետում ներկայացված դեպքերի՝ խորհրդատուների ծառայությունները ձեռք բերել Որակի եւ գնի վրա հիմնված ընտրության մեթոդի հիմքով կնքված պայմանագրերով (Առդիր 2, Բաժին III, կետ «Գ», ենթակետ 1),
- չկատարել մասհանումներ Համաձայնագրի 2-րդ առդիրի IV բաժնի «Բ» կետի 1-ին ենթակետի «ա» եւ «բ» մասերում սահմանված վճարումների համար (Առդիր 2, Բաժին IV, կետ «Բ», ենթակետ 1),
- եթե Ընկերակցությունը որեւէ պահի որոշում է, որ Ընկերակցության կողմից 2-րդ Կատեգորիայով ՀՀ-ին հատկացված գումարի որեւէ չափաբաժին օգտագործվել է Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի դրույթների խախտմամբ ապրանքների գնման համար, որն իրականացվել է Կատարողականի վրա հիմնված սխեմայով չնախատեսվող կամ Համաձայնագրի եւ ԿՀՖ ձեռ-

նարկների պայմաններին չհամապատասխանող ծախսերի հատուցման համար, ապա Ընկերակցության ծանուցումն ստանալուց հետո համապատասխան գումարն անմիջապես վերադարձնել Ընկերակցությանը (Առդիր 2, Բաժին IV, կետ «Բ», ենթակետ 2, մաս «բ»):

5. Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի «Ա» կետի 6-րդ ենթակետը նախատեսում է, որ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, քան երեսուն (30) օր հետո պետք է կատարված լինի Համաֆինանսավորման համաձայնագիրը՝1.800.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափով, ինչպես նաեւ պետք է կատարված լինեն այդ Համաձայնագրի ներքո ՀՀ-ի՝ մասհանումներ կատարելու իրավունքին նախորդող բոլոր պայմանները:

6. 2010 թվականի հուլիսի 31-ով թվագրված՝ «Միջազգային զարգացման ընկերակցության ընդհանուր պայմաններ վարկերի եւ դրամաշնորհների համար» փաստաթուղթը համարվում է Համաձայնագրի բաղկացուցիչ մաս, եւ Համաձայնագրի Հավելվածի II բաժնով մի շարք բովանդակային փոփոխություններ են կատարվում այդ փաստաթղթի 3.02 բաժնում, Հավելվածի 28-րդ, 37-րդ (բնագրում 36-րդ պարբերություն) եւ 50-րդ (բնագրում 49-րդ պարբերություն) պարբերություններում, Հավելվածում ավելացվում է նոր 32-րդ պարբերություն, որով էլ պայմանավորված, համապատասխանաբար, փոխվում են հաջորդող կետերի հերթական համարները:

7. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագիրը նպաստում է ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերով ամրագրված՝ ընտանիքի, մայրության եւ մանկության եւ բնակչության առողջության պահպանման ծրագրի իրականացմանը, ինչպես նաեւ մատչելի բժշկական սպասարկման պայմանների ապահովման տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում պետության կողմից իրականացվելիք հիմնական խնդիրների լուծմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63

եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2013 թվականի մայիսի 17-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Հիվանդությունների կանխարգելման եւ վերահսկման ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

11 հունիսի 2013 թվականի
ՍԴՈ-1100

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **11 հունիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերա-

կառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Ռոգման համակարգի բարելավման ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի հունիսի 1-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով փոխառության համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Ռոգման համակարգի բարելավման ծրագիր» փոխառության համաձայնագիրն (Փոխառության համաձայնագիր) ստորագրվել է 2013 թվականի մայիսի 29-ին:

2. Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է երեսուն միլիոն (30.000.000) ԱՄՆ դոլարի չափով փոխառություն՝ Փոխառության համաձայնագրում նշված պայմաններով՝ Փոխառության համաձայնագրով նախատեսված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն օժանդակելու նպատակով:

Համաձայն Փոխառության համաձայնագրի՝ սկզբնական միջնորդավճարը հավասար է փոխառության գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25 տոկոս): Մայր գումարը մարվում է՝ սկսած 2023 թվականի նոյեմբերի 15-ից մինչեւ 2038 թվականի մայիսի 15-ը: Փոխառության միջոցների փակման ամսաթիվն է 2017 թվականի հունիսի 30-ը:

Ծրագրի նպատակներն են կրճատել սպառվող էլեկտրաէներգիայի քանակը եւ բարելավել ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետությունն ընտրված ոռոգման համակարգերում, ինչպես նաեւ բարելավել ոլորտին առնչվող կարեւոր տվյալների ու տեղեկատվության առկայությունը եւ հուսալիությունը՝ որոշում կայացնողների, այլ շահագրգիռ կողմերի համար:

Ծրագիրը բաղկացած է հետեւյալ մասերից.

ա) ոռոգման համակարգի բարելավում, այդ թվում՝ մեխանիկական ոռոգման փոխարկումը ինքնահոսի՝ Մեղրիում, Գեղարդալճում, Բաղրամյան-Նորակերտում եւ Քաղցրաշենում չորս ինքնահոս համակարգի կառուցման միջոցով.

բ) կառավարման վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ վերահսկողական ստուգման եւ տվյալների ստացման համակարգի (SCADA) տեղադրում շուրջ 70 դիտակետում՝ մայր ջրանցքների եւ ջրառների ընտրված կետերի վրա.

գ) Ծրագրի կառավարում եւ ՋՕԸ-ներին աջակցություն, այդ թվում՝ աջակցության տրամադրում ԾԻԳ-ին՝ Ծրագրի կառավարման, իրականացման, մշտադիտարկման եւ գնահատման աշխատանքներում:

3. Փոխառության համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) փոխառության սպասարկման գծով վճարումները կատարել կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին եւ նոյեմբերի 15-ին, ԱՄՆ դոլարով.

բ) Ջրային տնտեսության պետական կոմիտեի միջոցով նշանակել ԾԻԳ-ին, որը կստանձնի գնումների պլանավորման, մշտադիտարկման եւ հաշվետվությունների, ֆինանսական կառավարման եւ վճարումների, Ծրագրի հաշիվների վարման եւ Ծրագրի հաշվետվությունների պատրաստման պարտականություններ.

գ) ապահովել իր տարեկան բյուջեում ոռոգման ոլորտում անհրաժեշտ միջոցների առկայությունը՝ ոռոգման համակարգերի պահպանման համար.

դ) Ջրային տնտեսության պետական կոմիտեի միջոցով ապահովել, որ Ծրագրի ոռոգման համակարգի բարելավման մասի իրականացման նպատակով կատարվող բոլոր գործողությունները համապատասխանեն բնապահպանական նորմերին եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի համար ընդունելի ուղեցույցներին.

ե) իրականացնել Ծրագրի առաջընթացի մշտադիտարկումը եւ գնահատումն ու պատրաստել Ծրագրի ընթացքի մասին հաշվետվություններ՝ Փոխառության համաձայնագրով սահմանված կարգով.

զ) վարել կամ ապահովել ֆինանսական կառավարման համակարգի վարումը՝ Փոխառության համաձայնագրով սահմանված կարգով:

Միաժամանակ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ իրավական առումով անընդունելի եւ խնդրահարույց է Փոխառության համաձայնագրով ամրագրված այն պարտավորությունը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը «Ջրտնտպետկոմի միջոցով. .... (ե) պահպանում է Ջրտնտպետկոմը եւ ապահովում է, որ այն նշանակի արհեստավարժ աշխատակազմ բավականաչափ թվով եւ Բանկի համար ընդունելի այնպիսի պարտականություններով եւ գործառույթներով, որոնք հնարավորություն կտան Ջրտնտպետկոմին կառավարել, համակարգել եւ մշտադիտարկել ՇՄԿՊ-ների իրականացումը» (Առդիր 2, Բաժին I., կետ «Գ», ենթակետ 2): Հիշյալ դրույթը ենթակա է ճշգրտման եւ հստակեցման՝ ստանձնվող պարտավորության լիարժեք իրականացումն ապահովելու եւ իրավակիրառական պրակտիկայում խնդիրների առաջացումը բացառելու համար:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2013 թվականի մայիսի 29-ին հավանություն է տվել Փոխառության համաձայնագրին:

5. Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի հստակության, այդ միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Փոխառության համաձայնագիրը եւս պահանջում է լուրջ վերահսկողական համակարգ՝ միջոցների նպատակային օգտագործման եւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու առումով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2013 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Ոռոգման համակարգի բարելավման ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

11 հունիսի 2013 թվականի
ՍԴՈ-1101

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ», «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ», «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ԵՎ «ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ-ՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **28 հունիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչներ Հ. Հարությունյանի, Ս. Գիշյանի, Կ. Պետրոսյանի եւ Մ. Մկոյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դոնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան», «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ», «ՎՏԲ-Հայաստան Բանկ» եւ «Արցախբանկ» ՓԲԸ-ների դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան», «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ», «ՎՏԲ-Հայաստան Բանկ» եւ «Արցախբանկ» ՓԲԸ-ների՝ 29.03.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, հետազոտելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքն ու գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունիսի 3-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Հիշյալ օրենքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Վճռի կատարման շրջադարձը» վերտառությամբ 26-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Եթե ի կատար ածված վճիռը բեկանվել է եւ կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր վճիռ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության, ապա դատարանը կայացնում է դատական ակտ՝ գույքը պարտապանին լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան»:

2. Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2009թ. հոկտեմբերի 12-ին թիվ ԵԿԴ-0094/01/09 քրեական գործով դատավճիռ է կայացրել, որով Ռումինիայի քաղաքացի Կոռնել-Կոնստանտին Ռոմիկայի Ստենգաչուին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով եւ դատապարտել 12 տարի ժամկետով ազատազրկման, ամբողջ գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի 64.142.000 ՀՀ դրա-

մից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավմամբ: Դատարանը սույն գործով դիմողների քաղաքացիական հայցերը բավարարել է՝ որոշելով դատապարտյալից հօգուտ տուժողների բռնագանձել ընդհանուր առմամբ 25.457.000 ՀՀ դրամ՝ որպես հանցագործության հետեւանքով պատճառված վնասի հատուցում: Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ սույն գործով դիմողներն իրենց քաղաքացիական հայցի բավարարման մասով դատավճռի հարկադիր կատարման համար ստացել են կատարողական թերթեր, որոնք ներկայացրել են ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն, որից տեղեկացել են, որ ՀՀ դատախազությունն առաջինն է այդ գործով ներկայացրել կատարողական թերթ՝ դատապարտյալի ամբողջ գույքի, բայց ոչ ավելի, քան 64.142.000 ՀՀ դրամի բռնագրավման մասին: Սույն գործով դիմողները դիմումներ են ներկայացրել Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ վերը նշված քրեական գործով կայացված դատական ակտի անհստակությունը մեկնաբանելու պահանջով՝ կապված դատապարտյալի գույքային պարտավորությունների մասով դատավճռի կատարման եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքը բռնագրավելու վերաբերյալ դրույթների հետ: Դատարանն իր՝ 2010թ. հունիսի 3-ի որոշմամբ մեկնաբանելով կայացված դատավճռի անհստակությունը՝ նշել է, որ իրեղեն ապացույցներ ճանաչված եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալին կամ որեւէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալուց կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, եւ որ այդ գույքը (գումարները, առարկաները) հօգուտ քաղաքացիական հայցվորների բռնագրավվել չեն կարող, տուժողներին եւ քաղաքացիական հայցվորներին պատճառված վնասների փոխհատուցմանն ուղղվել չեն կարող, այլ՝ բավարարված քաղաքացիական հայցերի մասով դատավճիռը կատարելիս բռնագանձումը պետք է տարածվի դատապարտյալին պատկանող այլ դրամական միջոցների եւ գույքի վրա: Դիմողների վերաքննիչ բողոքները մերժվել են, իսկ վճռաբեկ բողոքները՝ վերադարձվել:

Սույն գործով դիմողների դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը քննության առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը (ՍԴՈ-983), որոշել է, որ այն՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, այն մասով, որով բռնագրավումից հետո չի երաշխավորում տուժողի (օրինական տիրապետողի) գույքային շահե-

րի եւ սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 31-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման հիման վրա դիմողները նոր հանգամանքի հիմքով 2011թ. հոկտեմբերի 12-ին վերաքննիչ բողոք են ներկայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան՝ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հոկտեմբերի 12-ի ԵԿԴ-0094/01/09 դատավճիռը (2010թ. հունիսի 3-ի նույն դատարանի՝ դատավճռի անհստակությունը մեկնաբանելու մասին որոշմամբ դրան տրված մեկնաբանությամբ) բեկանելու (հանցավոր ճանապարհով ձեռք բերված եւ իրեղեն ապացույցներ ճանաչված գույքն առաջնահերթ կարգով տուժողներին վերադարձնելու երաշխիքներ չնախատեսելու մասով) եւ, մասնավորապես՝ դատական ակտի շրջադարձ կատարելու պահանջով, որը 2011թ. նոյեմբերի 14-ին մերժվել է: 2012թ. մարտի 30-ին ընդունված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշումը եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննություն իրականացնելու պահանջով: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012թ. հունիսի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարվել են, որի համաձայն իրեղեն ապացույց ճանաչված դրամական միջոցները համամասնորեն բաշխվել են տուժողների միջեւ: Միաժամանակ, չի բավարարվել Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի ակտի շրջադարձի վերաբերյալ (պետական բյուջե բռնագանձված իրեղեն ապացույցների մասով) դիմողների պահանջը: 2012թ. հուլիսի 13-ին այդ հարցով սույն գործով դիմողները դիմում են ներկայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որը թողնվել է առանց քննության՝ դատական ակտի շրջադարձ կատարելն այդ դատարանի իրավասության շրջանակներից դուրս լինելու պատճառաբանությամբ: Իսկ վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ. սեպտեմբերի 24-ի որոշմամբ վերադարձվել է:

3. Վիճարկելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից 2012թ. հուլիսի 27-ին ԵԿԴ-0094/01/09 գործով դրան տրված մեկնաբանությամբ, վկայակոչելով միջազգային իրավական

փաստաթղթեր եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի 2011թ. հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշումը՝ դիմողները գտնում են, որ զրկվել են իրենց իրավունքների արդյունավետ եւ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորություններին համահունչ պաշտպանության միջոցներից, ինչը, ըստ դիմողների, հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին: Գտնում են նաեւ, որ զրկվում են խախտված իրավունքների պաշտպանության նպատակով իրենց գործի դատաքննության հնարավորությունից, ինչն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի հետ: Այն իր հերթին հանգեցնում է նաեւ նրան, որ չի պաշտպանվում դիմողների սեփականության իրավունքը եւ իրենք, որպես քրեական գործով տուժողներ, չեն ստանում իրենց պատճառված վնասի հատուցում, որը հակասում է Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասին եւ 20-րդ հոդվածի 5-րդ մասին: Արդյունքում՝ կողմը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից առաջարկված մեկնաբանությունը հանգեցնում է դրա հակասահմանադրականությանը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմերը, ըստ էության, քաղաքացիական դատավարական նորմեր են, եւ որ դրանք կարգավորում են «...միայն ի օգուտ պարտապանի վճռի կատարման շրջադարձի հարցը՝ որպես պարտապանի իրավունքների պաշտպանության եղանակ»:

Ըստ պատասխանողի՝ «Քրեական դատավարությունում դատական ակտի շրջադարձ նախատեսված է այն դեպքերի համար, երբ արդարացման դատավճիռը կամ քրեական գործը կարճելու կամ հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը, որի հիման վրա կատարվել է վնասի հատուցում, վերացվել է եւ համապատասխան անձի նկատմամբ նույն գործով կայացվել է մեղադրական դատավճիռ: Այս դեպքում գումարները, որոնք վճարվել են որպես վնասի հատուցում, կարող է առգրավել դատարանը որոշման կատարման շրջադարձման կարգով»:

Պատասխանողը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում բացակայում է դատական ակտի կատարման շրջադարձի հնարավորությունը «...մեկ անձից հօգուտ տուժո-

ղի»: Եվ այդպիսի իրավակարգավորումը, ըստ պատասխանող կողմի, բոլորովին էլ պայմանավորված չէ վիճարկվող նորմում «դատավճիռ» եզրույթի բացակայությամբ, այն ուղղված է պարտապանի շահերի պաշտպանությանը: Սակայն, ինչպես գտնում է պատասխանողը, առկա է «...օրենսդրական բաց, որը չի կարգավորում հօգուտ տուժողի դատական ակտի կատարման շրջադարձի հարցը, եւ որի պայմաններում չի ապահովվում անձանց խախտված իրավունքների արդյունավետ վերականգնման հնարավորությունը»:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս անդրադառնալ սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին այնքանով, որքանով քննության առարկա խնդիրն առնչվում է պետության՝ մասնավոր անձանց սեփականությունն այլոց ապօրինի գործողություններից պաշտպանելու պոզիտիվ պարտականությանը, ինչպես նաեւ այդ պարտականության կատարման շրջանակներում գույքային վնաս կրած անձանց իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանության երաշխավորմանը: Այս առումով վիճարկվող նորմն անմիջականորեն սահմանում է ի կատար ածված վճռի կատարման որոշակի կոնկրետ հիմքերով շրջադարձի կարգն ու պայմանները քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում, որը, ընդհանուր առմամբ, երաշխիք է իրավախախտման հետեւանքով տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության, ինչպես նաեւ Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության, արդարադատության մատչելիության իրավունքի իրացման համար:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ վիճարկվող իրավակարգավորման բովանդակությունից հետեւում է, որ **դատավարական իմաստով** դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել, եթե՝

- առկա է դատարանի ի կատար ածված վճիռ, եւ

- դատարանի ի կատար ածված վճիռն իրավասու դատական ատյանի կողմից բեկանվել է եւ կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր դատական ակտ, գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության:

Վերոհիշյալ իրավապայմանների առկայության դեպքում իրավասու

դատարանը կայացնում է դատական ակտ, այսինքն՝ վճիռ կամ որոշում, **գույքը** (շարժական, անշարժ) շահագրգիռ կողմին՝ պարտապանին (այսինքն՝ դատական նախկին ակտին համապատասխան շահագրգիռ մյուս կողմի հանդեպ պարտականություն կրած անձին) լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան: Այսինքն, միանշանակ է, որ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը **կոչված է կարգավորելու քաղաքացիաիրավական հարաբերություններ**՝ կապված դատական սխալի (նոր կամ նոր ի հայտ եկած կամ այլ հանգամանքների) արդյունքում կայացված դատական ակտի կատարմամբ անձին (անձանց) պատճառված նյութական վնասի վերականգնման (հատուցման) հետ:

Վերոհիշյալ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված են դատական այն ակտի կատարման շրջադարձի պայմանները, որը դեռեւս ի կատար չի ածվել:

Նյութական-իրավական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել մասնավոր այնպիսի դեպքերում, երբ առկա են դատարանի կայացրած ակտի բեկանման (լրիվ կամ մասնակի), գործի վարույթը կարճելու, հայցն առանց քննության թողնելու՝ օրենքով նախատեսված հիմքեր, հետեւաբար՝ նաեւ այդ ակտն ի կատար ածելու արդյունքում առաջացած իրավական հետեւանքները վերացնելու (այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը, գործի հանգամանքներով պայմանավորված շահագրգիռ կողմի (տուժողի) նախկին իրավունքներն ու պարտականությունները վերականգնելու) իրավական անհրաժեշտություն: Այսինքն՝ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի նպատակն արդար եւ արդյունավետ արդարադատության իրականացման (արդարադատության նպատակների իրականացման) ապահովումն է, իսկ օբյեկտը՝ **գույքային իրավունքն** է եւ դրանով պայմանավորված կողմերի՝ միմյանց հանդեպ ունեցած իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրացման իրավաչափությունը՝ քաղաքացիաիրավական տվյալ վեճի շրջանակներում: Այսինքն՝ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառմամբ պետությունը, ի դեմս իրավասու դատարանի, նպատակ ունի կատարելու անձանց սեփականությունը պաշտպանելու (այդ թվում՝ այլոց ապօրինի գործողություններից) իր պոզիտիվ պարտականությունը, որը նաեւ արդարադատության իրականացման հիմնական խնդիրներից է:

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դա-

տարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը կարեւոր երաշխիք է ՀՀ Սահմանադրության ինչպես 8-րդ, 18-րդ եւ 19-րդ, այնպես էլ այլ հոդվածներին համապատասխան անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության առումով, եւ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում այն ինքնին սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել, եթե օրենսդրությամբ նախատեսված է դրա իրացման արդյունավետ ընթացակարգ, մասնավորապես՝ անիրավաչափ դատական ակտի ի կատար ածման հետեւանքով անձանց խախտված իրավունքների ու ազատությունների **արագ, լիարժեք ու արդյունավետ** վերականգնման հնարավորություն: Դիմումին կից ներկայացված փաստաթղթերի եւ, մասնավորապես՝ դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն գործով վեճի առարկայի վերաբերյալ դիմողների հարցադրումներն իրենց բովանդակությամբ պարունակում են **հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման** այդպիսի ընթացակարգերի երաշխավորման անհրաժեշտության փաստացի պահանջ, որը, ինչպես հետեւում է գործում առկա դատավարական նախապատմությունից, չնայած անմիջականորեն կապված չի եղել քաղաքացիական գործով ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառման անհրաժեշտության խնդրի հետ, սակայն իրավակարգավորման ընդհանուր նպատակներով միտված է նաեւ այդ խնդրի լուծմանը: Հետեւաբար, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաեւ անդրադառնալ հանցագործությամբ անձանց պատճառված նյութական (գույքային) վնասի վերականգնման սահմանադրաիրավական սկզբունքների երաշխավորման, եւ հատկապես՝ իր նախորդ որոշումներով այդ հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան օրենսդրական կարգավորումների անհրաժեշտության խնդրին:

6. Սույն գործով քննության առարկա հարցադրումների շրջանակներում դատավարական հարաբերություններ կարգավորող օրենսդրական ակտերի համալիր ուսումնասիրությունը վկայում է, որ օրենքի կարգավորման մակարդակում բավարար չափով դեռեւս առկա չեն իրավախախտմամբ անձին պատճառված նյութական վնասի հատուցման արդյունավետ ընթացակարգեր: Մասնավորապես, սահմանադրական դատարանը կարեւորում է օրենսդրական կարգավորման մակարդակում

հայեցակարգային այնպիսի մոտեցման հետեւողական կիրառման անհրաժեշտությունը, որի դեպքում կերաշխավորվի **մեկ գործի շրջանակներում արդարադատական միասնական ընթացակարգով, հնարավորինս պարզեցված կարգով** այդ վնասի արագ, լիարժեք ու արդյունավետ (արդարացի) վերականգնումը (հատուցումը): Այդպիսի իրավապայմանների՝ օրենքով երաշխավորման անհրաժեշտությունը սահմանադրաիրավական պահանջ է, բխում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 14-րդ, 14.1-րդ, 18-րդ, 19-րդ եւ բազմաթիվ այլ հոդվածներից: Այդ երաշխիքների ապահովմամբ արդարադատության իրականացման անհրաժեշտությունը կարեւորվել է նաեւ սահմանադրական դատարանի որոշումներով (ՍԴՈ-929, ՍԴՈ-983):

Արձանագրելով դրանց առաջնահերթ կարեւորությունը, նկատի ունենալով 2011 թվականի հուլիսի 12-ի ՍԴՈ-983 որոշմամբ սույն գործով վեճի առարկա խնդրի հետ կառուցակարգային առումով կապված իրավակարգավորման (ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի) սահմանադրականության հարցի քննության առանձնահատկությունները՝ սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում հատկապես այդ որոշմամբ արտահայտած իր հետեւյալ իրավական դիրքորոշումների վրա.

- « ... սեփականության անձեռնմխելիության սկզբունքը ոչ միայն նշանակում է, որ սեփականատերը՝ որպես սուբյեկտիվ իրավունքների կրող, իրավասու է պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաեւ ենթադրում է պետության պարտականությունը՝ անձի սեփականությունը պաշտպանելու անօրինական ոտնձգություններից: Պետության այս պարտականությունը խնդրո առարկա իրավիճակում պահանջում է **ապահովել արդյունավետ կառուցակարգ հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության եւ կրած վնասի վերականգնման համար»,**
- « ... Եթե 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատժատեսակի դեպքում բռնագրավման օբյեկտը բացառապես դատապարտյալի **օրինական** գույքն է, ապա նույն հոդվածի վիճարկվող 4-րդ մասով նախատեսված բռնագրավման օբյեկտն այլ է, քան դատապարտյալի օրինական գույքը, այսինքն՝ այն գույքը, որը ձեռք է բերվել հանցագործությունը կատարելու արդյունքում եւ, որպես կանոն, **հանդիսանում է տուժողի սեփականությունը»**,

- « ... հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման նպատակը հանցավոր ճանապարհով ստացված գույքը դատապարտյալից հետ վերցնելն է, ինչի դեպքում դատապարտյալի սեփականության իրավունքի սահմանափակում տեղի չի ունենում: Հետեւաբար, հաշվի առնելով, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքը, որպես կանոն, հանդիսանում է տուժողի սեփականությունը, այդ գույքի բռնագրավման պարագայում բռնագրավման հասկացության ընկալումը ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, այն է՝ որպես բռնագրավվող գույքի անհատույց անցում ի սեփականություն պետության՝ առանց տուժողի սեփականության իրավունքի վերականգնման, անթույլատրելի է, քանի որ նման ընկալման դեպքում բռնագրավման միջոցառումն անմիջականորեն ուղղվում է տուժողի սեփականության իրավունքի դեմ՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով նրա սեփականության իրավունքը: **Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ գույքն անհատույց պետության սեփականությանը հանձնելն արգելափակում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի հաշվին տուժողների գույքային շահերի բավարարման եւ խախտված սեփականության իրավունքի վերականգնման հնարավորությունը**»,
- « ... առանցքային նշանակություն ունի հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման վերաբերյալ վիճարկվող նորմերի կիրառման գործընթացում տուժողներին հանցագործությամբ պատճառված վնասի վերականգնման երաշխավորման խնդիրը, որպես նաեւ ՀՀ Սահմանադրության մասնավորապես՝ 3-րդ, 20-րդ (5-րդ մաս), 43-րդ (2-րդ մաս) հոդվածներում ամրագրված պետության սահմանադրաիրավական պարտականություն»,
- « ... դրամը, այլ արժեթղթերը եւ մյուս առարկաները, **որոնք օրինական տիրապետումից դուրս են եկել հանցագործության հետեւանքով, հանձնվում են տիրապետողին, սեփականատիրոջը կամ նրանց իրավահաջորդներին** ... հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեթղթերը եւ մյուս առարկաները դատարանի դատավճռով ուղղվում են դատական ծախսերի հատուցմանը, **հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը**, իսկ եթե հայտնի չէ վնաս կրած անձը, որպես եկամուտ՝ հանձնվում են պետությանը: Միաժամանակ, այս դրույթներին համապատասխան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի

1-ին մասի 17-րդ կետում եւ 61-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում ամրագրված են համապատասխանաբար՝ տուժողի եւ քաղաքացիական հայցվորի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց վերցված գույքը հետ ստանալու իրավունքը»,

- «Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որեւէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից, որպես պայման չի նախատեսում տուժողի սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան: Նման իրավիճակում ոչ միայն առաջացել են ներհամակարգային հակասություններ, այլեւ նույնացվել են դատապարտյալի գույքի բռնագրավման՝ որպես պատժատեսակի, եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման ինստիտուտները: Վիճարկվող իրավակարգավորումն իրավակիրառական պրակտիկայում ստացել է այնպիսի մեկնաբանություն, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման դեպքում այդ գույքն ամբողջությամբ անհատույց անցնում է ի սեփականություն պետության՝ առանց տուժողի /օրինական տիրապետողի/ գույքային շահերի ու սեփականության իրավունքի պաշտպանության»:

Այսպիսով, սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշմամբ կարեւորելով հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի իրավաչափ կիրառման երաշխավորումն իրավակիրառական պրակտիկայում՝ նախանշել էր վերջինիս օրենսդրական կարգավորումն ապահովելու սահմանադրահիրավական սկզբունքներ, որոնք երաշխիք կհանդիսանան նաեւ սույն գործով վեճի առարկա խնդրի համալիր եւ արդյունավետ իրավակարգավորման, ինչպես նաեւ դատական հետագա միասնական պրակտիկա ձեւավորելու համար:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, նկատի ունենալով ձեւավորված իրավակիրառական պրակտիկան, հաշվի պետք է առնվեն նաեւ ՀՀ դատախազության կողմից՝ իր իրավասության շրջանակներում տուժողների խախտված իրավունքների վերականգնումն երաշխավորելու առումով:

Միաժամանակ, ՀՀ Ազգային ժողովի խնդիրն ու սահմանադրական պարտականությունն է՝ ելնելով ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի պահանջներից, հաղթահարել իրավակարգավորման բացը, սահմանել հստակ դրույթներ քննության առարկա հիմնախնդրի շրջանակներում ապահովելու անձանց խախտված իրավունքների լիարժեք վերականգնման հնարավորությունը:

7. Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ հանցագործությամբ անձանց պատճառված վնասի հատուցման օրենսդրական իրավակարգավորման տարբեր լուծումներ են առկա: Սակայն դրանց ընդհանրական վերլուծությունը վկայում է հետեւյալ հիմնական մոտեցումների մասին.

- իրավախախտմամբ պատճառված վնասի հատուցման խնդիրը լուծվում է մեկ վարույթի շրջանակներում՝ որոշ դեպքերում շահագրգիռ անձանց հնարավորություն ընձեռելով կատարել դատավարական տեսակի (քաղաքացիական կամ քրեական) ընտրություն,
- իրավախախտմամբ ձեռք բերված որեւէ գույքի՝ դրա օրինական տիրոջը վերադարձնելու պահանջի բավարարման հստակ ընթացակարգի նախատեսում,
- վնասի հատուցման հայց կարող է ներկայացվել գործը քննող միեւնույն դատարանին, որի դեպքում անձը զրկվում է ընդհանուր իրավասության այլ դատարան միաժամանակ դիմելու հնարավորությունից,
- վնասի հատուցման ուղղությամբ քրեական գործով դատարանի գործողությունները, առանց վերապահումների, կարգավորվում են քաղաքացիադատավարական կարգով,
- քրեական գործից բխող քաղաքացիական հայցը քննության է առնվում քաղաքացիական դատավարության կանոններին համապատասխան,
- վնասի հատուցման վերաբերյալ քաղաքացիական հայցը դատարանում կարող է քննության առարկա լինել անկախ քրեական գործով քննության արդյունքներից,
- քաղաքացիական հայցով հիմնական վնասին զուգահեռ կարող է բարձրացվել նաեւ բարոյական վնասի հատուցման պահանջ,
- որոշ դեպքերում վնասի հատուցման պահանջը դատարանում կարող է ներկայացվել նույնիսկ բանավոր կարգով, որը կարող է քննության առնվել անհապաղ,

- եթե վարույթն իրականացվում է քրեական դատավարության շրջանակներում, ապա վնասի հատուցման պահանջը պարտադիր քննության առարկա է միայն տվյալ դատարանում,
- քաղաքացիական դատավարության կարգով վնասի հատուցման հայցը կարող է քննության առարկա լինել, եթե քրեական վարույթի շրջանակներում ձեռք բերված փաստերը բավարար չեն,
- մինչեւ քրեական գործով դատաքննության ավարտը կարող են ձեռնարկվել անհապաղ միջոցներ վնասի հատուցման վերաբերյալ քաղաքացիական հայցի ապահովման ուղղությամբ,
- վնասի հատուցման հայցը կարող է ներառել գույքը վերադարձնելու պահանջ,
- քրեական գործի շրջանակներում վնասի հատուցման վերաբերյալ դատարանի որոշումն այդ մասով կարող է բողոքարկվել քաղաքացիական դատավարության կանոններին համապատասխան:

8. Հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ դատարանը՝ - հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման ապահովման առումով բողոք բերելու միջոցների սահմանումը դիտարկում է պետության լայն հայեցողության շրջանակներում: Այնուամենայնիվ, նշել է, որ երկարաձգված հատուցումը, որով դիմողի վրա անհամաչափ պարտավորություն է դրվում, արդյունքում խախտում է այն հավասարակշռությունը, որը պետք է առկա լինի անձի սեփականության իրավունքի պաշտպանության եւ ընդհանուր շահի միջեւ (CASE OF KpROLY HEGEDJS v. HUNGARY, (Application no. 11849/07), JUDGMENT, November 2011, FINAL, 03/02/2012),

- եկել է այն եզրահանգման, որ փոխհատուցման վերաբերյալ քաղաքացիական հայցը սկզբունքորեն հանդիսանում է դատական պաշտպանության արդյունավետ միջոց (տե՛ս Lukenda v. Slovenia, no. 23032/02, « 59, ECHR 2005 X; Jazbec v. Slovenia, no. 31489/02, «75, 14 December 2006; Varacha v. Slovenia, no. 9303/02, «32, 9 November 2006, and Lakota v. Slovenia, no. 33488/02, «35, 7 December 2006; a contrario, Ommer v. Germany (no. 1), no. 10597/03, «75, 13 November 2008),
- արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆն իրենից ներկայացնում է «դատարանի իրավունքը», որի հետ կապ-

ված դատարանի մատչելիությունը, այսինքն՝ քաղաքացիական հայցով դատարանի առջեւ վարույթ հարուցելու իրավունքը հանդիսանում է դրա մի տարրը (տե՛ս The Holy Monasteries v. Greece judgment of 9 December 1994, Series A no. 301-A, pp. 36-37, para. 80): Այնուհետեւ հավելել է, որ, անկասկած, 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը կիրառելի է պետական պաշտոնատար անձանց վատ վերաբերմունքի արդյունքում առաջացած վնասի հատուցման հայցերի նկատմամբ (տե՛ս The Tomasi judgment cited at paragraph 61 above, p. 43, paras. 121-22), (CASE OF AKSOY v. TURKEY, (Application no. 21987/93), JUDGMENT, 18 December 1996):

Հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման խնդրում Եվրոպայի խորհրդի շրջանակներում ներդրված իրավական սկզբունքները հանգում են հետեւյալին, որ՝

- տուժող կողմը պետք է տեղեկացվի քրեական դատավարության ընթացքում վնասի հատուցում, իրավաբանական օգնություն եւ խորհրդատվություն ստանալու իր հնարավորությունների մասին,
- քրեական գործերով դատարանը պետք է հնարավորություն ունենա որոշում կայացնել հանցանք կատարած անձի կողմից տուժողին փոխհատուցում տրամադրելու մասին: Այդ նպատակով գոյություն ունեցող սահմանափակումները,
- սահմանները եւ տեխնիկական խոչընդոտները, որոնք կանխում են այդպիսի հնարավորության գործնական իրականացումը, պետք է վերացվեն,
- տուժողի կրած բոլոր վնասների եւ կորուստների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի դատարանին, որպեսզի այն կարողանա պատժի ձեւի եւ չափի վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի առնել.

ա) տուժողի՝ վնասի հատուցում ստանալու անհրաժեշտությունը,

բ) հանցանք կատարած անձի կողմից կատարված վնասի հատուցումը կամ այդ նպատակով գործադրված ջանքերը.

- դատավճռի կատարման փուլում, եթե փոխհատուցումը քրեական սանկցիա է, ապա այն պետք է իրականացվի տուգանքների հավաքման համար սահմանված կարգով եւ առաջնահերթություն ունենա հանցանք կատարած անձի վրա դրված ցանկացած տեսակի այլ ֆինանսական սանկցիայի նկատմամբ: Բոլոր այլ դեպքերում տուժողին պետք է աջակցություն ցուցաբերվի գումարի հնարավորինս հավաքման հարցում (Հանձնարարական No. R

(85) 11 on the position of the victim in the framework of criminal law and procedure (Adopted by the Committee of Ministers on 28 June 1985 at the 387th meeting of the Minister's Deputies):

Միաժամանակ, կարեւորվել է նաեւ, որպեսզի՝

- փոխհատուցում ստանալու հարցում, ապահովագրական ընկերությունների կամ այլ կազմակերպությունների կողմից վճարվող գումարների եւ, հնարավորության դեպքում, պետության կողմից տրվող փոխհատուցում ստանալու հարցում աջակցություն տրամադրվի (Հանձնարարական Rec(2006)8 of the Committee of Ministers to member states on assistance to crime victims (Adopted by the Committee of Ministers on 14 June 2006 at the 967th meeting of the Ministers' Deputies),
- պետությունները ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար տուժողների քաղաքացիական պաշտպանության միջոցների մատչելիությունը եւ ապահովեն ողջամիտ ժամկետում իրավասու դատարանների մատչելիության իրավունքը եւ համապատասխան դեպքերում՝ իրավաբանական օգնությունը,
- պետությունները սահմանեն տուժողների համար քրեական դատավարության շրջանակներում հանցագործություն կատարած անձից վնասի փոխհատուցում հայցելու ընթացակարգեր: Տուժողներին նաեւ պետք է տրամադրվի խորհրդատվություն եւ աջակցություն այդ հայցերը կազմելու եւ սահմանված վճարները գանձելու ուղղությամբ,
- փոխհատուցումը հատկացվի ֆիզիկական եւ բարոյական վնասների վերականգնման եւ բուժման համար (Rec(2006)8 հանձնարարականի հավելված):

9. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա խնդրի օրենսդրական կարգավորման մակարդակում պետք է հաշվի առնվեն նաեւ միջազգային պրակտիկայում հաստատագրված վերոհիշյալ հայեցակարգային մոտեցումները՝ որպես ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի դրույթներից անմիջականորեն բխող պահանջներ:

Այսուհանդերձ, մինչեւ օրենսդրական հստակեցումները, ինչի անհրաժեշտությունն ընդունում է նաեւ սույն գործով պատասխանող կողմը, պետք է երաշխավորվի ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության անունից 14.06.2012թ. ընդունած որոշման կա-

տարումը՝ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հոկտեմբերի 12-ի դատավճիռը քաղաքացիական հայցի մասով բեկանելու եւ իրեղեն ապացույց ճանաչված 25.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ գումարը եւ 4.040.000 ՀՀ դրամ գումարը համամասնորեն տուժողներին բաշխելու վերաբերյալ: Գործի նյութերից ակնհայտ է, որ առկա իրավիճակը վկայում է իրավունքի գերակայության սկզբունքի իրացմանը ձեւական մոտեցում դրսեւորելու մասին:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տեսանկյունից, թերեւս, գործուն պետք է լինի նաեւ ՀՀ դատախազության դերակատարությունը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված կատարողական թերթի հիման վրա են դատարանի կողմից դիմողներին հատկացված փոխհատուցման միջոցները նախապես փոխանցվել ՀՀ պետական բյուջե:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

28 հունիսի 2013 թվականի
ՍԴՈ-1102

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԱՇԳԱԲԱՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՈՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՂ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՈՒՐՋ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **28 հունիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ Ռ. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի

դեկտեմբերի 5-ին Աշգաբատում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ահաբեկչության եւ ծայրահեղականության այլ բռնի դրսեւորումների դեմ պայքարող իրավասու մարմինների նյութատեխնիկական ապահովման շուրջ համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2013 թվականի հունիսի 5-ի դիմումը Սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ահաբեկչության եւ ծայրահեղականության այլ բռնի դրսեւորումների դեմ պայքարող իրավասու մարմինների նյութատեխնիկական ապահովման շուրջ համագործակցության մասին համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2012 թվականի դեկտեմբերի 5-ին՝ Աշգաբատում:

Մոլդովայի Հանրապետությունը Համաձայնագիրն ստորագրել է վերապահումով:

2. Համաձայնագրի նպատակն է Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների (այսուհետ՝ Կողմեր) ահաբեկչության եւ ծայրահեղականության այլ բռնի դրսեւորումների դեմ պայքարող իրավասու մարմինների նյութատեխնիկական ապահովման բնագավառում համաձայնեցված քաղաքականության վարման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ստեղծել հավասար եւ արտոնյալ պայմաններ այդ մարմինների՝ հատուկ տեխնիկայով, հատուկ միջոցներով եւ ապահովման նյութերով բազմակողմանի հագեցվածության համար:

3. Համաձայնագրով Կողմերի իրավասու մարմինների համագործակցությունն իրականացվում է հատուկ տեխնիկայի, հատուկ միջոցների եւ ապահովման նյութերի գնման եւ առաքման, այդ թվում՝ արտոն-

յալ պայմաններով, հարցումների կատարման կամ դրանց վերաբերյալ տեղեկատվության ուղարկման միջոցով:

Գնման եւ առաքման հնարավորության վերաբերյալ տեղեկատվությունը կարող է փոխանցվել մյուս Կողմին՝ նախաձեռնողական կարգով, եթե հիմքեր կան կարծելու, որ Կողմերի իրավասու մարմինների մոտ առկա հատուկ տեխնիկան, ապահովման հատուկ միջոցները եւ նյութերը հետաքրքրություն են ներկայացնում այդ Կողմի համար:

Համաձայնագրով նաեւ նախատեսվում է, որ հարցման եւ տեղեկատվության իսկության կամ դրանց բովանդակության վերաբերյալ կասկածների առկայության դեպքում Կողմերի իրավասու մարմինները կարող են խնդրել դրանց հաստատումը կամ բացատրությունը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մասնավորապես հետեւյալ պարտավորությունները.

- որոշել մյուս Կողմերի հետ համագործակցության համար իրավասու մարմինների ցուցակը եւ փոխանցել այն ավանդապահին՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին ծանուցումն ի պահ հանձնելու ժամանակ,
- որպես հարցվող Կողմ՝ ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը, հարցումը ստանալու օրվանից սկսած առավելագույնը 30-օրյա ժամկետում, ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ մյուս Կողմի հարցման ամբողջական, ժամանակին եւ որակյալ կատարման ապահովման համար,
- որպես հարցվող Կողմ՝ ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հարցնող Կողմի իրավասու մարմնին անհապաղ տեղյակ պահի հարցման կատարումը խոչընդոտելու կամ այն ուշացնելու հանգամանքների վերաբերյալ, իսկ եթե հարցման կատարումը հարցումը ստացող Հայաստանի Հանրապետության մարմնի իրավասության մեջ չի մտնում, ապա ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության տվյալ մարմինն այն փոխանցի ՀՀ համապատասխան իրավասու մարմնին՝ այդ մասին հաղորդելով հարցնող Կողմի իրավասու մարմնին,
- որպես հարցվող Կողմ՝ ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հարցնող Կողմի իրավասու մարմնին անհապաղ գրավոր տեղեկացնի հարցման կատարման

լրիվ կամ մասնակի մերժման մասին՝ մերժման հիմնավոր պատճառների նշումով,

- կատարված հարցման տվյալները չօգտագործել այլ նպատակներով, քան այն, որոնց համար հարցվել եւ տրամադրվել են՝ առանց հարցվող Կողմի իրավասու մարմնի համաձայնության,
- որպես հարցվող Կողմ՝ ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը ստացված տվյալները երրորդ կողմին փոխանցելու համար անպայման ստանա տվյալները տրամադրած Կողմի իրավասու մարմնի գրավոր համաձայնությունը,
- Համաձայնագրի իրագործման հետ կապված ծախսերն իրականացնել այդ նպատակների համար Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից նախատեսված միջոցների հաշվին,
- հատուկ տեխնիկայի, հատուկ միջոցների եւ ապահովման նյութերի՝ արտոնյալ պայմաններով գնման եւ մատակարարման իրականացման ժամանակ մյուս Կողմի հետ որոշել վճարման պայմաններն ու ձեւերը,
- Համաձայնագրի իրականացման շրջանակներում, մատակարարվող հատուկ տեխնիկայի, հատուկ միջոցների եւ ապահովման նյութերի Հայաստանի Հանրապետության տարածքով տեղափոխման ժամանակ, օգտագործել ներմուծման, արտահանման կամ տարանցման պայմանները՝ ներառյալ արտոնյալ սակագները՝ հաստատված հատուկ տեխնիկայի, հատուկ միջոցների եւ ապահովման նյութերի համանման տեղափոխման համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության,
- որպես տարանցման Կողմ՝ ապահովել հատուկ տեխնիկայի, հատուկ միջոցների եւ ապահովման նյութերի տեղափոխման գերակա կարգը Հայաստանի Հանրապետության տարածքում, որոնք մատակարարվում են Համաձայնագրին համապատասխանությամբ՝ մատակարարող Կողմի կամ ստացող Կողմի հարցման հիմքի վրա,
- չվաճառել եւ չփոխանցել Համաձայնագրի շրջանակներում մատակարարված հատուկ տեխնիկան, հատուկ միջոցները եւ ապահովման նյութերը երրորդ Կողմին, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց՝ առանց մատակարարող Կողմի գրավոր համաձայնության,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Համաձայնագրի շրջանակներում համագործակցության արդյունքում ստացված սահմա-

նափակ տարածման տեղեկատվության պահպանության համար,
- պետական գաղտնիքներ պարունակող տվյալների պաշտպանության հարցերը կարգավորել Կողմերի հետ կնքված համաձայնագրերով եւ այլն:

5. Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերից յուրաքանչյուրի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները, որոնց մասնակիցն են հանդիսանում նրանք:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրում հղում է կատարված 1999 թվականի հունիսի 4-ին Մինսկում ստորագրված «Ահաբեկչության դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» պայմանագրին, որը սահմանադրական դատարանի կողմից քննության է առնվել 2000 թվականի հուլիսի 4-ին եւ որոշում կայացվել դրանում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ (ՍԴՈ-240):

Վերոհիշյալ համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2001 թվականի հոկտեմբերի 22-ին՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի Ն-209-2 թվակիր որոշմամբ:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրի 5-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների շրջանակում՝ Հայաստանի Հանրապետությունն ամբողջությամբ կամ մասամբ կարող է մերժել հատուկ տեխնիկայի, հատուկ միջոցների եւ ապահովման նյութերի գնման եւ առաքման, այդ թվում՝ արտոնյալ պայմաններով, հարցումների կատարումը, եթե իրավասու մարմնի կարծիքով հարցման կատարումը կարող է վնաս պատճառել պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, իրավակարգին, կամ հակասում է ազգային օրենսդրությանը եւ/կամ միջազգային պարտավորություններին, ինչպես նաեւ առաջ բերել քաղաքացիների իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի խախտում:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ, իրականացնելով ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված լիազորությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավոր է ձեռնարկել անհ-

բաժեշտ միջոցներ՝ Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների արդյունավետությունը գնահատելու, ինչպես նաեւ այդ պարտավորությունների կատարման հուսալիությունն առավելագույնս ամրապնդելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը միաժամանակ նշում է, որ քննության առարկա Համաձայնագրով ստանձնված պարտավորությունների կատարումն ինքնին պահանջում է Համաձայնագրի կատարման նկատմամբ պետական վերահսկողության հստակ եւ անընդհատ իրականացվող մեխանիզմներ՝ Հայաստանի Հանրապետության անվտանգության երաշխավորման եւ մարդու սահմանադրական իրավունքների հնարավոր խախտումները բացառելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ նկատի ունենալով, որ Համաձայնագրի դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածի պահանջներին, ինչպես նաեւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2012 թվականի դեկտեմբերի 5-ին Աշգաբատում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ ահաբեկչության եւ ծայրահեղականության այլ բռնի դրսեւորումների դեմ պայքարող իրավասու մարմինների նյութատեխնիկական ապահովման շուրջ համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

28 հունիսի 2013 թվականի
ՍԴՈ-1103

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԱՇԳԱԲԱՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱԿԱՀԱՎԱԲԵԿՉԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան **28 հունիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ Ռ. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012

թվականի դեկտեմբերի 5-ին Աշգաբատում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների իրավասու մարմինների ուսումնական հաստատություններում հակաահաբեկչական ստորաբաժանումների մասնագետների պատրաստման գործում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 05.06.2013թ. ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների իրավասու մարմինների ուսումնական հաստատություններում հակաահաբեկչական ստորաբաժանումների մասնագետների պատրաստման գործում համագործակցության մասին համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ ստորագրվել է Աշգաբատում՝ 2012թ. դեկտեմբերի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյանի կողմից:

Համաձայն սույն Համաձայնագրի նախաբանի՝ Կողմերն այն ստորագրելիս ղեկավարվել են «Ահաբեկչության դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 1999թ. հունիսի 4-ին Մինսկում ստորագրված պայմանագրի դրույթներով /ՀՀ սահմանադրական դատարանի 2000թ. հուլիսի 4-ի ՍԴՈ-240 որոշում/:

Հիշատակված պայմանագիրը վերապահումով վավերացված է ՀՀ Ազգային ժողովի 2001թ. հոկտեմբերի 22-ի թիվ Ն-209-2 որոշմամբ:

2. Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից եւ 16 հոդվածներից:

Համաձայնագրում առանձնակի ընդգծված է ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով մասնագետների բարձր պրոֆեսիոնալ մակարդակի ապահովման ուղղությամբ Կողմերի համագործակցության կարեւորության հանգամանքը:

Սույն Համաձայնագրի հիմնական առարկան է ուսումնառության ուղարկված մասնագետների պատրաստման գործում Կողմերի իրավասու մարմինների համագործակցությունը՝ նպատակ ունենալով ահաբեկչության դեմ պայքարի եւ դրա հետեւանքները նվազագույն դարձնելու ոլորտում մասնագետների գիտելիքների խորացումը, հմտությունների եւ ունակությունների կատարելագործումը, ժամանակակից մարտավարական հնարքների տիրապետումը, անհատական հատուկ պատրաստվածության մակարդակի բարձրացումը, ինչպես նաեւ Կողմերի հակաահաբեկչական ստորաբաժանումների գործունեության փորձի փոխանակումը /հոդված 2/:

Համաձայնագրի 1-ին հոդվածում բացահայտված է դրա տեքստում օգտագործված հիմնական հասկացությունների եւ եզրույթների նշանակությունը:

Սահմանված է, որ Կողմերն ուսումնառության ուղարկված մասնագետների պատրաստման գործում համագործակցությունն իրականացնում են իրենց համապատասխան իրավասու մարմինների միջոցով, որոնց ցանկը որոշվում է Կողմերից յուրաքանչյուրի կողմից եւ սահմանված կարգով փոխանցվում է ավանդապահին, իսկ փոփոխության դեպքում՝ նույնպես այդ մասին ծանուցվում է 1 ամսվա ընթացքում:

Ուսումնառության ուղարկված մասնագետների պատրաստումն իրականացվում է ուսումնական պլաններով եւ ծրագրերով՝ Համաձայնագրի, ինչպես նաեւ երկկողմ ու բազմակողմ համաձայնագրերի շրջանակներում, Կողմերի իրավասու մարմինների կողմից կնքված պայմանագրերի հիման վրա: Մասնագետների պատրաստումն իրականացվում է ընդունող Կողմի ուսումնական հաստատություններում: Ուսումնառության ուղարկված մասնագետների պատրաստման մասին պայմանագիրը /գործարքը/ կնքվում է ուղարկող Կողմի իրավասու մարմնի եւ ընդունող Կողմի ուսումնական հաստատության միջեւ՝ մինչեւ պատրաստման տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 1-ը:

Նշված պայմանագրի հիմնական դրույթները եւ վավերապայմաններն ամրագրված են Համաձայնագրի 5-րդ հոդվածի 4-րդ կետում: Ընդունող Կողմի իրավասու մարմինը մինչեւ պատրաստման տարվան նախորդող տարվա հուլիսի 1-ը տեղեկացնում է ուղարկող Կողմի իրավասու մարմնին պատրաստման ուսումնական ծրագրերի եւ պլանների մասին: Մինչեւ պատրաստման տարվան նախորդող տարվա սեպտեմբերի 1-ն ուղարկող Կողմի իրավասու մարմինն ուսումնառության ուղարկվող մասնագետների պատրաստման հայտը տրամադ-

րում է ընդունող Կողմի իրավասու մարմնին /հոդված 6/: Մասնագետների պատրաստումն իրականացվում է վճարովի /այդ թվում՝ նաեւ վճարի արտոնությունների տրամադրմամբ/ կամ անհատույց հիմունքներով:

Խնդրո առարկա Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով եւ բաց է Անկախ պետությունների համագործակցության այլ մասնակից պետությունների միանալու համար:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրող Կողմերի կողմից Համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին երրորդ ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- եթե Հայաստանի Հանրապետությունը հանդես է գալիս որպես ուղարկող Կողմ, ապա հոգում է ուսումնառության ուղարկված մասնագետների կացության ծախսերը, եթե ընդունող Կողմի սահմանած կարգի համաձայն ուղարկող Կողմը կրում է նմանօրինակ ֆինանսական պարտավորություններ,
- վճարում է իր կողմից ուղարկված մասնագետների պատրաստման համար անհրաժեշտ ծախսերը, եթե դրանք չեն իրականացվում անհատույց հիմունքներով /հոդված 5, կետ 2/,
- կրում է լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ՝ սույն Համաձայնագրի իրականացման համար իրավասու մարմիններին տրամադրելով համապատասխան միջոցներ ֆինանսական տարիների համապատասխանությամբ ազգային բյուջեում առկա միջոցների հաշվին եւ սահմաններում, եթե յուրաքանչյուր առանձին դեպքում այլ կարգ չի համաձայնեցվում /հոդված 7/,
- եթե Հայաստանի Հանրապետությունը հանդես է գալիս որպես ուղարկող Կողմ, ապա կրում է ուսումնառության ուղարկված մասնագետի, դասախոսի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին կամ ընդունող Կողմին պատճառված վնասի փոխհատուցման հետ կապված ծախսերը՝ ընդունող Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան,
- եթե Հայաստանի Հանրապետությունը հանդես է գալիս որպես ընդունող Կողմ, ապա փոխհատուցում է ուսումնառության ուղարկված մասնագետների, դասախոսների կյանքին, առողջությանը

կամ գույքին պատճառված վնասը՝ իր քաղաքացիների համար ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով,
- եթե Հայաստանի Հանրապետությունը հանդես է գալիս որպես ուղարկող Կողմ, ապա պահպանում է ուսումնառության ուղարկված մասնագետների, դասախոսների եւ նրանց ընտանիքների անդամների համար ազգային օրենսդրությամբ սահմանված արտոնությունները, երաշխիքները եւ փոխհատուցումները՝ ամբողջ ծավալով,
- փոխադարձության հիմունքներով օգնություն է ցուցաբերում մասնագետների պատրաստումն իրականացնող ուսումնական հաստատությունների զարգացման գործում,
- որոշում է իր իրավասու մարմինների ցանկը եւ այն փոխանցում ավանդապահին,
- սահմանված կարգով կնքում է ուսումնառության ուղարկված մասնագետների պատրաստման մասին պայմանագիր՝ Համաձայնագրի դրույթներին համապատասխան,
- լուծում է Համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման ընթացքում ծագած վիճելի հարցերը՝ շահագրգիռ Կողմերի հետ խորհրդակցությունների ու բանակցությունների անցկացման միջոցով կամ Կողմերի կողմից համաձայնեցված այլ ընթացակարգով,
- եթե Հայաստանի Հանրապետությունը հանդես է գալիս որպես ընդունող Կողմ, ապա մինչեւ պատրաստման տարվան նախորդող տարվա հուլիսի 1-ը պատրաստման ուսումնական ծրագրերի եւ պլանների մասին տեղեկացնում է ուղարկող Կողմի իրավասու մարմնին:

4. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ինչպես արդեն նշվեց, ահաբեկչության դեմ պայքարում միմյանց աջակցություն ցուցաբերելու եւ այդ ոլորտում համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Համաձայնագրի Կողմերը հատկապես կարեւորում են հակաահաբեկչական ստորաբաժանումների համապատասխան մասնագետների անհրաժեշտ մասնագիտական մակարդակի բարձրացումը, հմտությունների եւ ունակությունների կատարելագործումը, ժամանակակից մարտավարական հնարքների տիրապետումը եւ փորձի փոխանակությունը:

Համաձայնագրին համապատասխան՝ հակաահաբեկչական ստորաբաժանումների մասնագետների պատրաստման գործում Կողմերի համագործակցությունը, վերջին հաշվով, միտված է նմանօրինակ հան-

ցագործությունների կանխմանը, բացահայտմանը եւ խափանմանը նպաստելուն, ահաբեկչության դեմ առավել գործուն եւ իրապես արդյունավետ համատեղ պայքար ծավալելուն:

Այսպիսով, Համաձայնագրի դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության, մասնավորապես՝ 9-րդ հոդվածի, դրույթներին, միջազգային իրավունքի սկզբունքներին, ինչպես նաեւ ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2012 թվականի դեկտեմբերի 5-ին Աշգաբատում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների իրավասու մարմինների ուսումնական հաստատություններում հակաահաբեկչական ստորաբաժանումների մասնագետների պատրաստման գործում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

28 հունիսի 2013 թվականի
ՍԴՈ-1104

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻ ՐԱՖՖԻ Կ. ՌԻՉԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան **16 հուլիսի 2013թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Կ. Մեժլումյանի /գրավոր ընթացակարգի շրջանակներում/,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի

Ռաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ռաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի՝ 07.03.2013թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ ընտրական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ ընտրական օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի մայիսի 26-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի հունիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2011 թվականի հունիսի 26-ից:

Օրենսգրքի՝ «Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները» վերտառությամբ 18-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն ընտրություն նշանակվելուց հետո կարող են կազմավորել ընտրական շտաբներ: Ընտրական շտաբները չեն կարող տեղակայվել պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում (բացառությամբ այն դեպքերի, երբ շտաբները զբաղեցնում են այդ մարմիններին չպատկանող տարածք), ինչպես նաեւ այն շենքերում, որտեղ գործում են ընտրական հանձնաժողովները: Ընտրական շտաբների վրա տեղադրված ցուցանակները սույն օրենսգրքի իմաստով քարոզչական տպագիր նյութեր չեն համարվում, եթե դրանք չեն ներառում թեկնածուին, կուսակցությանը (կուսակցության դաշինքին) կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կոչեր, դրանց թիվը չի գերազանցում ընտրության համար կազմավորված ընտրական տեղամասերի թիվը, եւ յուրաքանչյուր պաստառի (ցուցանակի) մակերեսը չի գերազանցում 6 քառակուսի մետրը»:

Օրենսգրքի՝ «Նախընտրական հիմնադրամի միջոցների օգտագործումը» վերտառությամբ 26-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները զանգ-

վածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր եւ այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար օգտագործում են միայն նախընտրական հիմնադրամի միջոցները: Այդ նպատակով նախընտրական հիմնադրամից կատարվող ծախսերի առավելագույն չափը սահմանվում է սույն օրենսգրքով:

Սույն մասում նկարագրված ապրանքներն ու ծառայությունները, եթե մատուցվել են շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչեւ նախընտրական հիմնադրամի ձեւավորումը, ապա իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում»:

Վիճարկվող հոդվածներում փոփոխություններ եւ լրացումներ չեն կատարվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողի ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանը 25.02.2013 թվականին դիմել է ՀՀ ԿԸՀ՝ պահանջելով, որպեսզի «...ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը իր լիազորությունների եւ պարտականությունների սահմաններում ուսումնասիրի վերը նշված փաստերը եւ դիմի դատարան, ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի գրանցումն ուժը կորցրած ճանաչած համարելու համար»: Նշված դիմումով դիմողի ներկայացուցիչը ԿԸՀ-ին խնդրել է նաեւ ՀՀ Սահմանադրության 2-րդ, 4-րդ հոդվածների, 18-րդ եւ 19-րդ հոդվածների, ինչպես նաեւ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող հոդվածների համաձայն դիմել դատարան՝ ՀՀ Նախագահի թեկնածու գործող Նախագահի թեկնածությունն ուժը կորցրած ճանաչելու պահանջով: 25.02.2013 թվականին ԿԸՀ-ն ընդունել է թիվ 60-Ա որոշումը, որով արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ Նախագահի թեկնածուի ընտրական շտաբների վրա նրա անունով, ազգանունով եւ կարգախոսով պաստառները ոչ թե քարոզչական նյութ են, այլ՝ ցուցանակ, հետեւաբար՝ դրանց, ինչպես նաեւ ընտրական շտաբների տարածքների վարձակալության գումարները չպետք է կատարվեն հիմնադրամի միջոցների հաշվին եւ ներառվեն այդ ծախսերի մեջ: Որպես իրավական հիմնավորում՝ ԿԸՀ-ն հղում է կատարել օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին:

Դիմողի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ վիճարկելու համար ԿԸՀ անգործությունը, ինչպես նաեւ ԿԸՀ 25.02.2013թ. թիվ 60-Ա որոշումը: ՀՀ վարչական դատարանը, օրենսգրքի վիճարկվող նորմերին տալով ըստ էության նույն մեկնաբանությունը, ինչ ԿԸՀ-ն, իր՝ 04.03.2013թ. որոշմամբ հայցը մերժել է:

3. Դիմողի կարծիքով՝ օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը եւ 26-րդ հոդվածի 2-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 4-րդ եւ 6-րդ հոդվածներին՝ հետեւյալ հիմնավորմամբ. քարոզչական պաստառները գերազանցել են 1600-ը, քանի որ «ընտրական շտաբ» անվանված քարոզչական տարածքներում քարոզչական պաստառները փակցված են եղել ոչ միայն դրսի կողմից, այլ նաեւ՝ ներսում: Արդյունքում՝ Նախագահի թեկնածու գործող Նախագահը հնարավորություն է ստացել իր նախընտրական քարոզարշավի համար թույլատրված առավելագույն 100.000.000 դրամ գումարը կրկնակի եւ եռակի անգամ գերազանցող գումար ծախսել, ինչը նրա գրանցումն անվավեր ճանաչելու հիմք է, ինչպես նաեւ նրան անհամեմատ շահեկան վիճակի մեջ է դրել Նախագահի մյուս թեկնածուների, այդ թվում իր՝ Ռաֆֆի Հովհաննիսյանի համեմատ: Հղում կատարելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 19.02.2013թ. միջանկյալ զեկույցին՝ դիմողն արձանագրում է, որ նշված զեկույցում նույնպես արձանագրվել է, որ նշված տարածքները քարոզչական տարածքներ են, եւ դրանց վարձավճարները պետք է ներառվեն քարոզչական ծախսերի մեջ, եւ որ ԿԸՀ-ն որոշում էր կայացրել, ըստ որի՝ նախընտրական շտաբների վարձակալությունը հանվել էր ծախսերի ցուցակից, որոնք պետք է ընդգրկվեին թեկնածուների ֆինանսական հայտարարագրերում:

Ըստ դիմողի՝ քանի որ «թեկնածուի անուն ազգանունով եւ կարգախոսով պաստառը, թեկուզեւ ընտրական շտաբ նշումով, իրականում քարոզչական պաստառ է, իսկ դրանց համար վարձակալած տարածքներն էլ քարոզչական տարածքներ են, ուստի դրանց համար ծախսերը պետք է կատարվեն ընտրական հիմնադրամի միջոցների հաշվին, բխում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ 4-րդ հոդվածներից, որոնք inter alia իրավական պետությունում երաշխավորում են ազատ եւ հավասար ընտրություններով իշխանությունների ձեւավորումը, որպիսի սկզբունքը խախտվում է ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով», որի կիրառմամբ կատարված չարաշահումներն անհավասար պայմաններ են ստեղծել ընտրություններին մասնակցության համար՝ գործող Նախագահին դնելով շահեկան վիճակի մեջ:

Դիմողը 02.07.2013թ. սահմանադրական դատարան ներկայացրած միջնորդությամբ միջնորդում է «նշանակել կոմպլեքս, հանձնաժողովային կամ այլ փորձաքննություն.

- պարզելու համար. ընտրական շտաբ գրառմամբ, սակայն նախագահի թեկնածուի /տվյալ դեպքում՝ Սերժ Սարգսյանի/ անվան նշմամբ եւ «Դեպի ապահով Հայաստան» կարգախոսով, քարոզչական պաստառների ոճով եւ գունային նույն համադրությամբ պաստառները ինչպիսի ներգործություն են ունենում անձի /գիտակցականի եւ ենթագիտակցականի/ վրա, մասնավորապես այդ պաստառները քարոզչական պաստառի քարոզչական բնույթի ներգործություն ունեն թե ոչ.
- ինչպես նաեւ պարզելու համար. թե նշված պաստառներն ինչպիսի ազդեցություն ունեն բնակավայրերի կենտրոնական, ամենաբանուկ մասերում՝ մշակույթի տների, համայնքային եւ պետական պատկանելության, տեղական ինքնակառավարման եւ պետական մարմինների զբաղեցրած շենքերի, խանութների եւ քարոզչական պաստառներ փակցնելու համար արգելված այլ տարածքների վրա փակցված լինելով»:

4. Պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողն արձանագրում է, որ թեեւ ընտրական շտաբների ստեղծումը եւ դրանց համար որոշակի միջոցների ծախսումն անուղղակիորեն առնչվում են նախընտրական քարոզչությանը, այնուամենայնիվ, դրանք նախընտրական քարոզչություն չեն, քանի որ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասում օրենսդիրն օգտագործում է «սույն օրենսգրքի իմաստով» բառակապակցությունը, ինչը խտրական չէ եւ հավասարապես տարածվում է բոլոր թեկնածուների վրա, իսկ ՀՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի բովանդակությունը տարատեսակ մեկնաբանություններից զերծ պահելու համար ՀՀ ԿԸՀ-ն 2012թ. փետրվարի 16-ին ընդունել է թիվ 33 որոշումը, որտեղ պարզաբանվել է, որ այն դահլիճների կամ տարածքների վարձակալման համար կատարված ծախսերը, որոնք չեն օգտագործվում քարոզչություն իրականացնելու համար, ՀՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծախսեր չեն հանդիսանում եւ ենթակա չեն հայտարարագրման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը գտնում է, որ դիմողն

առաջ է քաշում իրավակարգավորման՝ իր համար ընդունելի տարբերակ, որը նպաստավոր կլինի իր պահանջների բավարարման տեսանկյունից, եւ որ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց:

Պատասխանողը կարծիք է հայտնում նաեւ, որ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված են բավարար երաշխիքներ, ի թիվս այլնի, ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուների համար ընտրական գործընթացի ընթացքում հավասար հնարավորություններ ապահովելու տեսանկյունից, եւ գտնում է, որ դիմողի բարձրացրած հարցի իրավական կարգավորումն օրենսդրի հայեցողության շրջանակներում է:

5. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դրանում ներկայացված փաստարկների հիմքում հիմնականում ընկած են հետեւյալ երկու հարցադրումները.

- ինչո՞ւ ԿԸՀ-ն չի պարզել ընտրական շտաբների վրա տեղադրված պաստառների քանակը, որից հետո, եթե այն գերազանցել է ընտրական տեղամասերի թիվը, դրանց պատրաստման համար ծախսերը չի ներառել նախընտրական հիմնադրամի հաշվին կատարվող ծախսերի մեջ,
- ինչո՞ւ ընտրական շտաբների վարձակալության գումարները չեն ներառվել նախընտրական հիմնադրամի հաշվին կատարվող ծախսերի մեջ:

Բացի դրանից, դիմող եւ պատասխանող կողմերի փաստարկների համադրված վերլուծությունը վկայում է, որ քննարկման առարկան ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականությանն է առնչվում, այլ իրավակարգավորման շրջանակների ու իրավակիրառման խնդիր է: Դիմողն ինքն է պնդում, որ ոչ թե վիճարկվող նորմն ինքնին, այլ, իր կարծիքով, չարաշահումներն են անհավասար պայմաններ ստեղծել ընտրություններին մասնակցության համար: Դրա մասին է վկայում նաեւ դիմողի միջնորդությունը սահմանադրական դատարանի կողմից մասնավորապես՝ սոցիոլոգների, հոգեբանների, գովազդի մասնագետների ընդգրկմամբ փորձաքննություն նշանակելու մասին:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում է իրավունքի գերակայության եւ իրավական որոշակիության սկզբունքներից ելնելով օրենսգրքի՝ «Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները» վերտառու-

թյամբ 18-րդ հոդվածի 5-րդ մասի իրավական բովանդակության սահմանման եւ դրա հետագա հնարավոր հստակեցման խնդիրը:

Դիմողը սահմանադրական նորմ-սկզբունքների ընդհանուր վկայակոչմամբ փորձ է անում վեճի առարկա նորմերի ընկալման ու կիրառման հարցը տեղափոխել սահմանադրական վեճի հարթություն, սակայն իր իսկ բերած փաստարկները վկայում են, որ իրական վեճը վերաբերում է ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ ԿԸՀ-ի իրավասությունների շրջանակներում դիմողի ակնկալիքներին համարժեք հնարավոր լուծում պահանջող հարցերին: Իսկ օրենսգրքի՝ «Նախընտրական հիմնադրամի միջոցների օգտագործումը» վերտառությամբ 26-րդ հոդվածի 2-րդ մասը դիմողի կողմից բացառապես դիտարկվում է դրա կիրառման իրավաչափության տեսանկյունից:

ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, իր 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշման 8-րդ կետում արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ դիմումը չի բավարարում հիմնավորված լինելու պահանջը նաեւ այն դեպքում, երբ դիմողի հիմնավորումները կապված են ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են պարզապես այդ օրինադրույթի կիրառման իրավաչափության հարցին: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Հաշվի առնելով սույն գործի շրջանակներում կողմերի բերած փաստարկները, դիմողի միջնորդության բնույթը եւ հիմք ընդունելով նաեւ սահմանադրական դատարանի նախորդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա գործի վարույթը ենթակա է կարճման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 60-րդ հոդվածների 1-ին կետերի հիմքերով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կե-

տով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Քաղաքացի Ռաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

16 հուլիսի 2013 թվականի
ՍԴՈ-1105

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հուլիսի 3-ին, ՀՀ ԱԺ նիստերի սրահում մեկնարկեց Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում ՀՀ նախագահության շրջանակներում անցկացվող Երեւանյան համաեվրոպական խորհրդաժողովը:

Կազմակերպիչներ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ, «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ), ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ:

Ընդհանուր խորագիրը՝ ***«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ»:***

Բացման խոսքով հանդես եկան ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ողջույնի խոսքը հրապարակեց ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը:

Խորհրդաժողովի մասնակիցներին ողջույնի խոսքերով դիմեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Դին Շպիլմանը, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) նախագահ Ջիանի Բուքիքիոն:

Առաջին նիստում քննարկման դրվեց ***«Իրավունքի գերակայության սկզբունքը որպես իրավական պետությունում իշխանության ու անհատի սոցիալական վարքագծի արժեբանական հիմք. սահմանադրական***

երաշխիքները պարբեր երկրներում» թեման:

Թեմատիկ զեկույցներով հանդես եկան՝ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **Գագիկ Հարությունյանը՝ «Իրավունքի գերակայության տեղն ու դերը մարդու եւ քաղաքացու սոցիալական վարքագծում»,** Հունգարիայի ՍԴ նախագահ **Պետր Պաչոլայը՝ «Սահմանադրական բարեփոխումը Հունգարիայում. եվրոպական պարտավորությունները եւ ազգային ինքնիշխանությունը»**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր **Ալվինա Գյուլումյանը՝ «Իշխանությունների պոզիտիվ պարտականությունները»**, Խորվաթիայի ՍԴ դատավոր **Մատո Արլովիչը՝ «Սահմանադրական դատարանի գործունեությունը եւ եվրոպական իրավական չափորոշիչները»**, Պորտուգալիայի ՍԴ անդամ **Մարիա Խոսե Ռանժել Մեսքուիտան**:

Զեկույցների շուրջ ծավալվեց քննարկում:

2-րդ նիստի թեման էր՝ **«Իրավունքի գերակայության սկզբունքը որպես օրենսդիր եւ գործադիր իշխանությունների հայեցողության շրջանակների կանխորոշման չափանիշ. դրսեւորումները տարբեր երկրներում»**:

Թեմատիկ զեկույցներ ներկայացրին՝ Բուլղարիայի ՍԴ անդամ **Բորիս Վելչեւը՝ «Բուլղարիայի ընտրական օրենսդրությունը եւ ընտրությունների օրինականության չափորոշիչները՝ սահմանված Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքով»**, Ուկրաինայի ՍԴ դատավոր **Օլեգ Սերգեյչու-**

կը՝ «Իրավունքի գերակայության սկզբունքը որպես օրենսդիր իշխանության հայեցողության սահմանների սահմանման չափորոշիչ. դրսեւորումները Ուկրաինայում», Ղազախստանի սահմանադրական խորհրդի անդամ **Իլյաս Բահտիբաեւը՝ «Միջազգային իրավունքի նորմերի իմպլեմենտացիան Ղազախստանի ազգային օրենսդրությունում»:**

Զեկույցների քննարկումներով ավարտվեց այդօրվա նիստը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆ ԱՎԱՐՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հուլիսի 4-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում ՀՀ նախագահության շրջանակներում անցկացվող Երեւանյան համաեւրոպական խորհրդաժողովը շարունակեց աշխատանքը:

Այս համաժողովը, թեմայի կարեւորությամբ, մասնակիցների լայն ընդգրկումով, կոչված է կարեւորելու մարդու իրավունքների լիարժեք երաշխավորված ու պաշտպանված լինելը, հրատապ մի խնդիր, որն օրգանապես կապված է նաեւ իշխանությունների հայեցողության սահմանների հետ, կոչված է զարգացնելու եւ՛ հասկացութային, եւ՛ իրավակիռարական մոտեցումները: Այս համաժողովը կարեւորվեց նաեւ մասնակիցների ներկայացուցչական լայն ընդգրկումով: Եվ պատահական չէ, որ ՀՀ սահմանադրական դատարանի հրավերը սիրով ընդունեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Դին Շպիլմանը, ով խորհրդաժողովին մասնակցեց ՄԻԵԴ անդամ Ալվինա Գյուլումյանի եւ ՄԻԵԴ Մեծ պալատի քարտուղարի տեղակալ Յոհան Քելլվարթի հետ միասին:

Խորհրդաժողովի կարեւորության մասին շեշտվեց նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի *ճեպազրույցում. «Այսպիսի խորհրդաժողովների խնդիրը նաեւ հասկացութային ապարատի ճիշտ կողմնորոշելն է... Խորհրդաժողովի աշխատանքների արդյունքում ընդունվեց համաեվրոպական նշանակության բանաձեւ, որը եվրոպական կառույցներին կդրդի որոշակի լուծումների: Կոնկրետ մեզ համար կարեւորն այն է, որ Հայաստանը նախաձեռնեց այս թեմատիկայի քննարկումը, Հայաստանը դարձավ եվրոպական լրջագույն խնդիրների լուծման հավասար իրավասությունների մեկը՝ նախաձեռնող սուբյեկտներից մեկը, եւ դա հնարավորություն կընձեռի հենց*

մեր երկրում փորձել սահմանադրորեն եւ օրենսդրորեն որոշակի լուծումներ գտնել մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները նոր մակարդակի բարձրացնելու համար»:

...Համաժողովի ***Հուլիսի 4-ի*** առաջին նիստում քննարկման դրվեց ***«Օրենքների եւ այլ իրավական ակտերի դատական վերահսկողությունն անկախ դատական մարմինների կողմից. տարբեր երկրների փորձը սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգի ստեղծման եւ այս հարցում իշխանության տարբեր մարմինների հետ փոխգործակցության ոլորտում»*** թեման:

Թեմատիկ զեկույցներով հանդես եկան՝ Վենետիկի Հանձնաժողովի փորձագետ **Անդրաս Շայոն**, Բելոռուսի ՍԴ նախագահ **Պյոտր Միկլաշեւիչը**, Լեհաստանի սահմանադրական տribունալի անդամ **Ոյսեխ Հերմելինսկին**, ՌԴ ՍԴ դատավոր **Միխաիլ Կլեանդրովը**, Անդորայի ՍԴ փոխնախագահ **Հոռանս Բուրգորգ-Լարսենը**:

Զեկույցների շուրջ ծավալվեց քննարկում:

Ընդմիջումից հետո խորհրդաժողովն իր աշխատանքը շարունակեց ***«Մարդու իրավունքների պաշտպանի փոխգործակցությունը պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման տարբեր մարմինների հետ իրավունքի գերակայության սկզբունքի արդ-***

յունավեր իրացումը երաշխավորելու գործում» թեմայի քննարկումով:

Զեկույց ներկայացրեց Մոլդովայի խորհրդարանական փաստաբան **Աուրելիա Գրիգորիուն**:

Զեկույցների քննարկումներից հետո ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը մասնակիցների քննարկմանը ներկայացրեց Խորհրդաժողովի եզրափակիչ բանաձեւը: Այն ընդունվեց ամբողջությամբ:

ԴԻՆ ՇՊԻԼՄԱՆԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում ՀՀ նախագահության շրջանակներում Երեւանում անցկացվող համաեվրոպական խորհրդաժողովին մասնակցելու նպատակով Հայաստանում գտնվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ **Դին Շպիլմանը**, ուղեկցությամբ ՄԻԵԴ-ի դատավոր Ալվինա Գյուլումյանի եւ ՄԻԵԴ-ի Մեծ պալատի քարտուղարի տեղակալ Յոհան Քելլվարթի, **հուլիսի 2-ին** հյուրընկալվեց ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանին:

Գ. Հարությունյանի ուղեկցությամբ հյուրերը շրջեցին դատարանի շենքում, ծանոթացան ՍԴ կառուցվածքին ու գործունեությանը: Այնուհետեւ ՍԴ ընդունելությունների սրահում նրանք զրուցեցին մեկնարկող

խորհրդաժողովում քննարկվելիք թեմայի շուրջ՝ առանձնապես կարևորելով իրավունքի գերակայության սկզբունքը որպես իրավական պետությունում իշխանության ու անհատի սոցիալական վարքագծի արժեքանական հիմք ու սահմանադրական երաշխիք:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

2013 թվականի հուլիսի 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պրն Հարությունյան.

Ցանկանում եմ խորին շնորհակալություն հայտնել Ձեզ՝ Ալբանիայի Հանրապետության սահմանադրական դատարանի պատվիրակությանը նման հրաշալի կերպով հյուրանկալելու համար և շնորհակալ եմ նաև գերազանց կազմակերպված «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և իշխանությունների հայեցողության սահմանները Եվրոպայի խորհրդի անդամ երկներում» թեմայով Երևանյան համաեվրոպական խորհրդաժողովի համար, որը կազմակերպվել էր ս.թ.-ի հուլիսի 3-5-ը՝ Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանակներում:

Օգտվելով տրամադրված այս հնարավորությունից, սրտանց շնորհավորում եմ խորհրդաժողովի բարեհաջող ընթացքի կապակցությամբ, որն իր աշխատանքների շուրջ համախմբեց Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների խորհրդարանների, սահմանադրական դատարանների, գերագույն դատարանների ներկայացուցիչների, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների բարձրագույն պետական հաստատությունների ներկայացուցիչների: Նմանատիպ հանդիպումները հատուկ ուշադրության են արժանանում մեր կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց միջոցով հնարավորություն է տրվում ոչ միայն քննարկել քննարկման առարկա հարցերի տեսական կողմը, այլև հնարավոր է կատարել գիտելիքի և ազգային փորձի փոխանակում այն-

պիսի երկրների հետ, որոնք ունեն ավելի կայացած և կոնսոլիդացված ժողովրդավարական համակարգ:

Միաժամանակ, ցանկանում եմ արտահայտել մեր շնորհակալությունն այն բոլոր հանդիպումների համար, որոնք տեղի ունեցան Հայաստան կատարած մեր այցի շրջանակներում. մեզ համար մեծ պատիվ կլինի զարգացնել փոխհարաբերությունները մեր սահմանադրական հաստատությունների միջև՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Հարգելի պարոն Նախագահ, մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնելով Ձեր հրավերի համար ու օգտվելով հնարավորությունից, խնդրում եմ ընդունել հարգանքիս հավաստիքը:

Լավագույն բարեմաղթանքով՝
Բաշկիմ ԴԵԴԶԱ
ԱԼԲԱՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

***

Հարգարժան պարոն Հակոբյան.

Օգտվելով հնարավորությունից՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ՀՀ սահմանադրական դատարանի Նախագահին, Ձեզ և Համաեվրոպական խորհրդաժողովի կազմակերպչական թիմին հիանալի հյուրընկալության համար խորհրդաժողովի ողջ ընթացքում:

Ցանկանում եմ դիմել Ձեզ և ՍԴ միջազգային կապերի բաժնին խնդրանքով՝ ուղարկել ինձ լույս տեսած գրքի 4-5 օրինակ, որոնք, ցավոք, ես չկարողացա տանել անմիջապես ինձ հետ, քանի որ ես ունեի միայն ձեռքի ճամպրուկ, որն արդեն իսկ բավականին ծանր էր: Այդ պատճառով Երևանից մեկնելիս ես ստիպված էի թողնել գրքի իմ օրինակները ՍԴ ներկայացուցիչների մոտ:

Ցանկանում եմ հայտնել Ձեզ, որ գրքերը ստանալուց հետո, դրանք անմիջապես կբաժանվեն Նորվեգիայում տեղակայված գրադարաններին և հանրային հաստատություններին:

Լավագույն բարեմաղթանքով՝

Էյվինդ ՍՄԻԹ

***

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

2013 թվականի հուլիսի 15,
Բոնն, Չեխիայի Հանրապետություն

Մեծարգո պարոն Նախագահ.

Ցանկանում եմ իմ խորը շնորհակալությունը և գնահատանքը հայտնել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին և անձամբ Ձեզ: Ինձ բախտ վիճակվեց Չեխիայի Հանրապետության սահմանադրական դատարանի անունից մասնակցել սույն թվականի հուլիսի 3-5-ը Երևանում կազմակերպված «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և իշխանությունների հայեցողության սահմանները Եվրոպայի խորհրդի անդամ երկներում» թեմայով համաեվրոպական խորհրդաժողովի աշխատանքներին:

Ես մեծ բավականությամբ լսում էի ներկայացված հետաքրքիր զեկույցները և վստահ եմ, որ նմանատիպ միջոցառումը մեծ ներդրում ունեցավ Եվրոպայի խորհրդի անդամ երկրների միջև իրավունքի գերակայության սկզբունքի շուրջ ծավալված քննարկումում: Հավատացած եմ, որ ընդունված հուշագիրը անչափ հստակ ուրվագծեց միասնական մոտեցման հետագա զարգացման առաջնահերթությունը:

Ավելին, անչափ շնորհակալ եմ Ձեր կողմից ցուցաբերած շքեղ հյուրընկալության համար, ինչպես նաև խիստ տպավորված եմ խորհրդաժողովի հրաշալի կազմակերպվածությամբ: Կարծում եմ, որ լավ, հավասարակշռված ծրագիրը թույլ տվեց մեզ կենտրոնանալ առաջնային դոկտրինալ հարցերի վրա, ինչպես նաև միաժամանակ բացահայտել Ձեր գեղեցիկ երկիրը:

Հարգելի պարոն Նախագահ, օգտվելով տրված հնարավորությունից, խնդրում եմ ընդունել հարգանքիս հավաստիքը:

Իմ խորին ցանկությունն է հետագայում ավելի խորացնել մեր գերազանց հարաբերությունները:

Հարգանքով՝
Միլադա ՏՈՄԿՈՎԱ

***

ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

2013 թվականի հուլիսի 8

ՊՐՆ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մեծարգո պարոն Նախագահ.

Վերադառնալով Վիլնիուս, իմ և Լիտվայի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի աշխատակազմի ղեկավար տիկին Լոլիտա Ռաուդիենեի անունից ցանկանում եմ շնորհավորել Ձեզ սույն թվականի հուլիսի 3-5-ը Երևանում կազմակերպված «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և իշխանությունների հայեցողության սահմանները Եվրոպայի խորհրդի անդամ երկներում» թեմայով համաեվրոպական խորհրդաժողովի արդյունավետ և լավ կազմակերպման կապակցությամբ:

Խորհրդաժողովը հյուրընկալել էր տարբեր երկրների փորձագետների և սահմանադրական դատարանների ու համապատասխան իրավասություն ունեցող դատարանների, խորհրդարանների, ընդհանուր իրավասության բարձրագույն դատական ատյանների, արդարադատության նախարարությունների, մարդու իրավունքների պաշտպանների գրասենյակների պատվիրակություններ: Խորհրդաժողովը լավ հնարավորություն ստեղծեց քննարկել իրավունքի գերակայության սկզբունքին վերաբերող խնդիրները և դրա իրացման փորձը տարբեր երկրներում: Խորհրդաժողովի ընթացքում ներկայացված զեկույցները քննարկումների առարկա դարձան, որոնք շարունակվեցին նաև ընդմիջումների ընթացքում և խորհրդաժողովից հետո, ինչն իր հերթին դրդեց առկա խնդիրներին նայել այլ տեսանկյունից՝ միաժամանակ պահպանելով միասնական մոտեցման հասնելու ձգտումը:

Մենք մինչ այժմ անչափ տպավորված ենք Երևան քաղաքի գեղեցկությամբ, հուշարձաններով, պատմական վայրերով և հայ ժողովրդի հյուրասիրությամբ: Խնդրում եմ փոխանցել հատուկ շնորհակալություն տիկին Անահիտին՝ Հայոց ցեղասպանության հուշահամալիր այցելու-

թյուն կազմակերպելու համար, ինչը անջնջելի հետք թողեց մեզ վրա: Օգտվելով հնարավորությունից, ցանկանում եմ նաև շնորհակալություն հայտնել և լավագույն բարեմաղթանքներս հղել Ձեր գործընկերներին, մասնավորապես Գլխավոր Քարտուղար պարոն Առուշան Հակոբյանին և այն բոլոր մարդկանց, ովքեր նպաստեցին մեր այցի կայացմանը:

Հարգանքով՝
Դաֆնիուս ԺԱԼԻՄԱՍ

***

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2013 թվականի հուլիսի 10
Սոֆիա, Բուլղարիա

ՊՐՆ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մեծարգո պարոն Նախագահ.

Բուլղարիայի Հանրապետության սահմանադրական դատարանի իմ գործընկերների և իմ անունից ցանկանում եմ շնորհավորել Ձեզ՝ սույն թվականի հուլիսի 3-5-ը Երևանում կազմակերպված «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և իշխանությունների հայեցողության սահմանները Եվրոպայի խորհրդի անդամ երկներում» թեմայով համաեվրոպական խորհրդաժողովի փայլուն կազմակերպման կապակցությամբ:

Խորհրդաժողովը բոլոր մասնակիցների համար ստեղծեց լավ հնարավորություն՝ իրականացնել փորձի ու կարծիքների փոխանակում, ինչպես նաև ծավալել հետաքրքիր քննարկումներ իրավունքի գերակայության սկզբունքի իրականացմանը առնչվող ժամանակակից հարցերի և զարգացումների շուրջ:

Ես ցանկանում եմ արտահայտել իմ երախտագիտությունը Երևանում մեր պատվիրակության հանդեպ ցույց տրված անչափ ջերմ ընդունելության համար:

Հարգելի պարոն Նախագահ, օգտվելով տրված հնարավորությունից, խնդրում եմ ընդունել հարգանքիս հավաստիքը:

Հարգանքով՝
Դիմիտար ՏՈԿՄՇԵՎ
Բուլղարիայի Հանրապետության
սահմանադրական դատարանի նախագահ

***

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

2013 թվականի հուլիսի 17
Ստրասբուրգ, Ֆրանսիա

Մեծարգո պարոն Նախագահ.

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ վերջերս Հայաստան կատարած իմ այցի ընթացքում մեր հանդիպման համար: Ես անչափ գնահատում եմ այն քննարկումը, որը մենք ունեցանք հանդիպման շրջանակներում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համար նման երկխոսությունը առաջնային նշանակություն ունի, և հուսով եմ, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի միջև նմանատիպ փոխանակումները շարունակական բնույթ կկրեն:

Հարգելի պարոն Նախագահ, օգտվելով հնարավորությունից, խնդրում եմ ընդունել հարգանքիս հավաստիքը:

Լավագույն բարեմաղթանքով՝
Դիև ՇՊԻԼՄԱՆ

Ն.Գ. պրն Գագիկ Հարությունյանին
Հայաստանի Հանրապետության
սահմանադրական դատարանի նախագահին

***

ԻՍՐԱՅԵԼԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

2013 թվականի հուլիսի 10
Երուսաղեմ, Իսրայել

Պրն. Նախագահ Գագիկ Հարությունյանին
Հայաստանի Հանրապետության
սահմանադրական դատարան
Մ. Բաղրամյան պողոտա 10
Երևան 375019
Հայաստանի Հանրապետություն

Հարգելի պարոն Նախագահ.

Վերադառնալով հայրենիք Երևանյան խորհրդաժողովից, ցանկանում եմ իմ երախտապարտությունը հայտնել Ձեզ և Ձեր միջոցով կազմակերպչական աշխատանքների ներգրավված բոլոր հաստատություններին և անհատներին բարձրակարգ ընդունելության համար:

Ինձ համար մեծ հետաքրքրություն էր ներկայացնում խորհրդաժողովը, ինչպես նաև Ձեր իսկ նախաձեռնությամբ հրատարակված «Նոր հազարամյակի սահմանադրականություն» խորագրով գիրքը, որ արդեն իսկ սկսել եմ ընթերցել:

Մաղթում եմ Ձեզ շարունակական հաջողություն ինչպես ներպետական գործառույթներում, այնպես էլ Եվրոպայի խորհրդի իրավական հաստատությունների շրջանակներում:

Հարգանքով՝
Էլիաքիմ ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ
Գերագույն դատարանի դատավոր

***

Ն.Գ. պրն Գագիկ Հարությունյանին
Հայաստանի Հանրապետության
սահմանադրական դատարանի նախագահին

2013 թվականի հուլիսի 11
Լիսաբոն, Պորտուգալիա

Հարգելի պրն Նախագահ.

Վերադառնալով Պորտուգալիա, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ և Հայաստանի սահմանադրական դատարանին՝ Երևանյան համաեվրոպական խորհրդաժողովի ընթացքում կազմակերպված Ձեր ջերմ ընդունելության համար:

Խորհրդաժողովը չափազանց հետաքրքիր էր, և համոզված եմ, որ այն հիմք կհանդիսանա մեր երկու դատարանների հետագա համագործակցության ամրապնդման համար:

Հարգանքով՝
Ժոաքիմ դե ՍՈՈՒՍԱ ՌԻԲԵՅՐՈ
Պորտուգալիայի սահմանադրական դատարանի նախագահ

***

2013 թվականի հուլիսի 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պրն Հարությունյան.

Ցանկանում եմ խորին շնորհակալություն հայտնել Ձեզ՝ Ալբանիայի Հանրապետության սահմանադրական դատարանի պատվիրակությանը նման հրաշալի կերպով հյուրանկալելու համար և շնորհակալ եմ նաև գերազանց կազմակերպված «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և իշխանությունների հայեցողության սահման-

ները Եվրոպայի խորհրդի անդամ երկներում» թեմայով Երևանյան համաեվրոպական խորհրդաժողովի համար, որը կազմակերպվել էր ս.թ.-ի հուլիսի 3-5-ը՝ Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանակներում:

Օգտվելով այս տրամադրված հնարավորությունից, սրտանց շնորհավորում եմ խորհրդաժողովի բարեհաջող ընթացքի կապակցությամբ, որն իր աշխատանքների շուրջ համախմբեց Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների խորհրդարանների, սահմանադրական դատարանների, գերագույն դատարանների ներկայացուցիչների, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների բարձրագույն պետական հաստատությունների ներկայացուցիչների: Նմանատիպ հանդիպումները հատուկ ուշադրության են արժանանում մեր կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց միջոցով հնարավորություն է տրվում ոչ միայն քննարկել քննարկման առարկա հարցերի տեսական կողմը, այլև հնարավոր է կատարել գիտելիքի և ազգային փորձի փոխանակում այնպիսի երկրների հետ, որոնք ունեն ավելի կայացած և կոնսոլիդացված ժողովրդավարական համակարգ:

Միաժամանակ, ցանկանում եմ արտահայտել մեր շնորհակալությունը այն բոլոր հանդիպումների համար, որոնք տեղի ունեցան Հայաստան կատարած մեր այցի շրջանակներում. մեզ համար մեծ պատիվ կլինի զարգացնել փոխհարաբերությունները մեր սահմանադրական հաստատությունների միջև՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

Հարգելի պարոն Նախագահ, մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնելով Ձեր հրավերի համար ու օգտվելով հնարավորությունից, խնդրում եմ ընդունել հարգանքիս հավաստիքը:

Լավագույն բարեմաղթանքով՝
ԲԱՇԿԻՄ ԴԵԴՋԱ
ԱԼԲԱՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

ԿԱՐԵՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային իրավական գրականությունը հարստացավ բացառիկ արժեքավոր մի հրատարակությամբ՝ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի նախաձեռնությամբ Երեւանում անգլերեն լեզվով, երկու հազար տպաքանակով, լույս տեսավ ***«Նոր հազարամյակի սահմանադրականությունը. Իրականության պարադիգմաները եւ մարտահրավերները»*** գիրքը:

Այս գիրքը բացառիկ է նաեւ այն իմաստով, որ ընդգրկում է համաշխարհային ճանաչում ունեցած սահմանադրագետների՝ չափազանց հրատապ հարցադրումներ ու վերլուծություններ ներկայացնող հոդվածներ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում ՀՀ նախագահության շրջանակներում անցկացվող Երեւանյան համաեվրոպական խորհրդաժողովի վերջին օրը՝ ***հուլիսի 5-ին***, Հայաստանի Ազգային պատկերասրահի Միջնադարի սրահում կայացավ գրքի շնորհանդեսը՝ աշխարհի տարբեր երկրներից համաժողովի՝ ութսունից ավել պատվիրակների ներկայությամբ:

Գ. Հարությունյանը կարեւորեց գրքի ստեղծման անհրաժեշտությունը, ներկայացրեց 15 երկրներից ներգրավված 23 համահեղինակներին, ովքեր համաշխարհային իրավական մտքի երախտավորներ են, արժեւորեց նրանց մեծ ներդումը: Վստահեցրեց, որ տպաքանակից շուրջ 1000 օրինակ աշխարհի մոտ 100 երկրների գրադարաններ ու իրավական

կենտրոններ առաքելով՝ կնպաստեն արծարծվող հիմնախնդիրների շուրջ համակարգային լուծումներ գտնելու հրատապ գործին: Սա, թերեւս, սահմանադրագետների համար կարող է դառնալ սեղանի գիրք:

Գրքի հրատակությունը եւ Հայաստանի սահմանադրական դատարանի հետ իրենց համագործակցությունը կարեւորեցին համահեղինակներից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի անդամներ Անդրեաս Շայոն, Էդիգիուս Կուրիսը, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի փոխնախագահ Պիտեր Պացոլայը, պրոֆեսորներ Էդվին Շմիդտը եւ Օտտո Լուխտերհանդը:

Շնորհանդեսին իրենց մասնակցությունը բերեցին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակ Հերմինե Նաղդալյանը, ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանը, ՀՀ սահմանադրական դատարանի անդամները, այլ պաշտոնատար անձինք, իրավաբաններ, սահմանադրագետներ:

ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՀՀ սահմանադրական դատարանում ՍԴ նախագահ Գ. Հարությունյանին հյուրընկալվեցին «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» խորագրով իրավաբանների համահայկական երկրորդ համաժողովի մասնակիցները:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Հուլիսի 11-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Տյան Չանչունին:

Դեսպանը բարձր գնահատեց նորերս Երեւանում իր աշխատանքներն ավարտած համաեվրոպական խորհրդաժողովի աշխատանքներն ու նրա ունեցած մեծ դերը:

Պարոն Հարությունյանը դեսպանին նվիրեց համաժողովի օրերին Երեւանում անգլերեն լեզվով լույս տեսած ***«Նոր հազարամյակի սահմանադրականությունը. Իրականության պարադիգմաները եւ մարտահրավերները»*** գրքի օրինակներից:

Դեսպանը ՀՀ սահմանադրական դատարանի նախագահին պաշտոնապես հանձնեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ազգային Մեծ Ժողովի իրավական հանձնաժողովի պատվիրակության՝ Հայաստան այցի վերաբերյալ պաշտոնական գրությունը: Չինաստանում այդ հանձնաժողովի վրա է դրված երկրում սահմանադրական վերահսկողության հիմնական գործառույթը: Դեռեւս անցյալ տարվա օգոստոսին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը Չինաստանի դեսպանի միջոցով հիշյալ հանձնաժողովին Հայաստան այցելելու հրավեր էր ուղարկել, եւ այս գրությունը հրավերն ընդունելու հավաստումն է: Կողմերը հստակեցրին պատվիրակությանը Երեւանում հյուրընկալելու ժամկետը՝ սեպտեմբերի 19-23-ը:

ՀՀ-ՈՒՄ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ՊԱՐՈՆ ԷԴՍՈՆ ՄԱՐԻՆՅՈ ԴՈՒԱՐՏԵ ՄՈՆՏԵՅՐՈՆ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Օգոստոսի 15-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ պարոն Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Էդսոն Մարինյո Դուարտե Մոնտեյրոյին:

Քննարկվեցին իրավունքի ոլորտում երկու երկրների հարաբերությունների հետագա զարգացմանն առնչվող հարցեր:

Պարոն Գ. Հարությունյանը դեսպանին ծանոթացրեց ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության հետ, նրան նվիրեց հուլիսին Երեւանում կայացած Համաեվրոպական խորհրդաժողովի օրերին Երեւանում անգլերեն լեզվով լույս տեսած ***«Նոր հազարամյակի սահմանադրականությունը. Իրականության պարադիգմաները եւ մարտահրավերները»*** գիրքը:

ԱՐԱ ՍԱՀԱԿՅԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑ ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Օգոստոսի 28-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Ղազախստանի Հանրապետությունում ՀՀ նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Արա Սահակյանին:

Պարոն Հարությունյանը դեսպանին շնորհավորեց նշանակման առիթով, Ղազախստանի Հանրապետության սահմանադրական խորհրդի եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի միջեւ հատկապես վերջին տարիներին ձեւավորված սերտ համագործակցության վերաբերյալ տվեց ընդարձակ տեղեկատվություն: Ինչպես նաեւ ներկայացրեց միջազգային կազմակերպությունների, «Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանս»-ի, սահմանադրական դատարանների միջազգային կոնգրեսի, երկու երկրների դատական սահմանադրական վերահսկողության մարմինների համագործակցության շրջանակներում արված քայլերն ու անելիքները, կարեւորեց դրանց հետագա պահպանումն ու զարգացումը:

Զրույցի ընթացքում քննարկվեցին նաեւ Ղրղզստանի Գերագույն դատարանի սահմանադրական պալատի եւ ՀՀ սահմանադրական դատարանի միջեւ ձեւավորված փոխհարաբերությունների ազդեցության եւ հետագա զարգացման հնարավորությունները: Առաջարկվեց, որ այս ոլորտները նույնպես գտնվեն նորանշանակ դեսպանի ուշադրության կենտրոնում՝ իր հետագա գործունեության ընթացքում:

Պարոն Սահակյանը շնորհակալություն հայտնեց արժեքավոր տեղեկատվության համար՝ իր հերթին նույնպես կարեւորելով այս բնագավառում երկու երկրների հետագա համագործակցությունը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

«Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» միջոցառումների շրջանակներում ***սեպտեմբերի 19-21-ը*** Հայաստանում գտնվող հայկական հիմնախնդիրների իրազեկման կառույցների ներկայացուցիչների համաժողովի մասնակիցները, ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի ուղեկցությամբ, ***սեպտեմբերի 20-ին*** հյուրընկալվեցին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանին:

Հյուրերը ծանոթացան սահմանադրական դատարանի գործունեությանը: ՍԴ նախագահը պատասխանեց հյուրերին հետաքրքրող բազմաթիվ հարցերի:

ՉԺՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ սահմանադրական դատարանի հրավերով ***սեպտեմբերի 21-23-ը*** պաշտոնական այցով Հայաստանում էր Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական Ներկայացուցիչների Համաչինական Ժողովի (ՉՆՀԺ) Մշտական կոմիտեի պատվիրակությունը՝ Սուն Բաոշուի գլխավորությամբ:

Սեպտեմբերի 21-ի առավոտյան պատվիրակությանն ընդունեց ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը: Պատվիրակության հետ էր Հայաստանում ՉԺՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տյան Չանչունը:

Այնուհետեւ Սահմանադրական դատարանի Շահամիր եւ Հակոբ Շահամիրյանների անվան սրահում կայացավ պատվիրակության հանդիպումը ՍԴ անդամների եւ աշխատակազմի հետ: ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը հյուրերին ծանոթացրեց ներկաների հետ, հակիրճ ներկայացրեց սահմանադրական դատարանի գործունեությանը:

Կայացավ գործնական զրույց՝ երկու երկրներում իրավա-

կան համակարգերի առանձնահատկությունների, իրավունքի գերակայության առաջնահերթության, ՀՀ սահմանադրական դատարանի եւ ՀՆՀԺ կապերի ու համագործակցության առավել սերտացման շուրջ:

Սեպտեմբերի 21-ի օրվա ընթացքում հյուրերն այցելեցին Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, իսկ երեկոյան ՀՀ ՍԴ նախագահի ընկերակցությամբ մասնակցեցին Հայաստանի Հանրապետության անկախության օրվան նվիրված ընդունելությանը:

Սեպտեմբերի 22-ին ՀՆՀԺ Մշտական կոմիտեի պատվիրակությունն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Զվարթնոց պատմամշակութային համալիր: Այնուհետեւ ազատ շրջագայությամբ հյուրերը մեկնեցին Սեւանա լիճ:

Սեպտեմբերի 23-ին պատվիրակությունը հանդիպում ունեցավ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հ. Աբրահամյանի հետ, ապա կայացավ պատվիրակության հանդիպումը ՀՀ ԱԺ պետահիրավական հարցերի հանձնաժողովում:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆՑ-75

Լրացավ մեր հայրենակից, իրավագիտության խոշոր մասնագետ, արժանահիշատակ Վլադիկ Ներսիսյանցի ծննդյան 75-ամյակը:

Վլադիկ Ներսիսյանցը իրավունքի տեսության, պատմության եւ փիլիսոփայության, քաղաքական ու իրավական ուսմունքների պատմության բնագավառի հանրահայտ մասնագետ է: Նա ՀՀ սահմանադրական դատարանի հյուրն է եղել 2002թ. ապրիլի 4-ին, երբ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը մոսկվաբնակ ակադեմիկոսին կարճատեւ այցով հրավիրեց Երեւան: Սահմանադրական դատարանում անվանի գիտնականի հետ հանդիպումը հետաքրքիր երկխոսություն էր ՍԴ անդամների ու աշխատակազմի հետ: Այդ օրերին Գ. Հարությունյանի նախաձեռնությամբ եւ Վ. Նազարյանի թարգմանությամբ հայերեն լեզվով լույս էին տեսել ակադեմիկոսի մի քանի գրքեր, եւ հայ ընթերցողն արդեն բավարար չափով ծանոթ էր մեծ գիտնականի աշխատություններին:

Եվ ահա, 11 տարի անց՝ ***հոկտեմբերի 7-ին***, ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի նախաձեռնությամբ ՀՀ սահմանադրական դատարանի Շահամիր եւ Հակոբ Շահամիրյանների անվան սրահում կայացավ ՌԴ գիտությունների ակադեմիա-

յի ակադեմիկոս, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիկ Ներսիսյանցի ծննդյան 75-ամյակին նվիրված սեմինար՝ ***«Ակադեմիկոս Ներսիսյանցի իրավափիլիսոփայական ժառանգությունը եւ արդի իրավունքի զարգացման հիմնախնդիրները»*** թեմայով՝ արդեն ոչ իր մասնակցությամբ (Ներսիսյանցը կյանքից հեռացավ 2005 թվականի հուլիսին):

Զեկուզումներով հանդես եկան պրոֆեսոր Գ. Դանիելյանը եւ ՌԴ սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ, պրոֆեսոր Ս. Մավրինը:

Վլադիկ Ներսիսյանցի անձի եւ նրա գիտական հարուստ ժառանգության վերաբերյալ իրենց վերաբերմունքն արտահայտեցին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը, ՀՀ իրավաբանների միության նախագահ Գ. Ղազինյանը եւ ԵՊՀ պետության եւ իրավունքի տեսության ամբիոնի վարիչ Ա. Վաղարշյանը:

ՀՅՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Ճանաչողական այցով Հարավային Կովկասի երկրներում (Վրաստան, Հայաստան, Ադրբեջան) շրջագայող պատվիրակությունը ***հոկտեմբերի 23-ին*** հանդիպում ունեցավ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի հետ: Պատվիրակությունը, որի կազմում ընդգրկված էին պրոֆեսորներ, ասպիրանտներ, ուսանողներ եւ մեկ դատախազ, գլխավորում էր Գերմանիայի Մարբորգի համալսարանի պրոֆեսոր Գիլբերտ Գորնիկը:

Հյուրերի խնդրանքով պարոն Հարությունյանը ծանոթացրեց ՀՀ ՍԴ կառուցվածքին, գործառույթներին, միջազգային կապերին, պատասխանեց նրանց հարցերին:

Հյուրերը ներկայացրին իրենց շրջագայության շարժառիթներն ու նպատակը, պատմեցին Մարբորգի համալսարանի մասին, որը հիմնադրվել է 1527 թվականին եւ համարվում է Գերմանիայի հնագույն համալսարաններից մեկը:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՆԿԱՐԿՈՒՄ

Հոկտեմբերի 24-ին ՀՀ ժողովրդական արտիստ **ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ** ծննդյան օրը, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն այցելեց Կոմիտասի անվան Պանթեոն, հարգանքի տուրք մատուցեց մեծանուն դերասանի հիշատակին:

ՀՀ ԵՎ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՄԻՆԱՐ

ՀՀ սահմանադրական դատարանի հրավերով երկօրյա ***(նոյեմբերի 6-7-ը)*** պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Ավստրիայի սահմանադրական դատարանի պատվիրակությունը՝ Ավստրիայի ՍԴ նախագահ **Գերհարթ Հոլցինգերի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին**՝ փոխնախագահ **Բրիգիթե Բիրլայնը**, ՍԴ դատավորներ **Յոհանես Շնիցերն** ու **Հելմութ Հյորթենհուբերը**, ՍԴ նախագահի քարտու-

դար **Մարիա Վարգան**, ՍԴ արարողակարգի վարչության աշխատակից **Ռոսվիթա Շնաբլը**:

Նոյեմբերի 6-ին Ավստրիայի սահմանադրական դատարանի պատվիրակությունն այցելեց ՀՀ սահմանադրական դատարան: Պատվիրակության հետ հանդիպմանը մասնակցում էին ՀՀ ՍԴ անդամներն ու աշխատակազմը: ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը շնորհակալություն հայտնեց հրավերն ընդունելու համար, հյուրերին ծանոթացրեց ներկաների հետ:

Փոխադարձաբար Ավստրիայի ՍԴ պատվիրակությանը ներկայացնելով՝ պարոն Հոլցինգերն իր ուրախությունը հայտնեց, որ այս այցելությամբ երկու դատարանների միջև համագործակցությունն ավելի է խորանում: Նա կարեւորեց երկկողմ կապերի ամրապնդումը, շեշտելով, որ Եվրոպական երկրների սահմանադրական դատարանների ընդհանուր համագործակցության մեջ նկատելի ավանդ ունի Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը: Դրա վկայություններից մեկն այն է, որ այս տարվա հուլիսին հենց Հայաստանում գումարվեց միջազգային խորհրդաժողով, որին մասնակցում էին եվրոպական համարյա բոլոր երկրների Սահմանադրական դատարանները:

Այնուհետեւ կայացավ համատեղ սեմինարի առաջին նիստը, որտեղ զեկուցումներով հանդես եկան ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը (***«Անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտին առընչվող արդի հրամայականները»***) եւ Ավստրիայի ՍԴ դատավոր Յոհանես Շնիցերը (***«Արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունը արդարադատության պրակտիկայում»***) թեմաներով:

Առաջին աշխատանքային ծրագիրն ավարտվեց հարց ու պատասխաններով եւ ՀՀ ՍԴ շենքին ու կառուցվածքին ծանոթանալով:

Կեսօրին Ավստրիայի ՍԴ պատվիրակությունն այցելեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ եւ եղեռնի զոհերի հուշահամալիր:

Պարոն Հոլցինգերն իր եւ պատվիրակության անունից գրառում արեց թանգարանի այցելուների մատյանում:

Ավստրիայի ՍԴ պատվիրակությանը, ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանի հետ, նոյեմբերի 6-ին ընդունեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

ՀԱՄԱՏԵՂ ՍԵՄԻՆԱՐՆ ԱՎԱՐՏԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Նոյեմբերի 7-ին իր աշխատանքը շարունակեց ՀՀ եւ Ավստրիայի սահմանադրական դատարանների համատեղ սեմինարը:

«**Սահմանադրական դատարանը եւ նրա կողմից իրականացվող ընտրական վերահսկողությունը**» միեւնույն թեմայով զեկուցումներով հանդես եկան Ավստրիայի ՍԴ դատավոր Հելմութ Հյորթենհուբերը եւ ՀՀ ՍԴ անդամ Ֆելիքս Թոխյանը: Երկու զեկուցողին էլ բազմաթիվ հարցեր տրվեցին, եւ զեկուցումների շուրջ աշխույժ քննարկում ընթացավ:

Սեմինարի աշխատանքներն ամփոփեցին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը եւ Ավստրիայի սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հոլցինգերը: Երկկողմ բարձր գնահատվեց սեմինարի աշխատանքը, որը փորձի փոխանակման ու համագործակցության խորացման նոր առիթ դարձավ: Սեմինարի նյութերը կհրապարակվեն «Конституционное правосудие» հանդեսում:

Կեսօրին Ավստրիայի ՍԴ պատվիրակությունը հանդիպեց Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների հետ: Այնուհետեւ հյուրերն այցելեցին Մաշտոցի անվան Մատենադարան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ն.Գ. պրն Գագիկ Հարությունյանին
Հայաստանի Հանրապետության
սահմանադրական դատարանի նախագահ

2012 թվականի նոյեմբերի 11
Վիեննա, Ավստրիա

Մեծարգո պարոն ՆԱԽԱԳԱՀ.

Վերադառնալով Վիեննա՝ իմ և ավստրիական պատվիրակության անունից ինձ պատիվ է վերապահվել շնորհակալություն հայտնել՝ մեր պատվիրակության՝ Հայաստանի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում Ձեր ու ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերված ջերմ ընդունելության և շքեղ հյուրասիրության համար:

Ցանկանում եմ նշել, որ մենք անչափ տպավորված էինք այցի ամբողջ ծրագրով, մասնավորապես, Ձեր դատարանում չափազանց հետաքրքիր քննարկումներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հետ հանդիպումով, ԵՊՀ կատարած մեր այցով, և իհարկե, անչափ տպավորիչ մշակութային այցերով ու մեր տեղավորման գերազանց կազմակերպմամբ: Խնդրում եմ փոխանցել մեր երախտիքը Ձեր գործընկերներին և Ձեր աշխատակազմի բոլոր այն ներկայացուցիչներին, ովքեր մեր այցը Երևան դարձրեցին անչափ հաճելի:

Սիրով կսպասեմ ՀՀ սահմանադրական դատարանի՝ Ձեր կողմից ղեկավարած պատվիրակությանը «Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանսի» XVI կոնգրեսին, որը տեղի կունենա 2014 թվականի մայիսին Վիեննայում:

Օգտվելով հնարավորությունից՝ ցանկանում եմ վերահաստատել Ձեզ և Ձեր գործընկերներին ուղղված իմ հրավերը՝ այց կատարել Վիեննա՝ Ավստրիայի սահմանադրական դատարան՝ 2014 թվականի կոնգրեսից հետո:

Խորապես Ձերը՝
Գերհարգ Հոլցինգեր
Ավստրիայի սահմանադրական դատարանի նախագահ

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71
E-mail: armlaw@concourt.am.
http://www. concourt. am.

Ստորագրված է տպագրության՝ 20.11.2013 թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70x100 1/16
Տպաքանակը՝ 500

*ՀՀ ՍԴ տեղեկագիրը ՀՀ
բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է
ատենախոսությունների արդյունքների
տպագրման համար ընդունելի
պարբերականների ցանկում*

Вестник Конституционного Суда Республики Армения N 4(70) 2013
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 4(70) 2013
Bulletin de la Cour constitutionnelle de la République d`Armenie. N 4(70) 2013